Չնայած դրան՝ արևմտահայության վերաբերյալ դեսպանի վերոնշյալ մտահոգիչ տեղեկությունից հետո Լեփսիուսը որոշեց անձամբ մեկնել աղետի վայրը՝ տեղում իրադարձություններին իրազեկ դառնալու և դրանով իսկ հավաճվող հայերի մասին գերմանական կառավարությանն ուղղված դիմումներն արդյունավետ դարձնելու համար³: Այդ նպատակով նա դիմեց Արտաքին գործերի նախարարությանը՝ Բ. Դոնից Կ. Պոլիս և Թուրքիայի հայաբնակ գավառներն ուղևորվելու թույլատվություն ձեռք բերելու խնդրանքով⁴: Իր ճանապարհորդությունը Լեփսիուսը հիմնավորում էր հայերի առաջնորդներին թուրքական կառավարության հանդեպ չեզոք դիրք գրավելու անհրաժեշտությունը պարզաբանելու և նրանց կողմնորոշելու պատրվակով⁵: Գեր-

¹ Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. V:

² Hayruni A., Johannes Lepsius' armenische Verbindungen // Hofseld R. (Hg.), Johannes Lepsius- Eine deutsche Ausnahme, Der Völkermord an den Armeniern, Humanismus und Menschenrechte, Göttingen, 2013, S. 219.

³ «Լեփսիուսի նախաձեռնությունը,– մի առիթով ասել է Մարգրետ Անդերսոնը,– անելալու իրավիճակում չափազանց խիզախ քայլ էր»: Տե՛ս Hofseld R., Johannes Lepsius, Armenien und die christliche Ethik // Schaede S., Hofseld R. (Hg.), Der Genozid an den Armeniern. Interdisziplinäre Perspektiven auf die historische und aktuelle Rolle des Protestantismus, Jena, 2016, S. 26:

⁴ Տե՛ս Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. V-VI:

⁵ Տե՛ս Der Unterstaatssekretär des Auswärtigen Amtes (Zimmermann) an den Botschafter in Konstantinopel (Wangenheim) // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-06-DE-001,PA-AA,R14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-06-DE-001,PA-AA,R14086):

մանիայի պետքարտուղարի տեղակալ Արթուր Յիմերմանը, որը դեռ կրկնում էր 1914 թ. նոյեմբերին Գերմանա-հայկական ընկերությանը (այսուհետև՝ ԳՀԸ) տված խոստումը՝ պատերազմի ավարտից հետո ընդմիջված հայկական բարեփոխումները իրագործելու վերաբերյալ¹, ընդառաջ գնաց Լեփսիուսի ցանկությանը և հունիսի 6-ին Վանգենհայմին ուղարկեց մի հեռագիր, որտեղ դեսպանին հրահանգում էր Բ. Դոնից թույլատվություն ստանալ նրա ուղևորության համար²:

Լեփսիուսի նախաձեռնության առնչությամբ Բ. Դոն և դեսպանի դիրքորոշումը, սակայն, չափազանց հստակ և միանշանակ էր: «Նկատի առնելով Բ. Դոնի՝ արդեն ի կատար ածվող միջոցառումը,՝ տեղեկացնում էր դեսպանին իր՝ հունիսի 9-ի պատասխան հեռագրում,՝ որը ստուգապես հաստատված զանազան փաստերի միջոցով հիմնավորված է թվում, դր. Լեփսիուսի ժամանումը չափազանց ուշացած կլինի, և նրա ջանքերն արդյունք չեն ունենա: Դրանից զատ՝ ես այդ այցն այն նկատառումով եմ համարում ոչ տեղին, որովհետև դր. Լիպարիտի գործունեությունը ևս դեռ չի պարզաբանվել, և որ այն (Լեփսիուսի ուղևորությունը – Ա. Հ.) կարող է Բ. Դոնը վրդովել, որը, ինչպես և ցույց է տալիս նախօրոք արված հավաստի ստուգումը, միանգամայն դեմ է այդ այցելությանը: Բացի այդ՝ ես իմ ուժերի ներածին չափով անում եմ ամեն բան, որպեսզի մեղմեմ Բ. Դոնի չափազանց խիստ ձեռնարկները»^{3*}:

Կ. Պոլսից ստացված բացասական պատասխանը չհուսահատեցրեց դր. Լեփսիուսին: Նա համառորեն շարունակեց գործնական քայլեր ձեռնարկել իր ուղևորությունը հնարավոր դարձնելու համար: Այսպես՝ նրա նախաձեռնությամբ հունիսի 11-ին միաժամանակ երկու գրություն ուղարկվեց դեսպան Վանգենհայմին: Առաջինը՝ իր անունից, որտեղ նա Կ. Պոլիս ուղևորվելու իր որոշումը հիմնավորում էր Գերմանիայի և Թուրքիայի շահերին օգտակար լինելու ցանկությամբ: Նա վստահեցնում էր, որ եթե իրենց հաջողվեր նպաստել հայերի առաջնորդների և Բ. Դոնի միջև բնականոն փոխհարաբերությունների պահպանմանն ու ամրապնդմանը, ապա թուրքական կառավարության կողմից հայերի դեմ իրականացվող խիստ միջոցառումները, որոնք ինքը դեսպանին չհակադրվելու դիտավորությամբ պայմանավոր-

¹ Տե՛ս **Hayruni A. und Hoffeld R.**, նշվ. աշխ., էջ 228:

² Տե՛ս Der Unterstaatssekretär des Auswärtigen Amts (Zimmermann) an den Botschafter in Konstantinopel (Wangenheim) // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-06-DE-001,PA-AA,R14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-06-DE-001,PA-AA,R14086):

³ Տե՛ս Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an das Auswärtige Amt // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-09-DE-001,PA-AA,R14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-09-DE-001,PA-AA,R14086):

* Բ. Դոնի խիստ միջոցառումները կանխելու վերաբերյալ դեսպանի վերջին վստահեցումը բացահայտ սուտ էր, քանի որ նա ոչ այդ ժամանակ, ոչ էլ առավել ևս հետագայում գործնական որևէ քայլ չձեռնարկեց ընդդեմ թուրքական կառավարության հայաջինջ քաղաքակալության: Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 2, S. 43:

ված էր համարում «լրտեսության առաջն առնելու և տեղական անկարգությունները կանխելու անհրաժեշտությամբ», հայերի կողմից կղիտվեին ոչ կանոնավոր, իսկ իր այցը կնպաստեր Թուրքիայում Գերմանիայի հետապնդած շահերին: Ընդ որում, այդ գրության մեջ Լեփսիուսն ընդգծում էր դեսպանի կողմից հայերի օգտին ակտիվ միջամտություն կատարելու քաղաքական անհրաժեշտությունը՝ պայմանավորելով դա Թուրքիայի շահերով: Նրա կարծիքով՝ այս ճանապարհով միայն Թուրքիան կարող էր շահել ինչպես իր քրիստոնյա հպատակների վստահությունը, այնպես էլ կովկասահայերի համակրանքը¹:

Դեսպանին ուղղված մյուս գրությունը Լեփսիուսի երկու կազմակերպությունների՝ Գերմանիայի առաքելությունը Արևելքում (այսուհետև՝ ԳԱԱ) և ԳՀԸ-ի անունից էր, որտեղ նրան կոչ էր արվում «աշխատանքներ տանել Թուրքիայում քառասյին վիճակի մեջ հայտնված քրիստոնյաների դրության բարելավման ուղղությամբ»: Իսկ Հայոց պատրիարքության և հայերի առաջնորդների հետ իրենց հարաբերություններն անխաթար պահելու և նրանց կողմնորոշելու համար առաջարկվում էր հնարավոր դարձնել դր. Լեփսիուսի ուղևորությունը Կ. Պոլիս²:

Ցավոք, այս անգամ ևս Լեփսիուսի ջանքերը, ինչպես նշում է Էվալդ Շթիրը, «արդյունք չտվեցին, քանի որ թուրքական կառավարությունը հրաժարվեց նրան հասկացնել ուղևորության թույլատվությունը»³: Այդ պատճառով Ցիմերմանը, որը նախապես իր հավանությունն էր տվել Կ. Պոլսի դեսպանին գրություն ուղարկելու Լեփսիուսի որոշմանը⁴, վերջինիս դիմումի համաձայն՝ հունիսի 13-ին իր կողմից երկրորդ հեռագիրը ուղարկեց Վանգենհայմին, որտեղ նշվում էր. «Էր. Լեփսիուսը Բ. Դռան համար խնդիրներ ստեղծելու մտադրություն չունի: Նա կարծում է, որ իր ներկայությունը Կ. Պոլսում եթե անգամ գործնականում հաջողություն չունենա, բայց կմեղմի Գերմանիայում հայ ժողովրդի բարեկամների անհանգստությունը, իսկ հայերի համար կլինի ապացույց այն բանի, որ Գերմանիան մտադիր չէ իրենց շահը ստորադասել քաղաքական իրավիճակին: Ցավալի կլինի, եթե Թուրքիայի հետ մեր դաշինքի նկատմամբ ժողովրդի մեջ առկա համակրական վերաբերմունքը Հայկական հարցի պատճառով վերածվի հակակրանքի: Հետևաբար ինչպես սեփական, այնպես էլ Թուրքիայի շահերից ելնելով՝ մենք պետք է ջանանք չկորցնել հայերի վստահությունը:

¹ St' u Johannes Lepsius an den Legationsrat im Auswärtigen Amt Rosenberg // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AIIIDocs/1915-06-17-DE-001, PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AIIIDocs/1915-06-17-DE-001, PA-AA, R 14086):

² St' u նույն տեղում:

³ Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939) // Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, Nr. 5-6, Dezember 1939, S. 4 (68)-5 (69).

⁴ St' u Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. VI:

Ուրեմն ողջունելի կլինի, եթե Ձերդ գերագանցությանը հաջողվի հաղթահարել Բ. Դոան հակառակությունը դր. Լեփսիուսի ուղևորության վերաբերյալ: Ձենթլմենի նրա կերպարն արդեն իսկ երաշխիք է այն բանի, որ ինքը Կ. Պոլսում ոչինչ չի ձեռնարկի առանց Ձերդ գերագանցության և թուրք պաշտոնյաների համաձայնության: Ինչ վերաբերում է Սոֆիայում դր. Լիպարիտի գործունեության հանդեպ անվստահությանը, ապա այն, համաձայն դր. Լեփսիուսի այստեղ տված պարզաբանումների, թվում է անհիմն»¹:

Այդուհանդերձ, քանի որ Լեփսիուսը մտադիր չէր ձեռնունայն սպասել, մինչև մեկնման թույլատվությունը կհատկացվեր², նա հունիսի 18-ին և 22-ին Գերմանիայի ԱԳՆ-ին ներկայացրեց Թուրքիայում հայերի վիճակի վերաբերյալ երկու տեղեկագիր, որոնք շարադրել էր գլխավորապես Շ. Միսակյանի՝ Լ. Նազարյանցին հաղորդած տեղեկությունների հիման վրա³:

Հունիսի 18-ի տեղեկագրում Լեփսիուսը հաղորդում էր Կ. Պոլսում քսան հնչակյանների կախաղան բարձրացնելու մասին և համոզմունք հայտնում, որ նույնը սպասվում էր ձերբակալված և Անկարա ուղարկված դաշնակցական գործիչներին, որոնց թվում էին ՀՅԴ-ի պարագլուխներից Ակնունին, Խաժակը, Ջարդարյանը և Մինասյանը: Նա տեղեկացնում էր նաև Երզնկայի, Մարաշի, Հաճնի, Այնթափի և Կիլիկիայի հայերի բռնի տեղահանության ու Միջագետք քշվելու մասին⁴:

¹ Der Unterstaatssekretär des Auswärtigen Amts (Zimmermann) an den Botschafter in Konstantinopel (Wangenheim) // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-13-DE-001, PA-AA/R14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-13-DE-001, PA-AA/R14086).

² Տե՛ս **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 251:

³ Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius' armenische Verbindungen, S. 219:

⁴ Տե՛ս **Lepsius J.**, Deutschland und Armenien, S. 85:

* Շ. Միսակյանից ստացած տեղեկությունների հիման վրա Լ. Նազարյանցը հունիսի 14-ին և 17-ին երկու հեռագիր էր ուղարկել Լեփսիուսին՝ խնդրելով հնարավորինս անել ամեն բան՝ աղետը կանխելու համար: Այդ հեռագրերը Լեփսիուսը հանձնել էր արտաքին գործերի նախարար Յագովին, և դրանց հիման վրա Ցիմերմանը հունիսի 18-ին Վանգենհայմին էր ուղարկել հետևյալ գրությունը. «Հայ-գերմանական ընկերությունը լուր է ստացել, որ քսան հնչակյան կախաղան են բարձրացվել, և որ նույնը սպառնում է Անգորա (Անկարա – Մ. Հ.) ուղարկված դաշնակցականներին, ի թիվս որոնց հայերի ականավոր ղեկավարներից Ակնունուն, Ջարդարյանին և ուրիշների: Եթե այդ լուրը ստույգ է, ուրեմն երկյուղալի է, որ մինչև օրս օրինապահ հայերը կմղվեն Եռյակ համաձայնության բանակը և հայերի դժգոհությունը կարտահայտվի ըմբոստություններով և մահափորձերով ընդդեմ իշխանությունների: Հանձնարարում եմ զգուշացնել Բ. Դոանը՝ հրաժարվելու չնտածված քայլերից, ու եթե դաշնակցականների համար մահավճիռ ընդունվի, ջանալ ջնջել տալ այն»: Այդ հեռագրի պատասխանը Վանգենհայմը ուղարկեց հուլիսի 16-ին: Նա հայտնում էր, որ չնայած իրենց հորդորներին՝ Բ. Դոառը շարունակում էր տեղահանել հայերին և բնակեցնել անմարդաբնակ վայրերում՝ դատապարտելով նրանց ոչնչացման: Իրենք անգոր էին դրա առաջն առնելու: Հետևաբար այդ հանցագործությունների տնտեսական և քաղաքական հետևանքների պատասխանատվությունը դեսպանի կարծիքով իրենք պետք է թողնեին Բ. Դոան վրա: Տե՛ս **Լեռնեան Ռ.**, Մեծ աղետի օրերուն // «Հայրենիք», 1928, թիվ 5, էջ 119:

Հունիսի 22-ի տեղեկագրում, որն ավելի ընդարձակ էր, ներկայացնելով հայ ժողովրդի՝ արդեն տեղահանված հատվածների ողբերգական դրությունը և միանշանակորեն հերքելով այդ միջոցառման ռազմավարական անհրաժեշտությունը «վկայակոչող» թուրքական պաշտոնական տեսակետները, Լեփսիուսը հայտնում էր, որ թուրքական կառավարությունը, պատերազմական իրադրությունն օգտագործելով, փաստացիորեն ձեռնամուխ էր եղել հայ ժողովրդի զանգվածային բնաջնջմանը, և որ տեղահանվածների թիվն արդեն հասել էր շուրջ 200.000-ի: «Ինչպես արդեն տեղեկացրել եմ իմ հունիսի 18-ի գրության մեջ, խոսքը վերաբերում է ոչ թե առանձին ընտանիքների վերաբնակեցմանը, այլ Անատոլիայի շրջանների և Կիլիկիայի հայ բնակչության մեծ խմբերի զանգվածային աքսորմանը տարբեր տարածքներ, հատկապես Միջագետք: Այդ միջոցառումները չեն կարող ռազմավարական պատճառներով արդարացվել..., քանի որ խնդիրը մեծ մասամբ վերաբերում է այն շրջաններին, որոնք գտնվում են Անատոլիայի խորքում՝ ռազմական գործողությունների գոտուց հեռու:... Ակնհայտորեն փորձ է կատարվում, պատերազմի ընձեռած իրավունքների ներքո քողարկվելով և օգտագործելով մուսուլմանների՝ սրբազան պատերազմի միջոցով բորբոքած կրքերը, մեծապես կրճատել կայսրության քրիստոնյա բնակչությանը և դեպի աննպաստ ու կլիմայապես ոչ անվտանգ սահմանամերձ տարածքները բռնի տեղահանման միջոցով կորստյան դատապարտել նրան»¹:

Երիտթուրքերի հետին նպատակների բացահայտման հետ մեկտեղ՝ Լեփսիուսը գերմանական կառավարությանը վճռական միջամտության դրդելու նպատակով անհրաժեշտ էր համարում պարզաբանել այն վտանգավոր հետևանքները, որ ունենալու էին այդ ռճրագործությունները Գերմանիայի համար: Հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը, նշում էր նա, բխում էր Անտանտի շահերից, քանի որ հայ ազգային շրջաններում բորբոքվելու էր ատելությունը թուրքերի հանդեպ: Մյուս կողմից այն խոչընդոտելու էր նաև Թուրքիայի տնտեսական զարգացման միջոցով այդ երկրի վրա Գերմանիայի ազդեցության ամրապնդումը, քանի որ Թուրքիայի տնտեսությունը հիմնականում գտնվում էր «հայերի ուսերի վրա»: Բացի այդ, հայերի բնաջնջման իրողությունը թշնամի երկրներում կօգտագործվեր որպես զենք Գերմանիայի դեմ և միաժամանակ մեծ վրդովմունք կհարուցեր գերմանական ավետարանական եկեղեցական շրջաններում. հանգամանք, որ գերմանական կառավարությունը չէր կարող անտեսել: Եվ վերջապես՝ Թուրքիայում, որտեղ «կառավարությունը գործում է ահաբեկչական սկզբունքներով», անհնար էր, որ բնաջնջման քաղաքականությունը ահաբեկչության չնդեր նաև հալածվողներին: Իսկ եթե հաշվի առնվեր այն հանգամանքը, որ թուրքական կառավարության

¹ St' u Johannes Lepsius an das Auswärtige Amt // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-22-DE-001, PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-22-DE-001, PA-AA, R 14086):

դեմ կար «ուժեղ և վտանգավոր» ընդդիմություն, որպիսին Անտանտի հետ շահերի ընդհանրություն ունեցող լիբերալների միությունն էր, ապա, ինչպես նշում էր Լեփսիուսը, Գերմանիայի շահերը պահանջում էին բացառել այդ ընդդիմության հետ Թուրքիայի ներքին քաղաքականության հանդեպ նախկինում չեզոք դիրք որդեգրած հայերի միավորումը, որ կարող էր տեղի ունենալ հայ ժողովրդի բնաջնջման երիտթուրքերի քաղաքականության հետևանքով¹: Անդրադառնալով 120 դաշնակցականների ձերբակալությանն ու նրանց սպառնացող մահապատժին Լեփսիուսը նշում էր, որ դրա պատճառով «ռուսահայության ահաբեկչական տարրերը Թուրքիայում գործելու ազատություն էին ստանում»²: Նա ընդգծում էր նաև, որ չեզոք հայերի կոմիտեները թեև դիմել էին ամերիկյան, բուլղարական և հունական կառավարություններին՝ իրենց օգնելու խնդրանքով, բայց նրանք միաձայն պատասխանել էին, որ միայն գերմանական կառավարությունն էր ի վիճակի կանխելու չարիքը, քանի որ միայն նա ազդեցություն ուներ թուրքական կառավարության վրա և հետևաբար Թուրքիայի հետ հավասար պատասխանատվություն էր կրում այդ երկրի ներսում տիրող վիճակի համար³:

Ուշագրավ է, որ գրեթե նույն ժամանակ Լեփսիուսը հեռագիր ստացավ Սոֆիայի իր դաշնակցական ընկերներից, որտեղ նշվում էր. «Ձեր ներկայությունն այստեղ անհրաժեշտ է»⁴: «Կը բաւեր լակոնական հեռագիր մը, ուղարկուած իրեն մեր կողմէն,– գրում է Լ. Նազարյանցն իր հուշերում,– որպէս զի այդ զարմանալի մարդը, առանց մենէ որևէ բացատրութիւն ուզելու, ոչ միայն անմիջապէս ելնէր ու գար Սոֆիա, այլ եւ պահանջէր գերման արտաքին գործոց նախարարութենէն, որ իրեն Թուրքիա մեկնելու հնարաւորութիւն տրուի»⁵: Ուղևորության թույլատվությունը անպայմանորեն ձեռք բերելու համար Լեփսիուսը այս անգամ ԱԳՆ-ին հայտնում էր նաև կովկասահայերի առաջնորդների հետ բանակցություններ վարելու իր պատրաստակամությունը և վստահեցնում, որ իրեն կհաջողվեր համոզել վերջիններիս «իրենց շահերը առանձնացնել Ռուսաստանի շահերից», եթե թուրքական կառավարությունը ազատ արձակեր ձերբակալված 120 դաշնակցականներին և հրաժարվեր հայ ժողովրդին աքսորելու ու բնաջնջելու քաղաքականությունից⁶:

Նշենք, որ ՀՅԴ-ն երբեք ռուսամետ դիրքորոշում չէր ունեցել⁷, սակայն

¹ Sté u Johannes Lepsius an das Auswärtige Amt // [http: www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$AllDocs/1915-06-22-DE-001, PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$AllDocs/1915-06-22-DE-001, PA-AA, R 14086):

² Sté u **Hayruni A.**, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 2, S. 44:

³ Sté u նույն տեղում, էջ 41:

⁴ Sté u **Լեոնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», 1928, թիվ 8, էջ 107:

⁵ Sté u նույն տեղում:

⁶ Sté u Johannes Lepsius an den Legationsrat im Auswärtigen Amt Rosenberg // [http: www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$AllDocs/1915-06-22-DE-002, PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$AllDocs/1915-06-22-DE-002, PA-AA, R 14086):

⁷ ՀՅԴ-ի տեսաբան Միքայել Վարանդյանը գերմանական սոցիալ-դեմոկրատական „Die neue Zeit“ («Նոր ժամանակ») շաբաթաթերթում տպագրած իր հոդվածներից մեկում մեջբերում

վերջին մի քանի ամիսների ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից հայերի բռնաճնշումների հետևանքով կուսակցությունը սկսել էր թեքվել Ռուսաստանի կողմը: ԱԳՆ-ում մտավախություն կար, որ հայերի շարունակվող հալածանքների պատճառով այդ գործընթացը խորանալու էր և հանգեցնելու այն բանին, որ հեղափոխական ակտիվիստները մահափորձերի ու սպանությունների միջոցով փորձելու էին ապակայունացնել իրավիճակը Թուրքիայում¹: Այդ պատճառով նախարարությունը որոշեց բավարարել Լեփսիուսի ցանկությունը, և հունիսի 23-ին Յագովի հրահանգով Վանգենհայմը դիմեց թուրքական կառավարությանը: Հաջորդ օրը նեթ հունիսի 24-ին, ԱԳՆ-ին ուղղված պատասխան հեռագրում Վանգենհայմը հաղորդում էր, որ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը թեև չի կարող թույլատրել Լեփսիուսի ճամփորդությունը գավառներում, բայց դեմ չէ նրա այցելությանը Կ. Պոլիս²:

Ինչևէ, չնայած Բ. Դուրը Լեփսիուսին հատկացրեց Կ. Պոլիս ժամանելու թույլատվություն, բայց Վանգենհայմն անձամբ բացարձակապես շահագրգռված չէր այդ այցելությամբ և ջանում էր այն խափանել: Նա համոզված էր, որ Լեփսիուսի ժամանումը և հայերի ծանր վիճակին ծանոթանալը կարող էին իրենց մեծ անախորժություններ պատճառել և վնասել Գերմանիայի հետագա ավելի կարևոր շահերին: Բացի այդ, նա ուստպիս էր համարում Թուրքիայի բռնություններից հրաժարվել պարտադրելու միջոցով ռուսահայերին իրենց կողմը գրավելու Լեփսիուսի տեսակետը: Նա չէր հավատում նաև, որ Լեփսիուսին կհաջողվեր հանդարտեցնել տեղի հայերին, քանի որ թուրքական կառավարությունը հաստատակամ էր իր քաղաքականության մեջ: Ուստի նա նախարարությանը խորհուրդ էր տալիս տարհամոզել Լեփսիուսին³:

Դեսպանի նախազգուշացումները, սակայն, իրենց նպատակին չհասան, քանի որ ոչ ոք չէր կարող համոզել Լեփսիուսին փոխել իր մտադրությունը: «Լեփսիուսը մեկնում է երկուշաբթի օրը և 10-14 օրից կլինի այդտեղ, – տեղեկացնում էր Ա. Ցիմերմանը հուլիսի 4-ին դեսպանին ուղարկված հեռագրում: – Քանի որ նա ձեռնարկել է բոլոր պատրաստություններն ու պայմանավորվածությունները, նրան ետ պահելու փորձը հաջողություն չունեցավ:

էր Ֆրիդրիխ Էնգելսի խոսքերը, որ «միայն ռուսական բռնակալության տապալումով կբացվեին Թուրքաց Հայաստանի վերջնական ազատության դռները»: Տե՛ս **Hayruni A. und Hosfeld R.**, նշվ. աշխ., էջ 229:

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an das Auswärtige Amt // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-24-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-24-DE-001), PA-AA, R 14086: Հմմտ. **Լեռնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 8, էջ 107:

* 1915 թ. ամռանը Լեփսիուսի Կ. Պոլիս ուղևորության նկարագրությունը տրված է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում:

³ Տե՛ս Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an das Auswärtige Amt // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-07-02-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-07-02-DE-001), PA-AA, R 14086:

Նա այսուամենայնիվ խոստացավ ժամանելուն պես ներկայանալ կայսերական դեսպանություն և խստորեն հետևել նրա ցուցումներին»¹:

Լեփսիուսը նախ այցելեց Բագել և Ժնև՝ հայերի շվեյցարացի բարեկամներին տեղեկացնելով իր մտադրության մասին², այնուհետև՝ Յյուրիխ, որտեղ հանդիպում ունեցավ ՀՅԴ-ի ռուսական թևի ղեկավար գործիչներից Սիմոն Զավարյանի³ հետ: Հուլիսի 12-ին Մարտին Ռադեիկն ուղղված նամակում նա այդ հանդիպման կապակցությամբ հետևյալն էր գրում. «Նաև սրանք (ռուսահայերի առաջնորդները – Մ. Հ.) թուրքական իշխանությունը կգերադասեին ռուսականից, եթե թուրքերը հրաժարվեին քրիստոնյա ժողովուրդներին ճնշելու անմիտ փորձերից»⁴: Մի քանի օր Յյուրիխում մնալուց հետո Լեփսիուսը Վահագն Քրմոյանի հետ Բուխարեստով մեկնեց Սոֆիա⁵:

Բուխարեստում ու Սոֆիայում ձեռք բերած տեղեկություններին ծանոթանալուց հետո նրա համար պարզ դարձավ, որ «խոսքը հայ ժողովրդի ծրագրված զանգվածային բնաջնջման մասին էր»: «Մնում էր միայն հուսալքություն է Լեփսիուսը, – որ ինձ հասած տեղեկությունները կարող էին չափազանցված լինել, և որ գոնե կլինայեին Անատոլիայի արևմտյան և կենտրոնական վիլայեթների հայությանը»⁶:

Լեփսիուսը Կ. Պոլիս հասավ հուլիսի 24-ին: Թեև նրան արգելվել էր մեկնել գավառները, բայց նա չէր հուսահատվում: «Հենց որ Կ. Պոլիս հասնեմ, – ասել էր նա Նազարյանցին, – պիտի բաց չթողնեմ Վանգենհայմի օձիքը, մինչև որ ինձ համար հայկական նահանգները մեկնելու թույլատվություն չտա»⁷: Իսկ այն հարցին, թե չի վախենում արդյոք, որ թուրքերը, ակամա համաձայնելով իր ճամփորդությանը, կարող էին միջոցներ ձեռք առնել իրեն փորձանքի ենթարկելու համար, նա պատասխանել էր. «Բնա՛վ, բնա՛վ: Թուրքերը լավ գիտեն, թե ում հետ ինչպես պետք է վարվել: Բավական է, որ տեղյակ լինեին չափին այն պատասխանատվության, որին կենթարկվեին իրենց վարմունքի համար: Իսկ իմ վերաբերմամբ այդ չափը Թալեաթին հայտնի է»⁸:

Սակայն Լեփսիուսի հույսերը չարդարացան: Հակառակ Կ. Պոլսում⁹ նրա գործադրած բոլոր ջանքերին՝ թուրքական կառավարությունը հաստատ մնաց իր որոշմանը՝ թույլ չտալ նրան ոտք դնել ադետի վայր: Թուրք նախա-

¹ Der Unterstaatssekretär des Auswärtigen Amts (Zimmermann) an die Botschaft in Konstantinopel // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-07-04-DE-001, PA-AA, BoKon 169](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-07-04-DE-001, PA-AA, BoKon 169).

² Տե՛ս **Հայրունի Ա.**, նշվ. աշխ., էջ 254:

³ Տե՛ս **Լեոնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 5, էջ 120:

⁴ Տե՛ս **Hayruni A. und Hosfeld R.**, նշվ. աշխ., էջ 230:

⁵ Տե՛ս **Լեոնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 5, էջ 120:

⁶ Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang des armenischen Volkes, S. VII:

⁷ Տե՛ս **Լեոնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 8, էջ 107-108:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 108:

⁹ Լեփսիուսի այցի ժամանակ Վանգենհայմը առողջական խնդիրների պատճառով Կ. Պոլսից բացակայում էր: Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius' armenische Verbindungen, S. 220:

րարներից մեկը, ցանկանալով արդարացնել այդ արգելքը, Լեփսիուսին ասել էր. «Մենք չենք կարող երաշխավորել Ձեր ապահովությունը:– Ես չեմ վախենում ձեր ավազակներից,– առարկել էր Լեփսիուսը:– Բայց մենք ենք վախենում,– պատասխանել էր թուրք պաշտոնյան»¹:

Իրականում Լեփսիուսն ինքը քաջ գիտակցում էր, թե ինչ դժվարություններ էին իրեն սպասվում Կ. Պոլսում: «Ես գիտեի,– գրում է նա,– որ իմ ժամանման օրվանից հայտնվելու էի ոստիկանության լրտեսների հսկողության տակ: Եթե չէի ուզում, որ ինձ հետ կապի մեջ գտնվող հայերի կյանքը վտանգվեր, ուրեմն պետք է շատ զգույշ լինեի:… Չնայած ես ազգությամբ գերմանացի էի, բայց ամենուր ինձ հետևում էին՝ մատնելու նպատակով: Այդուհանդերձ ինձ հաջողվեց իմ հանդիպումները հայերի հետ այնպես կազմակերպել, որ նրանք աննկատ մնացին լրտեսներից»²:

Կ. Պոլսում Լեփսիուսը մնաց երեք շաբաթ, և այդ ժամանակը նա օգտագործեց «բոլոր կողմերից հնարավորինս շատ տեղեկություններ ձեռք բերելու համար»³: Թեև գերմանական դեսպանությունում նրան հյուպատոսական տեղեկագրերին ծանոթանալու հնարավորություն չտրվեց, այսուամենայնիվ դեսպանատան աշխատակիցների բանավոր հաղորդումները բավական էին մինչ այդ ձեռք բերված տեղեկությունների ճշմարտացիությանը համոզվելու համար: «Դեսպանության աշխատակիցները,– գրում է Լեփսիուսը,– որոնք չէին թաքցնում իրենց սարսափը, հաստատեցին արքայի բնույթի մասին Սոֆիայում առաջ եկած իմ կարծիքը»⁴: Հայկական սարսափների մասին նա բավականաչափ տեղեկություններ ստացավ նաև օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչներից, երկրի ներսում մասնաճյուղեր ունեցող կազմակերպություններից, ամերիկյան Bible Haus-ից, ցանկացած եվրոպացուց ու ամերիկացուց, որոնք եղել էին այդ վայրերում, ինչպես նաև հայ կաթոլիկ Մխիթարյաններից, հռոմեական կաթոլիկ օրդենի ներկայացուցիչներից⁵: Մեծ ծառայություն մատուցեց նաև Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուն, որը, շրջանցելով իր պաշտոնական իրավունքները, թույլ տվեց Լեփսիուսին աչքի անցկացնել հյուպատոսական տեղեկագրերը և ձևացնում էր, թե չի տեսնում, «երբ նա գրառումներ էր կատարում փաստաթղթերից»⁶: Լեփսիուսը կապեր հաստատեց նաև Կ. Պոլսում բնակվող հայերի, այդ թվում և Կենտրոնական վարժարանի տեսուչ Աստվածատուր Խաչատրյանի հետ, որը կազմակերպեց Հայոց Ջավեն պատրիարքի հետ նրա հանդիպումը: Ինչպես պատրիարքն է գրում իր հուշերում, հանդիպումը անցավ ջերմ ու աշխույժ

¹ Լեռնեան Ռ., նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 8, էջ 108:

² Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, S. 23:

³ Տե՛ս Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. X:

⁴ Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, S. 23.

⁵ Տե՛ս Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. X:

⁶ Տե՛ս Hayruni A., Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 3, S. 42:

մթնոլորտում. «Դր. Լեփսիուսը ճիշտ ժամանակին եկավ պատրիարքարան: Երկուսս էլ ընկճված էինք՝ ես, որովհետև անգոր էի իմ ժողովրդին վրա հասած անասելի աղետը կանխելու համար, և դր. Լեփսիուսը, որովհետև իր առաքելությունը ձախողվել էր: Ես հնարավորինս մանրամասն պատմեցի նրան երկրի ներսում հայերի աղետալի վիճակի մասին, տեղեկացրի նաև թուրք նախարարներին և գերմանական դեսպանին ուղարկած իմ խնդրագրերի մասին: Դեսպանը վստահեցնում էր, որ «հայի մեկ մատն անգամ չպիտի արյունոտվի», մինչդեռ այժմ մահվան է դատապարտված ամբողջ ժողովուրդը: Լեփսիուսն էլ ինձ պատմեց թուրք նախարարներին և դեսպան Վանգենհայմին իր դիմումների մասին և ավելացրեց, որ այժմ պիտի հուսակտուր վերադառնար: Այդ մեծ մարդասերը, հեկեկալով, արցունքներն աչքերին, ինձ ասաց, որ «թող Աստված մեզ օգնական լինի», և հրաժեշտ տվեց»¹:

Զավեն պատրիարքը նույնպես Լեփսիուսին տրամադրեց բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք ևս ընդգրկվեցին նրա «Տեղեկագիր հայ ժողովրդի դրության մասին Թուրքիայում» („Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei“) (1916) աշխատության մեջ²:

Կապիտան Հումանի միջամտությամբ Լեփսիուսին³ հաջողվեց օգոստոսի 10-ին հանդիպել նաև Էնվեր փաշայի հետ⁴: Մեկժամյա զրույցի ընթացքում նա գործադրեց իր բոլոր հնարավորությունները բնաջնջվող ժողովրդին փրկելու համար⁵: Սակայն նրա վրա մարդկայնորեն ներգործելու Լեփսիուսի բոլոր ջանքերն ապարդյուն էին: Էնվերն իր բացատրություններով նրան պարզորոշ հասկացրեց, որ երիտթուրքական կառավարության հայկական քաղաքականությունը խարսխվում էր «Հայկական հարցը համաշխարհային պատերազմում մեկընդմիջտ լուծելու» անխախտ որոշման վրա⁶:

Իր առաքելությունը համարելով ձախողված՝ Լեփսիուսը փորձեց փրկել մահվան ճիրաններում հայտնված հայ ժողովրդի զավակներից գոնե մեկին՝ բեռլինաբնակ հայ բժիշկ և փիլիսոփա, ԳՀԸ-ի հիմնադիր անդամ դր. Հայրանյանին, որը պատերազմի բռնկումից քիչ առաջ մեկնել էր Թուրքիա՝ հայրենի Սվազ գավառի Տիվրիկ գյուղը՝ իր ծնողներին տեսնելու: Հայրանյանը պետք է վերադառնար Բեռլին, երբ բռնկվեց պատերազմը, որի պատճառով նա մնաց Թուրքիայում և զորակոչվեց որպես ռազմական բժիշկ: Կարճ ժա-

¹ Հղումը ըստ՝ **Hayruni A.**, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 4 // Armenisch-Deutsche Korrespondenz, Nr. 161, Jg. 2013/Heft 4, S. 43:

² Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius' armenische Verbindungen, S. 223:

³ 1915 թ. օգոստոսի սկզբին Կ. Պոլսից Լեփսիուսը իր կնոջը՝ Ալիսե Լեփսիուսին, գրում էր. «Թուքերով հնարավոր չէ նկարագրել, թե ինչ է կատարվել և դեռ կատարվում է: Ժողովրդի կատարյալ բնաջնջումը նպատակ է, և ամեն ինչ տեղի է ունենում պատերազմի քողի տակ: Առայժմ էլ ոչինչ չեմ կարող ասել»: Տե՛ս **Schaede S., Hosfeld R.** (Hg.), նշվ. աշխ., էջ 25:

⁴ Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang des armenischen Volkes, S. XII:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ XII-XVII:

⁶ Տե՛ս **Hayruni A. und Hosfeld R.**, նշվ. աշխ., էջ 229:

մանակ անց, սակայն, ի թիվս այլ բժիշկների՝ Սվազի վալիի կողմից նա ձերբակալվեց ու արքունիք: Ռազմական նախարարին Լեփսիուսը խնդրեց ազատ արձակել իր ընկերոջը և թույլատրել նրան վերադառնալ Գերմանիա: «Ես երաշխավորեցի,– գրում է Լեփսիուսը,– որ իմ ընկերն ընդունակ չէ անխտեմ արարքների, և որ նա ոչ մի դեպքում չի չարաշահի իր ազատումը»¹:

Էնվեր փաշան վստահեցնում էր, որ իր համար հաճելի կլինեին կատարել Լեփսիուսի ցանկությունը, բայց նախ Սվազի վալիից պիտի ճշտեր, թե ինչ մեղադրանք էր նրան ներկայացված: «Ինչպես մյուս բժիշկներին, այնպես էլ Հայրանյանին ոչ մի մեղադրանք չի ներկայացվել, բացի հայ լինելու մեղադրանքից»²,– հնչեց Լեփսիուսի պատասխանը: Էնվեր փաշան մեկ անգամ ևս վստահեցրեց, որ Հայրանյանի դեմ ծանրակշիռ փաստարկների բացակայության դեպքում ինքը միջոցներ ձեռք կառնեի նրա վերադարձի համար:

Էնվերի «սիրալիր» վերաբերմունքը հույս էր ներշնչել Լեփսիուսին, որ իր ընկերը կփրկվի: Բայց Գերմանիա վերադառնալուց հետո նա տեղեկացավ, որ Հայրանյանը բանտում սպանվել էր³:

Ինչևէ, Կ. Պոլսում երեք շաբաթ մնալուց հետո Լեփսիուսը վերադարձավ ճանապարհին կանգ առնելով Սոֆիայում: Այստեղ նրան դիմավորեց Լ. Նազարյանցը, և կայարանից հյուրանոց գնալու ճանապարհին նրանց միջև տեղի ունեցավ շատ հետաքրքիր մի զրույց, որի մասին Նազարյանցը հետևյալն է գրում. «Տեղում իրականությանը բախվելուց հետո,– ասաց ինձ Լեփսիուսը,– ես եկա այն համոզման, որ հայերի կացության հետ կապված խնդիրները կարելի է լուծել միայն հեղափոխական միջոցներով»: -Ու անուշ նայուածքը սեւեռեց դեմքիս՝ տեսնելու համար, թե ինչ տպավորություն գործեց վրաս: Չարմացած իրեն կը նայեի. առհասարակ կը սիրեր կատակել. Ու այժմ ես կը դժուարանայի ըմբռնել՝ լուրջ բա՞ն մըն էր իր ասածը, թե սովորական կատակ միայն: «Այո,– շարունակեց,– ձեր դատը ինձ հեղափոխական դարձրեց, ու հիմա մենք, կարելի է ասել, «ընկերներ» ենք»: -Ու զուարթորեն քրքջաց: «Պատմեմ, թե ինչպես այդ եղավ: Ինձ նյութեր էին պետք, և ես կարողացա բավական մեծ քանակությամբ տեղեկագրեր և փաստաթղթեր ձեռք բերել: Շատ լավ: Բայց ինչպե՞ս պիտի այդ ամենը դուրս հանեի Թուրքիայից, հսկողություն, գրաքննություն, հազար ու մի արգելք: Այստեղ էր ահա, որ երևան եկավ հեղափոխականների հետ բարեկամ լինելու օգուտը: Հաճախ էի լսել, թե ինչպես էին տարբեր եղանակներով մի տեղից մյուսը արգելված առարկաներ փոխադրում: Որոշեցի հետևել նրանց օրինակին ու կատարյալ հաջողություն ունեցա»: -Իսկ եթե բռնուէի՞ք: «Դա էլ կլինեի իմ հեղափոխա-

¹ Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang des armenischen Volkes, S. XVII-XVIII:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

կան մկրտությունը, որից հետո մնում էր միայն պաշտոնապես հարել որևէ հայ հեղափոխական կուսակցության»¹:

Լեփսիուսը Սոֆիայում անցկացրեց մոտ երկու շաբաթ, որտեղ ուսումնասիրում էր ՀՅԴ-ի արխիվը՝ քաղելով իրեն պետք եղած տեղեկությունները: Այս աշխատանքին նա նվիրում էր օրական 7-8 ժամ: Քանի որ Լ. Նազարյանը զբաղված էր «Հայաստան» թերթի խմբագրությամբ և շատ քիչ ժամանակ կարող էր տրամադրել ուրիշ գործերի, թարգմանչի դերը կատարում էր Տիգրան Խաչիկյանը (Արզուման): Բայց որովհետև նա վարժ չէր տիրապետում գերմաներենին, ուստի հայերեն գրությունների բովանդակությունը թելադրում էր ֆրանսերենով, իսկ Լեփսիուսը գրի էր առնում գերմաներենով²:

Մեպտեմբերի 18-ին վերադառնալով Բեռլին՝ Լեփսիուսը ներկայացավ ԱԳՆ, որտեղ Գերմանիայի կողմից թուրքական կառավարության վրա ներգործելու և նրա «սանձերը քաշելու» նրա պահանջը մերժվեց, քանի որ գերմանական կառավարությունը չէր կարող հրաժարվել Թուրքիայի հետ իր դաշինքից: «Ի՞նչ կարող ենք անել, – հակադարձում էր նրան Ցիմերմանը: – Մեր դաշինքը Թուրքիայի հետ կանգնած է Թալեաթի, Էնվերի և Խալիլի վեց աչքի առաջ: Եթե երեքը մեզ չեն լսում, մնում է, որ մենք հրաժարվենք այդ դաշինքից, իսկ դա անել մենք չենք կարող»³:

Լեփսիուսին այլ բան չէր մնում, քան հասարակությանը իրազեկել հայ ժողովրդին բնաջնջելու թուրքական կառավարության ծրագրած քաղաքականության մասին և փորձել դրա միջոցով ճնշում գործադրել իր երկրի կառավարության վրա, որպեսզի նա ի վերջո կանխեր աղետը և ձեռնարկեր դեռ կենդանի մնացած աքսորյալ հայեր փրկության գործը:

Грануш Саакян – *Усилия Иоганнеса Лепсиуса, приложенные для прекращения Геноцида армян в июле-августе 1915 г.*

Ознакомившись с содержанием телеграммы, направленной немецким послом в Константинополе Вангенгаймом в Министерство иностранных дел Германии 31 мая 1915 г., д-р Лепсиус решил лично отправиться в Турцию, чтобы на месте узнать о происходящих там событиях и дать ход своим заявлениям в правительство Германии с просьбой о помощи притесняемым армянам. Лепсиус прибыл в Константинополь 24 июля, пробыл там три недели и использовал это время для получения “как можно больше сведений со всех сторон”. В середине сентября вернувшись в Берлин, он отправился в Министерство иностранных дел Германии, которое отклонило его требование о вмешательстве в пользу армян и воздействии на турецкое правительство. После этого он был вынужден, информируя общественность о спланированной политике турецкого правительства по истреблению армян, оказать давление на немецкое правительство, для того чтобы оно в конце концов вмешалось и прекратило зло.

¹ Տե՛ս Լեոնտան Ռ., նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 8, էջ 108:

² Տե՛ս նույն տեղում, էջ 108-109:

³ Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 4, S. 43-44:

Hranush Sahakyan – *The Efforts Taken by Johannes Lepsius to in order to Prevent the Armenian Genocide in July-August 1915*

After getting acquainted with the content of the telegram sent by German Ambassador to Constantinople Wangenheim to the Ministry of Foreign Affairs of Germany on May 31, 1915, Dr. J. Lepsius decided to personally travel to Turkey to make sure that he was aware of the events taking place there and thus to make his applications to the German government favorable for the persecuted Armenians. Lepsius arrived in Constantinople on July 24, where he spent three weeks, and used that period to “get as much information as possible from all sides”. Returning to Berlin in mid-September, he went to the Ministry of Foreign Affairs, where his demand for Germany’s influence on the Turkish government in favor of Armenians was denied. After that, he had to put pressure on the German government to intervene in order to prevent the evil by informing the public about the Turkish government’s planned policy of annihilating the Armenian people.

Ներկայացվել է 30.10.2018

Գրախոսվել է 15.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

**ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1922-1925 ԹԹ.**

Բանալի բառեր – Վրացական ԽՍՀ, ՀԽՍՀ, Բորչալու, Լոռի, Ախալքալաք, հողային-տարածքային հարցեր, սահմանազատում, Անդրկենտրոններ

1921 թ. վեջերին և 1922 թ. սկզբին հայ-վրացական հողային-տարածքային սահմանազատման շուրջ տարաձայնությունները տեղափոխվեցին այլ հարթություն՝ ներքուստ պահպանելով լարվածությունը, որը պայմանավորված էր մոսկովյան իշխանությունների 1922 թ. մարտին ընդունած որոշումով, որով անդրկովկասյան հանրապետություններին պարտադրվում էր ընդգրկվել մեկ միասնական տնտեսական-քաղաքական միությունում: Սկզբունքային տարաձայնությունները էապես խոչընդոտում էին միջպետական հստակ և վերջնական սահմանի հաստատումը: Վրացական ԽՍՀ-ի և ՀԽՍՀ-ի միջև ստորագրված համաձայնագրերը վերջնական չէին: Բարդություններ և արգելքներ առաջացան երկաթգծի և տարանցիկ առևտրաշրջանառության հարցում, որի կապակցությամբ վրաց պատմաքաղաքագետ Ռևազ Գաչեչիլաձեն իրավացիորեն փաստում է, որ Հայաստանը առևտրի, ապրանքափոխադրումների և Ռուսաստանի հետ տարանցիկ հաղորդակցության ուղիների ու արտաքին կապերի ապահովման տեսանկյունից կախվածություն ուներ Վրաստանից: Ըստ նրա՝ հենց դա էր պատճառը, որ տարածաշրջանում ստեղծվեց աշխարհաքաղաքական մրցակցություն, որն իշխող գործոն դարձավ և կրկնվեց 1991 թ. հետո¹:

Խորհրդային իշխանությունը աշխատում էր վերջնականապես լուծել Անդրկովկասի պետությունների միջև առկա սահմանային-տարածքային վեճերը: Այդ նպատակով 1922 թ. կեսին ձևավորվում է Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով՝ Դաշնային խորհրդի նախագահ Դոնենկոյի գլխավորությամբ, որում ՀԽՍՀ-ից ներգրավվում է Մ. Ղարաբեկյանը: Հանձնաժողովն առաջադրանք է ստանում կարգավորել պետական սահմանները, վերացնել մաքսային կետերը,

¹ Տե՛ս **Gachechiladze R.**, Geopolitics and Foreign Powers in the Modern History of Georgia: Comparity 1918-21 and 1991-2010: Տե՛ս The Making of Modern Georgia, 1918-2012: The First Georgian Republic and Successors. (Routledge Contemporary Russia and Eastern Europe Series. Edited by Stephen F. Jones, London and New York, 2014, p. 28 // <https://www.press.umich.edu/pdf/0472098985-ch10.pdf>:

լուծել սահմանամերձ գյուղերի տարածքային վեճերը, ջրօգտագործման և անտառային տնտեսությունների, ձմեռանոցների և քոչի հետ կապված հարցերը: Այդ նպատակով 1923 թ. փետրվարի 5-ին Անդրկենտրոնական նախագահության որոշմամբ կազմվում է գավառների հողային սահմանավեճերը լուծող կենտրոնական հանձնաժողով, որի ղեկավար է նշանակվում ՀԽՍՀ Կենտրոնական նախագահ Ս. Համբարձումյանը, իսկ մայիսի 14-ին նրան փոխարինում է Ս. Կասյանը¹:

Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում Անդրկենտրոնական առընթեր գավառների վարչական սահմանագատման գծով հանձնաժողովի 1923 թ. ապրիլի 30-ի նիստի որոշումը՝ Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի, Բորչալուի և Լոռվա գավառների վարչական բաժանարար սահմանագծման վերաբերյալ²: Ըստ դրա՝ սահմանը սկսվում էր Ուզունթալա սարից, այնուհետև թեքվում դեպի արևմուտք՝ ձգվելով դեպի Օրթադաղ անցումը, այնուհետև՝ դեպի արևելք՝ հյուսիսում թողնելով Մադաթափա լիճը և Տրոհցկոյե գյուղը, իսկ հարավում՝ Թատոյ Խարաբա, Կարմիր Խարաբա և Դարբեյ բնակավայրերը, որից հետո ձգվում դեպի Լեյլի Դաղ, իսկ այնուհետև՝ ուղիղ դեպի Իրգանչայ բնակավայրի մոտ գտնվող սարը, Կուլուրաշ-Լոքի տարանջատող գծով Օսինովայա սարի անցումը, Գայլի Դրունքը, Կրետտովայա, Լավար, Բուզաքյար, Քեչելկոն սարը: Այնուհետև սահմանը ձգվում էր հյուսիս-արևելք և դուրս գալիս դեպի Մադախլո՝ Թոփա-դաղ, այնուհետև՝ «Աղբյուր» գրառությամբ վայրը, որը Խաչկալա վայրից հյուսիս էր՝ մինչև Պալուրի Բաշի: Միաժամանակ արձանագրվում էր, որ Իրգանչայ, Մաաթի, Մադախլո բնակավայրերը հյուսիսում մնում էին Վրացական ԽՍՀ-ի կազմում, իսկ նշված գծից հյուսիս և 1921 թ. նոյեմբերի 6-ով որոշված սահմանագծի միջև ընկած բոլոր բաժնեհողերը և անտառները մնում են երկու կողմերի ընդհանուր օգտագործմանը³:

Այսպիսով, 1921 թ. նոյեմբերի 6-ի պայմանավորվածությունը ճշգրտվածքներ տվեց, և խախտվեցին նույնիսկ այն հարցերը, որոնց շուրջ երկու հանրապետությունները կարծես թե համաձայնության էին հանգել: Այդպիսի վիճահարույց խնդիր էր Չաթախի անտառի պատկանելիության հարցը, և դա այն դեպքում, երբ 1921 թ. նոյեմբերի 6-ի և 1922 թ. սեպտեմբերի 7-ի համաձայնագրերով երկու հանրապետությունները որոշել էին Լոք-Լավար լեռնաշղթայի հյուսիսային լանջերին գտնվող այդ անտառագոտին հանձնել ՀԽՍՀ տնօրինությանը՝ Ախալքալա անտառտնտեսության կազմում: Սակայն ստացվեց այնպես, որ 1923 թ. ապրիլի 30-ի որոշմամբ երկու հանրապետությունների միջև սահմանագիծը ձգվում էր Լոք-Լավար լեռնաշղթայով, և 21 հազար դեկադարին անտառագոտուց 6 հազարը գտնվում էր 1921 և 1923 թվականներին

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 115, 131 հալ.:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 40:

որոշված սահմանագծերի միջանկյալ հատվածում: Հենց այս հանգամանքն օգտագործելով՝ վրացական կողմն առաջարկեց անտառաշերտը համատեղ շահագործել: Բնականաբար ՀԽՍՀ իշխանությունները մերժեցին վրացական կողմի առաջարկը և շարունակեցին պնդել իրենց իրավունքները: Դա իր հերթին առաջացրեց վրացական կողմի անթաքույց դժգոհությունը¹:

Վիճահարույց խնդիրները դարձյալ չհանգուցալուծվեցին: Անդրկենտրոնականի Հողային հանձնաժողովի 1923 թ. ապրիլի 30-ին հրավիրված խորհրդակցության ժամանակ Վրաստանի և ՀԽՍՀ-ի միջև համաձայնություն ձեռք չբերվեց²: Հաշվի առնելով դեռևս առկա տարաձայնությունները՝ կողմերի առջև խնդիր դրվեց կարճ ժամկետում ներկայացնել հիմնավորված առաջարկներ: Հանձնարարվեց հիմք ընդունել 1921 թ. հուլիսի 5-ի ադրբեջանա-վրացական սահմանային պայմանագրի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը, վերանայել 1921 թ. նոյեմբերի 6-ի և 1922 թ. հունվարի 28-ի որոշումները, որոնք վերաբերում էին Չաթնինսկի, Պրիտոյան, Էլդարսկյան, Շիրակի և Մերձալպազանյան հովիտներին: Խնդիր դրվեց սահմանագիծը հաստատելիս ղեկավարվել փաստացի հողօգտագործման վիճակով և վարչական ղեկավարման նպատակահարմարությամբ ու տնտեսական անհրաժեշտությամբ³: Այսպիսով, եթե Անդրկենտրոնականի որոշմամբ որոշակի համաձայնություն ձեռք բերվեց Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի գավառների սահմանագծի հստակեցման խնդրում, ապա նույնը չհաջողվեց Լոռու և Բորչալուի հարցում: Այստեղ Խորհրդային Հայաստանը տարածքային կորուստներ ունեցավ, ինչն էլ պայմանավորեց հետագա լարվածությունը հայ-վրացական սահմանագատման գործընթացում:

1921 թ. նոյեմբերի 6-ի համաձայնության մեջ ամենևին հաշվի չէին առնվել ո՛չ աշխարհագրական, ո՛չ ժողովրդագրական և ո՛չ էլ տնտեսական շահերը, ուստի Վրաստանը պահանջեց վերանայել երկու երկրների միջպետական սահմանները⁴: Անդրկենտրոնականի հողային հանձնաժողովի որոշմանը իրենց անհամաձայնությունը հայտնեցին ՀԽՍՀ Հողժողկոմատի կոլեգիայի անդամ Մ. Աթաբեկյանը և Անդրկենտրոնականի նախագահ Ս. Համբարձումյանը: 1922 թ. նոյեմբերի 7-ի ժամանակավոր համաձայնության⁵ հարցում հատուկ կարծիք է արտահայտել Ս. Համբարձումյանը: Իսկ 1923 թ. ապրիլի 30-ի արձանագրության վերաբերյալ նա կատարել է վերապահում Լոռու և Բորչալուի գավառների միջև սահմանների հարցում: 1921 թ. նոյեմբերի 6-ի որոշումն անորոշ էր և այդ հանգամանքից օգտվելով՝ Խորհր-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 232, թ. 3, 6, 8:

² Տե՛ս նույն տեղում, գ. 703, թ. 203:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 35, թ. 40:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 168, թ. 19:

⁵ Հարկ է ընդգծել, որ 1922 թ. նոյեմբերի 7-ի ժամանակավոր համաձայնությունը վերաբերում էր վիճելի տարածքի անտառների պահպանության հարցին:

դային Վրաստանի իշխանությունները շարունակում էին սադրանքները ՀԽՍՀ սահմանամերձ գոտու բնակավայրերի նկատմամբ՝ հավակնություններ ներկայացնելով արոտավայրերի, բարեբեր հողահանդակների և անտառներով հարուստ տարածքների հանդեպ:

Վրացական իշխանությունները, օգտվելով սահմանագատման մասին որոշումների անհստակությունից, ոչ միայն ձգձգում էին բանակցությունները, այլև միջադեպեր էին ստեղծում՝ փորձելով իրենց շահերը պարտադրել հայկական կողմին: Այդպիսի ակնառու փաստերից է հարկահանություն իրականացնելու փորձը սահմանամերձ գյուղերում: Դա կանխելու նպատակով ՀԽՍՀ ՆԳ ժողկոմ Ա. Նուրիջանյանը 1922 թ. սեպտեմբերի 6-ին իր դժգոհությունն է հայտնում Վրաստանի իշխանություններին, իսկ ՆԳ նախարարը Բորչալուի գավառային գործկոմից պահանջել էր դադարեցնել Լամբալու և Քերպիլի գյուղերից բռնի հարկահավաքությունը, իսկ արդեն բռնագանձվածը փոխանցել ՀԽՍՀ Լոռու գործկոմի տնօրինությանը¹:

Սահմանատարածքային տարաձայնությունները հայ-վրացական հարաբերություններում մշտապես տագնապ հարուցող թեմաներ էին, որոնք անհարկի լարվածության պատճառ էին դառնում: Այսպես, օրինակ՝ 1923 թ. մայիսին բռնկվեց հայկական Ջիլիսա կոչված գյուղի հետ կապված սահմանավեճը: Դեռևս 1923 թ. հունվարի 13-ին ՀԽՍՀ Լոռու խորհուրդների գործկոմը քննարկում է Վորոկան սակավահող գյուղի ավելի քան 100 գյուղացիների (16 տնտեսություններ) նախկինում կալվածատեր Չատուլովին պատկանող Ջիլիսա հողամասում վերաբնակվելու դիմումը: Հայաստանի ՆԳ ժողկոմին ուղղված Լոռու գործկոմի ՆԳ վարչության բաժնի վարիչի 1923 թ. մայիսի 4-ի գրությունից պարզվում է, որ սահմանակից Ալավերդու շրջանի Ջիլիսա բնակատեղը տեղափոխված վորոկանցիների և Վրաստանի կազմում գտնվող Օփրեթ գյուղի բնակիչների միջև բախում է տեղի ունեցել վերջիններս դեմ են արտահայտվել այդ տեղամասում վորոկանցիների բնակվելուն ու այդ հողահանդակը օգտագործելուն: Այս պաշտոնագրում խնդրվում էր Վրաստանի ՆԳ ժողկոմատի միջոցով կարգադրել Բորչալուի գավառային գործկոմին միջոցներ ձեռնարկել դադարեցնելու օփրեթցիների զինված ելույթները Ջիլիսայում վերաբնակեցված Վորոկանի բնակչության դեմ²: Սակայն բազում բողոքները մնում են անպատասխան, քանզի վրացական կողմը բոլոր ջանքերը գործադրում էր, որպեսզի թիզ անգամ չզիջի Հայաստանին³:

Վրացական և Հայկական ԽՍՀ հողժողկոմատների միմյանց ներկայացվող պահանջներն անզիջում էին և Անդրկենտրոնականի մի նիստից մյուսն էին փոխադրվում՝ փորձելով գտնել փոխզիջումային տարբերակներ: Ինչպես

¹ Տե՛ս ՀՍՍՀ, ֆ. 116, ց. 3, գ. 52, թ. 193:

² Տե՛ս նույն տեղում, թ. 26 հակ.:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 23-24:

արձանագրվում է Անդրկենտգործկոմի նախագահության 1928 թ. օգոստոսի նիստերից մեկում, Բորչալու-Լոռի-Փամբակի վիճելի տարածքը կազմում էր 21 հազար դեյատին՝ 12 բնակավայրեր: Այս սահմանների մասին սկզբնական համաձայնությունը կայացել էր դեռևս 1921 թ. նոյեմբերի 6-ին, սակայն առանց հստակ սահմանագատման: Կողմերը գտնում էին, որ վիճարկելի անտառային շրջանը տնտեսական նկատառումներով շաղկապված է իրենց հանրապետությունների հետ: Գավառների վարչական սահմանագատման հանձնաժողովի 1923 թ. ապրիլի 30-ի նիստի արձանագրությունը ներկայացվեց Անդրկենտգործկոմի նախագահության քննարկմանը, որից հետո հարցը դիտարկվեց հողային հանձնաժողովի 1923 թ. սեպտեմբերի 18-ի նիստում, որը կայացրեց հետևյալ որոշումը.

1. Հարցի լուծմանը ճիշտ մոտեցում ունենալու համար տեղում ստուգել այն հանգամանքները, որոնք դրված են գավառների վարչական սահմանագատման հանձնաժողովի 1923 թ. ապրիլի 30-ին որոշման մասին Հայկական ԽՍՀ ներկայացուցչի հատուկ կարծիքի հիմքում:

2. Անհրաժեշտ համարել հետազոտելու Լոռի և Բորչալու գավառների միջև ընկած սահմանամերձ անտառային գոտին և բացահայտել դրա տնտեսական նշանակությունը հանրապետությունների սահմանակից բնակավայրերի համար¹:

1923 թ. սեպտեմբերի 28-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհի և Վրաստանի Հեղկոմի միջև կայացած այսպես կոչված «*լիակատար*» համաձայնությամբ ՀԽՍՀ-ի և ՎԽՍՀ-ի միջև ի վերջո սահմանագատում է կատարվում: Երկու հանրապետությունների սահմանագիծը սկսվում էր Ուչ-Թափալար սարից, ոլորապտույտ գծով ձգվում արևմուտքից արևելք՝ հասնելով Օրթուլ-Դաղ լեռնանցք և Օքյուզ-Դաղ սարը, թեքվում դեպի հյուսիս-արևելք, այնուհետև՝ դեպի արևելք՝ հյուսիսում թողնելով Մադաթափա լիճը և Տրոհցկոյե գյուղը, իսկ հարավում՝ Թատոյ-Խարաբա, Կարմիր Խարաբա և Դար-քեյ գյուղերը, այնուհետև՝ ուղիղ գծով Լեյլի-Դաղ սարի լեռնագագաթով Իրզանչայ գյուղը՝ ուղիղ դեպի Կուլութաշ բարձունքը, Սաաթի գյուղի բարձունքը, Քերպիլի բարձունքը, ուղիղ գծով դեպի Օփրեթի գյուղը, մինչև Խոժոռնի գյուղի եկեղեցու ավերակները, Վարդաձոր գյուղը, Մադախլո կայարանը, որը Մադախլոյից հյուսիս է, այնուհետև մինչև Թանադաղ սարը, հետո «Աղբյուր» մակագրությունը, որը Խաչ-Կալա ժայռի մակագրությունից հյուսիս է՝ Պոլուրի-Բաշի սարը: Ծանոթագրության մեջ արձանագրվում էր, որ Իրզանչայ, Սաաթի, Ջանդար, Աղբյուրի, Օփրեթ, Խոժոռնի, Վարդաձոր, Մադախլո բնակավայրերը գտնվում են նշված սահմանագծից հյուսիս՝ Վրացական ԽՍՀ կազմում: Սույն

¹ Տե՛ս ՀՍՍՀ, ֆ. 112, ց. 1, գ. 168, թ. 19-19 հավ., 20, 27 հավ.:

փաստաթուղթը վավերացվել է ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի և Վրաստանի Հեղկոմի նախագահ Բ. Մդիվանու կողմից¹:

1923 թ. դեկտեմբերի 6-ին Անդրկենտրոնականի նախագահության նիստում լսվում է Ղարաբեկյանի զեկույցը Ալավերդու, Ղազախի և Զանգեզուրի սահմանային վեճերի մասին: Հարց է դրվում կրկին դիմել Անդրկենտրոնականին՝ ստեղծելու հատուկ հանձնաժողով: Միաժամանակ որոշվում է Բաթումի փախստականներին տեղաբաշխել Ախալքալաքի գավառում՝ անհնարին համարելով նրանց Հայաստանում տեղավորելու մասին Անդրկենտրոնականի որոշումը, միաժամանակ վերապահում անելով, որ բացառիկ դեպքերում որոշ քանակի անձնաց կարելի է ընդունել՝ նկատի ունենալով ձմեռվա հանգամանքը²:

Սահմանավեճի հարցը դեռ երկար է շահարկվում, որը լուծելու նպատակով Անդրկենտրոնականը 1924 թ. հունվարի 30-ին որոշում է ընդունում 1923 թ. փետրվարի 5-ին ստեղծված հողային հանձնաժողովը վերակազմավորել որպես «Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողովի» (Ս. Կասյան՝ նախագահ, անդամներ՝ Ս. Յաղուբով, Ն. Գ. Խոմերիկի)³:

Բացի Բորչալուի և Լոռու գավառների միջև այդ պահին դեռևս չլուծված հարցից՝ այդ նույն շրջանում կար ևս մի կարևոր հողային-սահմանային խնդիր՝ կապված «Գեղիկ» խոտհարքի հետ: Այն վեճի առարկա դարձավ Հայկական ԽՍՀ Շահնագար գյուղի և Վրաստանի Միացյալ զինվորական կոպերատիվի վարչության միջև⁴, որը այն վարձակալել էր: Տարածքը ամբողջապես ՀԽՍՀ Շահնագարի տարածքում էր: Ստեղծված իրավիճակը հաշվի առնելով՝ հողհանձնաժողովը առաջարկում է երկու կողմերին գալ ընդհանուր համաձայնության և խոտհարքը թողնել կոպերատիվի տնօրինությանը՝ բնամթերքով փոխհատուցելու պայմանով⁵:

Անդրկենտրոնականի 1923 թ. հուլիսի 31-ին հրավիրված հողային հանձնաժողովի նիստին, որն ուներ խիստ ներկայանալի կազմ (նախագահ՝ Ս. Յիսակայա, անդամներ՝ Ս. Կասյան, Հայաստանի հողժողկոմ Ա. Երզնկյան, Ստուրուա, Գինսբուրգ, Յաղուբով, Վրաստանի հողժողկոմատի հողօգտագործման բաժնի վարիչ Ժվանիա, ՆԳ ժողկոմի տեղակալ Տալախաձե), կրկին անդրադառնում են «Գեղիկի» հարցին⁶: Ընդունված որոշմամբ խոտհարքի տե-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 35, թ. 42, գ. 95, թ. 107:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, գ. 3, գ. 81, թ. 8:

³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, գ. 1, գ. 143, թ. 83: Տե՛ս նաև **Խաչատրյան Գ., Սուքիասյան Հ.**, Հայ-վրացական տարածքային-սահմանային խնդիրների կարգավորման գործընթացը 1920-1930-ական թվականներին // «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2015, էջ 87:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, գ. 168, թ. 20:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 37:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 35, թ. 38:

ղամասը («Բոգաս-Կիասանսկի կալվածքը») պետք է բաժանվեր երկու մասի: Սակայն դա համարվեց կիսալուծում, և որոշվեց, այդ վճռին զուգահեռ, խնդրագրով դիմել Անդրկենտգործկոմին՝ կազմելու հատուկ հանձնաժողով՝ տեղում վեճը լուծելու համար: Վրաստանի Բորչալուի և Հայաստանի Լոռու գավառների միջև «Գելիկ» խոտհարքային տեղամասի շուրջ վեճը վերջնակա-նորեն հանգուցալուծելու նպատակով Անդրկենտգործկոմի նոր հողային հանձնաժողովը 1924 թ. գարնանը մեկնեց սահմանավեճի շրջան՝ խոտարքա-յին տեղամասը հետազոտելու: Հանձնաժողովի աշխատանքներին ներգրավ-վեցին շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները, որոնց առջև խնդիր դրվեց ներկայացնել տնտեսական ծանրակշիռ հիմնավորումներ¹:

Վեճի վերջնալուծման նպատակով 1924 թ. մարտի 6-ին գումարվում է Անդրկենտգործկոմի հողային հանձնաժողովի նիստ: Որոշվում է հատուկ հանձնաժողով ուղարկել վիճահարույց վայրը՝ մեկական ներկայացուցիչ ամեն մի հանրապետությունից, որոնց տեղում միանալու էր կենտրոնի ներ-կայացուցիչը²: Ի վերջո, «Գելիկ» խոտհարքային տեղամասի մասին բոլոր նյութերը և տվյալները ստանալով, Անդրկենտգործկոմի հողային հանձնա-ժողովը, 1924 թ. ապրիլի 5-ին լսելով շահագրգիռ կողմերին և ծանոթանալով վիճելի տեղամաս գործուղված մասնագետների եզրակացությանը, փաս-տում է, որ չնայած այդ հողամասը մեծ մասամբ Հայկական ԽՍՀ տարածքում է, և Շահնագար գյուղի համար դրա կարիքը մեծ է, այդուհանդերձ շահնա-գարցիները 473 դեյատինից պակաս կստանային (ըստ նորմայի 1^{1/2} դեյա-տին մեկ շնչին)³: *Այդ որոշման համաձայն՝ հողահանդակի («Գելիկի» ընդ-հանուր մակերեսը հավասար էր 858 դեյատինի) կենտրոնական մասի 334 դեյատինից 150 դեյատին հատկացվում էր Վրաստանի միացյալ զինվո-րական կոպերատիվին, իսկ 184 դեյատին՝ Շահնագար գյուղին*: Արձա-նագրվում է, որ «Գելիկ» խոտհարքի հետ կապված առարկումներ չեն եղել ո՛չ Շահնագար գյուղի, ո՛չ Վրաստանի միացյալ զինվորական կոպերատիվի կողմից, և այսպիսով կայացված համաձայնությունը համարվել է վերջնա-կանապես վավերացված⁴:

Սակայն հողային վեճերը ոչ միայն վերջնականապես չեն հանգուցալուծ-վում, այլև նախկիններին ավելանում են նորերը: 1925 թ. փետրվարի 28-ին սամանագատման հարցը կրկին հայտնվում է օրակարգում: Այն վերաբերում էր Բորչալուի, Լոռի-Փամբակի և Ղազախի շրջանների միջև սահմանագծի ճշգրտմանը: Որոշվում է հարցը հանել օրակարգից և Ս. Կասյանին հանձնա-րարել այն համաձայնեցնել հատուկ հանձնաժողովի հետ⁵: Հողային-սահմա-

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 168, թ. 20:

² Տե՛ս նույն տեղում, թ. 37 հակ.:

³ 1 դեյատինը հավասար է 1,09 հեկտարի:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս ՀՍՍՀ, ֆ. 113, ց. 3, գ. 309, թ. 22:

վերակառուցուած են աւելի հին, բայց խոնարհած սրբատեղիներու վրայ: Կիղիցիկներու քարակոյտերուն մէջ գտնուած են մեծ չափի սրբատաշ քարեր, քանդակագարդ խոյակներ, խարիսխներ, սինի բեկորներ, որ ոմանց ոչ հայկական, շատ հաւանաբար վաղ միջնադարեան սուրիական քրիստոնէական փոքր կառոյցներ եղած ըլլալը ցոյց կու տան (նկարներ 3 եւ 4): Միւս կողմէ, որոշ կառոյցներ կը կրեն զուտ հայկական եկեղեցական կառոյցներու յիշատակներ: Այդպէս՝ Ներքի գիւղի կիղիցիկին մէջ գտնուած խաչքարը կը յիշեցնէ ԺԵ.-ԺԶ. դարու Վասպուրականի խաչքարերու արուեստը, տեղէն հանուելով տեղադրուած է կից աղբիւրի կամարաձեւ կառոյցի ճակատին (նկար 5 եւ 6): Նման փաստի մը կը հանդիպինք նաեւ Տերիւս լեռան վրայ գտնուող Արամոյի Ս. Ստեփանոս եկեղեցոյ մէջ, որ վերակառուցուած ըլլալով 1907 թուին, արտաքին պատին ագուցուած են հին կառոյցէն որոշ քարեր՝ խաչքարեր, որոնք հաստատապէս հայկական են (նկար 7):

Մօտիկ բնակավայրերու բնակչութիւնը տակաւին կիղիցիկներուն սրբութիւնը կը յարգէ եւ փոքրիկ ուխտեր կը կատարէ անոնց մէջ, պահպանուած փոքրիկ խաչքարի մը կամ յատուկ քարի մը վրայ, որ կրնայ տապանաքար մը ըլլալ: Դափնիներու խիտ պուրակով մը ծածկուած վայրը սրբացուած տարածութիւն մըն է: Սրբացուած ծառեր կրնան ըլլալ փշակաղնին, դափնին, ձիթենին եւ սօսին: Կիղիցիկներու մասին հրաշապատում աւանդութիւններ կը պատմուին, ոմանք ունին սրբավայրի տիրոջ՝ Կիղիցիկ պապուկի եւ արվանտի (վիշապ) մասին հաւատալիքներ: Ասոնք կը նկատուին սրբավայրին եւ մօտիկ աղբիւրին կամ ջրհորին ոգեղէն պահակները: Մարդիկ յարգանքով կը մտնեն տարածքէն ներս եւ այդ պուրակէն թարմ ցախ չեն կտրեր անասնոց համար:

Յայտնենք նաեւ, որ Անտիոքի շրջանին մէջ հայկական իւրաքանչիւր գաւառակ ունէր համաժողովրդական ուխտագնացութեան իր մէկ ու անփոփոխ վայրը, որ սովորաբար այդ տարածքներուն մէջ գտնուող կիսաւեր դարձած, վաղ միջնադարեան սուրիական եկեղեցական մեծ համալիր մըն էր: Այսպէս՝ Սուէտիոյ մէջ Ս. Խաչի համաժողովրդական տօնախմբութեան եւ ուխտագնացութեան վայրը Սուլթումու (Ս. Թովմաս) կոչուող տաճարական հսկայ կառոյցի մը աւերակն էր, Որոնդէսի հովիտի եւ Ռուճի շրջանին մէջ Ս. Աննայի տօնի համաժողովրդական ուխտավայրը Եագուպիէ գիւղի Ս. Աննան (նախապէս՝ Ս. Գէորգ) է, Նեպենիւս կամ Տերիւս լեռներու հայ գիւղերուն համար Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնի համաժողովրդական ուխտագնացութեան վայրը Արամո գիւղին մօտիկ Ս. Աստուածածին վանքն է Ս. Գէորգ եկեղեցիով, որ հաւանաբար ի սկզբանէ հայկական է: Ս. Աստուածածինը եռախորան ժայռափոր եկեղեցի է, իսկ Ս. Գէորգը՝ քարուկիր միանաւ պագիլիք: Զաքարիա Վարդապետ վանական համալիրին մասին յիշատակութիւն մը կը մէջբերէ 1466 թիւի յիշատակարանէ մը, որ իրեն տրուած է Արիստակէս Եպիսկոպոսին կողմէն Անտիոքայ Առաջնորդ կարգուած Եփրեմ վարդապետը, Քեսապի մէջ 1864-ին: Եփրեմ Առաջնորդ իբր յիշատակարանը ընդօրինակած է եղած հին Յայսմաւուրքի մը կողքէն:

Յիշատակարանը գրուած է «Ի յաշխարհս Շամեայ ի յերկիրս Սակունեանց ի վանս Սուրբ Աստուածածնի, ընդ հովանեաւ Սրբոյն Գեորգեայ դէմ յանդիման գեղջն յԱրամու, թիւն ԶԺԵ (1466) Թումա Եպիսկոպոս եւ Սիմէօն քահանայ Մանգեանց եկեղեցոյ»¹ (նկար 8 եւ 9): Քեսապի գիւղերուն համար Ս. Վարդավառի տօնին համաժողովրդական տօնախմբութեան եւ ուխտագնացութեան վայրը Պալլումի (Պարլում) կիսաւեր հնավայրն էր, որ կը գտնուի Կասիոս լեռան հարաւ-արեւելեան մէկ բլուրին վրայ (1250 մ.): Հելէնիստական ճարտարապետութեան բացայայտ ոճը կրող ակերակները կը վերագրուին V-VI դարերու քրիստոնէական տաճարին, որ, ըստ ուսումնասիրողներու, կառուցուած է Զեւսի տաճարին հիման վրայ²: Լատին դքսութեան շրջանին լեռը վերանուանուած է Պարլերի (Parleri), իսկ վանքը կը յիշուի իբրեւ Abbatian Montis Parleri³: Վանքին բուն անունը չի յիշատակուիր: Քեսապցիք տեղը կը կոչեն Պարլում կամ Պալլում: Անոնք ուխտավայրի անունով Ս. Վարդավառի տօնն ալ կը կոչեն Պալլում: 1939-ին Թուրքիա-Սուրիանոր սահմանագծումին հետեւանքով Պալլումը մնաց թրքական կողմ ու դադրեցաւ համաժողովրդական ուխտավայր ըլլալէ (նկար 10):

Այժմ՝ ինչպէ՞ս բացատրել, որ այս կիլիցիկները այսօր մեզի կը ներկայանան իբրեւ ակերակոյտեր միայն, ոմանք պահելով գերեզմանատան դեր միայն, ուր այդ ժամանակներէն ոչ մէկ տապանական վիմագրութիւն մնացած է: Ե՛րբ, ինչպէ՞ս եւ ինչո՞ւ եղած է անոնց քանդումը: Կը նշուին երեք գլխաւոր պատճառներ.

Ա. բնակչութեան բռնի տեղաշարժեր. պատմութենէն ծանօթ է, որ Անտիոքի եւ Լաթաքիոյ տարածքներու հայ եւ քրիստոնէայ բնակչութիւնը մեծ կորուստներու, կոտորածներու եւ տեղաշարժներու ենթարկուած է մանաւանդ Օսմանեան կայսրութեան շրջանին: Թուրքմէներ վերաբնակեցուած են Քեսապի հարաւ-արեւելեան Պայիր ու Պուճաք շրջաններուն մէջ, նոյնիսկ Քեսապի այժմու տարածքին մէջ⁴: Կար նաեւ քանդուած եկեղեցիները վերականգնելու

¹ **Զաքարիա վարդապետ Զմիւռնիացի**, Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից ստորագրութիւնը եւ գիւղացոց արդի վիճակը // «Միօն», 1 Յուլիս 1866, էջ 98-99:

² **Downey G.**, Ancient Antioch, Princeton University Press, New Jersey, 1963: Տեսած ենք Դոկտ. Բայրահիմ Նասհայի արաբերէն թարգմանութիւնը՝ **Կլանվին Տաունի**, Անթաքիա ալ-Գատիմա, Գահիրէ, 1967, էջ 46-47:

³ Հայր Ղեւոնդ Ալիշան կը գրէ. «Եւ միւս եւս վանք՝ որոյ ոչ յիշի սրբագան անուն, այլ կոչի վանք Պարլերոյ լերին (Abbatian Montis Parleri), որ իցէ թերեւս վանքն Պառլահոյ, այն գոր յիշատակեցաք ի թիւս վանորէից Սեւ Լերանց» (Միսուան, Վենետիկ, 1885, էջ 424): Ալիշանի ենթադրաբար արտայայտած այս միտքը որդեգրելով՝ շատեր նոյնացուցած են Կասիոսի Պալլումը Պառլահոյին հետ: Իսկութեան մէջ չկայ Պառլահոյ անուն վանք մը: Ատորերէն բառը, որ կը թարգմանուի «որախտ Աստուծոյ», կը տրուի Սեւ լեռան, որ յաչս քրիստոնէաներուն՝ իր բազմաթիւ եկեղեցական ու վանական կառոյցներուն համար սուրբ կը նկատուէր (**Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 38-39): Կասիոսը կը գտնուի Որոնդէսի գետաբերանին հարաւր ու մաս չի կազմեր Ամանոսեան լեռնաշղթայի Սեւ Լերան:

⁴ Տե՛ս Տոքթ. **Ինճեճիքեան Ա.**, Քեսապ եւ իր գիւղերը, **Չոլաքեան Յ.**, Քեսապ, հ. Գ., Հալէպ, 2004, էջ 47-48:

քմահաճ արգելքը տեղական օսմանցի պաշտօնեաներու կողմէ: Փաստ է նաև թուրք աղաներու ենթակայութեան անցած շրջաններուն հայոց գերեզմաններուն քանդումի պարագան, մանաւանդ իրենց հողերը կեավորներու թաղումներով չպղծելու մտայնութիւնը: Վերջին տեղաշարժերէն մէկը կը պատահի հաւանաբար XVIII դարու վերջերուն, 1799-1800 թուականներուն, երբ Նափուլէն Պոնափարտի բնակները արշաւած էին Եգիպտոս, իսկ անգլիական նաւատորմերը իշխելով ծովուն վրայ իրենց հսկողութեան տակ կը պահէին Միջերկրականի արեւելեան ափերը: Կը պատահի ծովամերձ բնակարաններու քրիստոնէայ բնակիչները այդ տեղերէն հեռացնելու օսմանեան հրամանը, որուն հետեւանքով կը լքուին Գարատուրանի ծովամերձ երեք սրբատեղիները՝ Ս. Սարգիս եկեղեցին, Ս. Ստեփանոս եւ Ս. Գէորգ կիղիցիկները: Նոյնը կը պատահի շրջանի միւս գիւղերու պարագային եւս: Շրջակայ բնակավայրերու բնակչութիւնը ապահովութեան նպատակներով կը հաւաքուի Քեսապ գիւղին մէջ, ուր հնագոյն թաղը Ս. Աստուածածին կիղիցիկի թիկունքին կը գտնուէր: Կիղիցիկին արեւելեան, արեւմտեան եւ հարաւային թաղամասերը կազմուած են XVII-XVIII դարերուն տեղի ունեցած տեղաշարժերու հետեւանքով:

Միայն Իպրահիմ Փաշայի Սուրիան գրաւելէն ետք (1830-1840) նախկին գիւղերէն ոմանք վերականգնած են կամաց-կամաց, Քեսապ աւանէն կամ այլ տեղերէ վերադառնալով նախկին բնակավայրերը, վերականգնելով միջավայրին մէջ գտնուող հայոց նախկին սրբատեղիներու նկատմամբ ունեցած իրենց ջերմեռանդութիւնը:

Բ. Բնական աղէտները եւս դեր ունեցած են անոնց լքումին մէջ: Միայն XX դարուն, մեր օրերուն, գետնասահքերը առին տարին քանի մը թաղամասեր՝ Քեսապի շրջանին մէջ, Գարատուրանի Վարի Թիթիգեան, Եարալեան, Գազագեան, Ղազարեան թաղերը՝ իրենց եկեղեցական, դպրոցական շէնքերով: Սողանքներ յաճախ երեւցած են շրջանին մէջ: Բնակիչները ցրուած են կամ նոր բնակավայր կառուցած են հեռու վայրերու մէջ: Գետնասահքի ենթարկուած վայրերը ժողովուրդը *խաղցուծ* (խաղցած՝ շարժած, սողանքի ենթարկուած) կը կոչէ: Այդպիսի գետիններու մէջ տակաւին կարելի է տեսնել նախկին բնակութեան հետքեր: Քանի մը կիղիցիկներ կը գտնուին յայտնապէս գետնասահքի ենթարկուած նախկին բնակավայրերու տարածքին մէջ կամ մօտիկ: Բնական աղէտներէն մէկը կը կոչուի Մուօհ՝ մահտարածամ: Կը յիշուի 1830-ական թուականներու Մուօհը, որ մեծաթիւ զոհերու պատճառ հանդիսացած է: Աւանդութիւնները կը յուշեն, որ Քեսապի եւ Գարատուրանի միջեւ Տընվըննիր (տնակներ) կոչուած բնակավայրը կը լքուի Մահտարածամի հետեւանքով: Հին կիղիցիկներուն հետքերուն եւ անոնց շուրջ գտնուող գերեզմաններուն անյայտութեան պատճառներէն մէկն ալ խիտ անտառի խեղերանքն է, հողի թանձր շերտով անոնց ծածկուած ըլլալը:

Գ. Յարանուանական հակամարտութիւնները. 1840-1850-ական թուականներուն շրջան մուտք կը գործեն քրիստոնէայ օտար քարոզչութիւնները, ամերիկացի եւ անգլիացի բողոքական միսիոնարները, հայ կաթողիկէ

վարդապետները Չմմառէն ու իտալացի փատերաները Իտալիայէն: Անոնք մեծ ընդունելութիւն կը գտնեն ոչ միայն Քեսապի, այլև ամբողջ Անտիոքի հայաշատ շրջաններուն մէջ: Խնդիրն այն էր, որ Օսմանեան իշխանութեան նախորդ դարերուն Հայ եկեղեցին մեծապէս կորսնցուցած էր իր թեմական իշխանութիւնները: Վերացած էին Անտիոքի, Լաւողիկէի եւ Աֆամիոյ առաջնորդութիւնները, անուանապէս կար Անտիոքի առաջնորդարանը, որ դարերէ ի վեր չունէր իր թեմակալը: Փաստօրէն տեղւոյն հայերը զրկուած էին հայ թեմական գերատեսչութեան մը իրաւ իշխանութենէն:

1813-էն ետք, երբ Բարձրագոյն Դրան կարգադրութեամբ կը վերացուին տեղական կառավարութիւնները եւ Անտիոքը կը մտնէ Հալէպի կուսակալութեան գերատեսչութեան տակ, կ'ենթադրուէր, որ Բերիոյ թեմի Առաջնորդարանը, Սոյո Կաթողիկոսին արտօնութեամբ, սկսէր զբաղիլ այս վիճակներով, տրուած ըլլալով որ Հալէպը Անտիոքի հայաբնակ գիւղերուն ամենամօտիկ թեմական կեդրոնն էր: Անուանապէս, Ռուճի հայութիւնը՝ Պէլլանի, Անտիոքի, Սուէտիոյ եւ Քեսապի հետ Սոյո Կաթողիկոսական Աթոռին պատկանող Բերիոյ (Հալէպի) Հայոց Առաջնորդական թեմի վիճակներ էին, իսկ Լաթաքիան, Ղնեմիէն ու Արամօն կը նկատուէին Երուսաղէմի Պատրիարքական վիճակներ:

Այս պարապութենէն կ'օգտուին օտար միսիոնարութիւնները, որոնք 1840-ական թուականներու կէսերուն՝ շրջանին հայաբնակ գիւղերը կը թափանցեն: Մանաւանդ Քեսապի, Անտիոքի, Պէլլանի եւ Սուէտիոյ շրջաններուն մէջ բողոքական եւ կաթոլիկ քարոզչութիւնները շատ արագ կերպով մեծ յաջողութիւններու կը հասնին ամէնէն առաջ գիւղացիներու հիմնական պէտքերուն հասնելու փաստով: Այսպէս՝ անոնք հիմնեցին մանչերու եւ աղջկանց առանձին, մինչեւ իսկ մեծահասակ կանանց ու այր մարդոց գիշերային դպրոցներ: Լքուած գիւղերը յանկարծ ունեցան դպրոց ու եկեղեցի: Ժողովուրդը մեծապէս կը տանջուէր ծանր հարկերէն եւ պետական մարդոց եւ աղաներու խժոժութիւններէն, մինչ նորեկ օտարները պետական բարձրագոյն աստեաններուն քով ազդեցութիւն ունէին եւ աղայական շրջանակին մէջ ազդեցիկ միջամտութիւններ կատարելու կարողութիւն: Անոնք կրցան ժողովուրդին ապահովութիւն ներշնչել: Աղքատախնամի եւ բժշկական մեծ ծառայութիւններով՝ կրցան սիրաշահիլ աղքատ զանգուածը ու գիւղատնտեսութեամբ կամ առեւտուրով զբաղող ընտանիքներուն առջեւ գործի հնարաւորութիւններ բացին:

Օտարադաւանները Օսմանեան պետութենէն շուտով անկախ համայնքային իրավիճակ (միլլէթ) կը ստանան: Նախկին գիւղական համայնքային դրութիւնը կը քայքայուի: Համայնքները կը վերակազմուին ոչ թէ ըստ բնակավայրի, այլ՝ ըստ դաւանանքի, յարանուանական հիմունքով: Նորակազմ համայնքներու եւ հայ առաքելական եկեղեցւոյ հաւատարիմ մնացած հատուածներուն միջեւ կը սկսի թէժ հակամարտութիւն մը յատկապէս տեղական թաղային կիղիցիկներու եւ անոնց շուրջ գտնուող գերեզմանատուններուն շուրջ:

Եկեղեցւոյ տիրելու փորձերը կը յանգին կա՛մ փլուզման, կա՛մ լքման: Գարատուրանի Մանճիկեան-Գալէմտէրեան թաղի կիղիցիկը 1858-ին կը

վերանորոգուի, բայց երկար ատեն կանգուն չի մնար: Գիւղի մեծաւոր, կաթոլիկութեան յարած Յովհաննէս Ղալանտէրը կը քանդէ եկեղեցին: Վեճերը կը սաստկանան: 1862-ին Պոլսոյ Ազգային Վարչութեան միջոցով յատուկ հրամանագիր (ֆէրման) կը բերուի եկեղեցւոյ վերանորոգութեան համար, բայց Օրտուի միւտիքը (կառավարիչ) արգելք կը հանդիսանայ՝ նորադաւաններուն կամքը կատարելու համար: Ահա թէ ինչ կը գրուի այս մասին. «Խալատուրան¹ գիւղը, որ Քեսապէն մէկուկէս ժամ հեռու է ըսինք, 50 տուն հայ լուսաւորչական ժողովուրդ կան, որոնք ունին իրենց սեպհական ազգային եկեղեցին, զոր վեց տարիէն ի վեր նորոգած էին: Սոյն եկեղեցւոյն կից ու իբր անոր բակին միջովը հռովմէական հայու մի տունը կայ, Ղալանտէր Յովհաննէս անուն: Այս անձը բաւական խօսքի տէր ըլլալով, հակառակութեան ոգւոյ շարժեալ փլցնել կու տայ նորոգուած եկեղեցին ի նախատինս հայոց. կը բողոքեն աղքատ ժողովուրդք բայց մտիկ ընող չկայ: Քանի մի առաջնորդներ եկան գացին, եւ եկեղեցւոյ շինութեան հրամանագրին զօրութեամբը, զոր Տէր Գէորգ անուն քահանայն Պօլիս գացած ու հանել տուած էր 1862-ին Ազգային Վարչութեան միջոցով, ոչ ոք կարողացած է իրաւունքը մտիկ ընել տալ Օրտու գիւղի բռնաւոր միւտիք Մէհմէտ աղային, որ 40 տարիէ ի վեր միւտիքութիւն կ'ընէ այն կողմերը: Ասիկա հռովմէականաց կողմը պաշտպանելով եւ ակնածելով անոնցմէ՝ Բերիոյ կողմէն միշտ օգնութիւն գտնելուն համար, բնաւ ամենեւին հայոց իրաւանցը ունկնդիր չ'ըլլար, եւ անոնց բողոքներուն միշտ ունկնախից է: Խեղճ հայը այս օրուան օրս 50 տնուոր առանց եկեղեցւոյ մնացած է մէկ հռովմէականի մի հակառակութեան երեսէն»²:

Նոյն գիւղի Սաղտրճեան թաղի կիղիցիկը կը գործէր մինչեւ XIX դարու կէսերուն: 1860-ական թուականներուն, կից թաղը ամբողջ բողոքականութեան կը յարի, նոյնպէս շրջակայ կալուածներուն քեսապցի կալուածատէրերը: Եկեղեցին եւ կից գերեզմանատունը կռուախնձոր կը դառնան: Առաքելականները չեն ընդունիր, որ անդրոշմ մնացած բողոքականները թաղուին գերեզմանատան մէջ, բողոքականներն ալ չեն ուզեր, որ միւսերը իրենց թաղումները հոն կատարեն: 1880-ականներուն բողոքականները կ'ունենան անջատ գերեզմանատուն, իսկ կաթողիկէներն ու առաքելականները՝ համատեղ: Կիղիցիկը կը քանդուի, բայց մինչեւ 1947-ի հայրենադարձութիւն՝ հոն մարդիկ պարբերաբար մատաղ կը զենէին: 1997-ին գետնասահքը թաղեց ինչ որ մնացած էր անկէ, խորանը եւ մէկ երկու տապանասալ, հայատառ թրքերէն արձանագրութեամբ:

Քեսապի այժմու Ս. Աստուածածին եկեղեցին այն ատեն փոքրիկ միանաւ կիղիցիկ մըն էր: Առաջին վիմագիր արձանագրութիւնը կու գայ 1809 թուականէն.

¹ Գալատուրան կամ Գարատուրան: Հեղինակը հոս նկատի ունի միայն Ս. Աստուածածին եկեղեցւոյ շուրջ գտնուող թաղերը: Գարատուրանի վարի թաղերը ունէին իրենց կիղիցիկները:

² **Չաքարիա վրդ. Զմիւռնիացի**, Թղթակցութիւն Լաթաքիոյ // «Միօն», 1866, էջ 152:

«ԿԱՍՕՔ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ(ԵԱՍ)Բ Ա(ՍՏՈՒ)ԾՈՅ ՆՈՐ/ՈԳԵՑԱԻ ԺԱՍՍ ՍԵԿ(՞) Ս(ՈՒՐԲ) ՅԵԿԵ(ՂԵ)ՑԻՍ Ս(ՈՒՐԲ)/ ՅԱ(ՍՏՈՒԱ)ԾԱԾԻՆ Ի ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ Ի /ՌՄԾԸ (1809)ԻՆ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈ(Ի)ԹԵ(Ա)Ն Տ(ԵԱՌ)Ն /ԿԻՐԱԿՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ԱՌԱՋՆ(ՈՐԴ)Ո(Ի)ԹԵ(Ա)Ն ՄԻՔԱ(Յ)ԷԼ ՎԱ(Ր)-Դ(Ա)ՊԵՏԻՆ, ՈՐ ՊԱՏՃԱՌ ԵՂ(Ա)Ի»¹ (նկար 11): Բողոքական նորադասանները այստեղ եւս տիրելու փորձ կը կատարեն: Տ. Մարկոս քահանան բողոքականութեան կը յարի: Մայր համայնքը թէւ եկեղեցին փրկել կրնայ, բայց գերեզմանատան շուրջ վեճերը կը շարունակուէին: Ծնունդով բողոքական մեռելները միեւնոյն գերեզմանատան մէջ թաղելու պարագան կը յուզէր մայր համայնքը: Կար նաեւ տեղի նեղութեան պարագան: Գերեզմանատունը կը տեղափոխուի: 1880 թուին տ. Ստեփան քին. Գապագեանի ջանքերով նախկին կիղիցիկը հիմնովին կը վերանորոգուի իր մէջ առնելով գերեզմանատան տարածքն ալ ու կը դառնայ երկու շարք փայտեայ սիւներու վրայ կանգնած, հողէ տանիքով, եռանաւ ու եռախորան եկեղեցի մը: Եկեղեցւոյ հարաւային մայր դրան վրայ կայ արձանագրութիւն. «ԱՅՍ Է ԼՈՒՍԱԻՈՐ-Չ/ԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱ/ՅՈՑ Ս(ուրբ) ԵԿԵՂԵՑԻ, ՆՈՐՈԳԵՑԱԻ ՅԱՄԻ Տ)ԵԱ)ՌՆ/ 1880 Ի ՔԷՍԱՊ»: Պատին արտաքին երեսը անսուաղ էր: Եկեղեցւոյ շրջափակին մէջ կը կառուցուին երիցատունը եւ դպրոցը: Բակի գերեզմանոցի աճիւնները կը հաւաքուին մէկ տեղ: 1903-ին կը կառուցուի եկեղեցւոյ արեւմտեան պատի հարաւային զանգակատունը, կայ արձանագրութիւն. «ՇԻՆԵՑԱԻ ԱՅՍ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆՍ ԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ 1903 ՀՈԿՏ. 20»: 1909-ի Աղէտին միակ եկեղեցական շէնքն է, որ հրոյ ճարակ չի դառնար: Համալիրը 1960-ականներէն ի վեր կ'ենթարկուի ներքին եւ արտաքին մեծ բարեփոխութիւններու, եկեղեցին կ'օժտուի երկրորդ զանգակատունով ու կեդրոնի գմբէթով եւ Հալէպի սղոցարաններէ բերուած քարով կ'երեսպատուի:

Նախկին եկեղեցիներուն տիրելու կամ զանոնք քանդելու նորադասաններու վարքագիծը կը տեսնուի Քեսապի շրջանի մերձակայ հայկական միւս բնակավայրերուն մէջ եւս: Այսպէս՝ լատին քարոզչութիւնը Ճարր Շուղուրի Գնիէ գիւղ կը մտնէ 1878 թուականին: Կը լատինանայ գիւղի Ս. Կիպրիանոս եկեղեցւոյ տ. Մեսրոպ քին. Նազլեանը եւս: Մայր եկեղեցւոյ հաւատարիմ մնացած քանի մը ընտանիքները իշխան Հաննէի գլխաւորութեամբ քանի մը տասնամեակ յամառ պայքար կը տանին եկեղեցին պահելու համար: Բերիոյ Թեմի առաջնորդարանի եւ Պոլսոյ պատրիարքարանի միջոցով դատական գործեր կը բացուին: Լատինները կը յաջողին դատական գործերը իրենց ի նպաստ դարձնելու: Լատինները 1906-ին հիմնայատակ կը վերացնեն Ս. Կիպրիանոս եկեղեցին եւ հայոց հին գերեզմանատունը՝ տարածքը առնելով լատինաց վանքին շրջագիծէն ներս²:

¹ Քորթոշեան Բ., Քեսապի շրջանի պատմական յուշարձանները, ՀՀՈՒ հիմնադրամ, Երեւան, 2014, էջ 8:

² Տե՛ս **Չոլպեան Յ.**, Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), Անթիլիաս, 2006, էջ 122-148:

Նորադարձանները կը սկսին կառուցել իրենց նոր եկեղեցիները. ասոնք արդէն թաղային փոքրիկ եկեղեցիներ չեն, այլ նոյն յարանուանութեան պատկանող քանի մը գիւղերու կամ ամբողջ շրջանի բնակչութեան եկեղեցիները: Բողոքական առաջին համայնքը կը ստեղծուի Քեսապի մէջ 1853-ին, 1859-ին կը կառուցէ աւելի քան հազար հոգի ընդունող իր մեծ եկեղեցին, երկրորդ համայնքը կը կազմուի Գարատուրան՝ 1873-ին, երրորդը՝ Էքիգօլուք՝ 1882-ին, չորրորդը՝ Քէօրքիւնէ՝ 1898-ին¹: Կաթողիկէ համայնքը կը ստեղծուի 1957-ին, համայնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կը կառուցուի 1860-ին, ոչ փոքր քան բողոքականաց եկեղեցին: Շրջանի բոլոր կաթողիկէները միաւորուած են մէկ համայնքի մէջ²: Լատին Թէր Սանթ առաքելութեան իտալացի վարդապետները կ'երեւին շրջանին մէջ ու 1904-1946 երկու լատինաձէս կաթողիկէ համայնքներ կը կազմակերպեն՝ կեդրոն ունենալով Քեսապի եւ Վարի Պաղճաղազի իրենց վանքերը³: 1946-ին Կարտինալ Աղաճանեանի ջանքերով լատինաձէս այս համայնքները կը լուծուին հայ կաթողիկէ համայնքին մէջ: Քեսապի լատինաց վանքը կ'անցնի Քեսապի կաթողիկէ հայոց ժողովրդապետութեան սեփականութեան, իսկ Վարի Պաղճաղազ գիւղի վանքը՝ Հալէպի կաթողիկէ Առաջնորդութեան՝ իբրեւ ամառանոց:

Ամբողջ շրջանի առաքելական համայնքը կը սահմանափակուի միայն Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցիով եւ մէկ քահանայով: 1890-ին Մկրտիչ կթղ. Քեֆսիզեան Գարատուրան կ'այցելէ ու տեսնելով որ վերի թաղի կիղիցիկի դատական խնդիրը շատ պիտի երկարի՝ կը թելադրէ, որ գիւղացիները նոր եկեղեցի մը կառուցեն ամբողջ գիւղին համար: 1890-ին կը կառուցուի Գազազեան թաղի Ս. Աստուածածին եկեղեցին, կ'ունենայ քահանայ⁴:

Թաղային միւս կիղիցիկները կա՛մ ամբողջապէս կը լքուին, կա՛մ ալ գերեզմանոցներու դերը կը շարունակեն կատարել:

¹ Գարատուրանի նախկին ժողովարանի փոխարէն 1908-ին կը կառուցուի վերջին եկեղեցին: 1909-ի Աղէտին կը հրկիզուին Քեսապի եւ Էքիգօլուքի եկեղեցիները: 1909-ին կը սկսի Քեսապի Ս. Երրորդութիւն, իսկ 1911-ին Էքիգօլուքի Էմմանուէլ եկեղեցիներու կառուցումը: Երկուքն ալ կիսաւարտ կը մնան Մեծ եղեռնի պատճառով: Առաջինը կ'աւարտի 1970-ին, իսկ երկրորդը՝ 1956-ին: Քեսապի եւ շրջակայքի հայ աւետարանական համայնքներու կազմութեան ու եկեղեցիներու մասին տե՛ս **Խրոբեան Տ. Ճ.**, Ոսկեմատեան Մերձ. Արեւելքի Հայ Աւետ. Միութեան (1848-1948), հ. Ա., Պէրուլթ, 1950, էջ 347-374, Վեր. **Թիլքեան Կ.**, Իննսունհինգամեակ Քեսապի Հայ Աւետ. Եկեղեցոյ (1848-1948), Պէրուլթ, 1948:

² Քեսապի մէջ Հայ կաթողիկէ համայնքի կազմութեան եւ պատմութեան մասին տե՛ս **Աղամեան Հ. Պ.**, Անտիոքի Անտոնեան Թեմը Եւ Քեսապի Ու Շրջակայքի Հայ Կաթողիկէ Առաքելութիւնը (1851-1946) // «Աւետիք», 1946, թիւ 7-8, էջ 148, **Շերամեան Կ. Վ. (Պեօճիքեան Կոմիտաս** վրդ.), Պատմական Ուրուագիծ Քեսապի Հայ Կաթողիկէ Համայնքին // «Զուարթնոց», 1984, թիւ 5, էջ 35:

³ Վանահայր Սապաթինո տել Կայծոյի ջանքերով 1927-ին կ'ամբողջանայ Քեսապի լատինաց վանքի շինարարութիւնը՝ եկեղեցի, երիցատուն եւ դպրոց:

⁴ 1942-ի գետնասահքին եկեղեցին կը կործանի: 1962-ին կը կառուցուի նորը, որ 2009-ին հիմնովին կը վերանորոգուի:

Այսուհանդերձ հին կիդիցիկներէն ոմանք ժողովուրդի հոգեւոր կեանքէն դուրս չեն ելլեր: Մինչեւ այսօր ոմանք խնդրարկու այցելուներ ունին, ուխտավայրեր են: Յիշենք հետեւեալները.

Գարատուրանի ծովափնեայ հնավայրի հարաւային պատի արեւելեան անկիւնին, մինչեւ այսօր գործող գերեզմանատան տարածքին մէջ, կը գտնուի *Ս. Գէորգը*: Խորանը եւ գաւիթի պատերը տակաւին կիսականգուն վիճակի մէջ են: Ներքին պատերը մինչեւ հիմք քանդուած են: Մասամբ կանգուն են պարիսպի արեւելեան եւ հարաւային պատերը: Որպէս շինանիւթ գործածուած է տեղական կոշտ կտրուած քարը եւ կրաշաղախ: Ունի դէպի արեւելք երկարող 3x7 քառ. մէթր տարածութիւն: Խորանը կը գտնուի արեւելեան պատին կեդրոնը, փոքրիկ պատուանդանի մը վրայ: Նոյն պատին աջ կողմը պարզ գետաքարի մը թեթեւօրէն յղկուած մակերեսին վրայ կը նկատուի հայերէն արձանագրութիւն մը: Չորս տողանի արձանագրութիւն է, իւրաքանչիւրը շուրջ 18 սմ. երկարութեամբ: Անոր կողքին կայ 9 սմ. բարձրութեամբ հաւասար թելերով փոքրիկ խաչ մը: Վերձանման քանի մը փորձեր կատարուած են: Վերջերս Բաֆֆի Քորթոշեան գրչագիրը աւելի ամբողջական վերձանումը ցոյց կու տայ. ...*(կ)ամովն(՞) գեկե(դե)ց(ի)ս(՞)...* *անուն սրբոյն Գէորգայ, յ(ի)շ(ա)տ(ա)կ հոգոյ մ(ա)հ(տես)ի Աւետիքին ՌՄԺԹին (1770)*¹ (նկար 12): Կը նկատուի շրջանի հնագոյն հայերէն վիմագիր արձանագրութիւնը:

Ս. Գէորգի հիւսիսարեւմտեան պարսպապատ տարածքը գերեզմանատուն է: Մինչեւ օրս կը շարունակուի մնալ Ծովու թաղի հայոց գերեզմանատունը: Նախորդող դարերու տապանաքարեր չեն պահպանուած: Քարակոյտերու մէջ երեւցող բոլոր տապանաքարերը կու գան 1920-ականներէն ետք (նկար 13):

Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութիւնը 1960-ական թուականներէն ետք Վարդավառի տօնին հոս քանի մը տարին մէջ մը կը կազմակերպէ ուխտագնացութիւն, կը կատարուի յատուկ պատարագ:

Սիրելի սրբավայր է վերին Գարատուրանի մէջ Մանճիկեան-Գալէմտերեան թաղի *Կիդիցիկը*, որ կը կրէր *Ս. Աստուածածին* անունը: Տեսանք, որ կը վերանորոգուի 1858-ին եւ կաթոլիկութիւն դաւանած Յովհաննէս Ղալամտերի ձեռամբ կը քանդուի 1862-ին: Ունի 7x3 մ. տարածութիւն եւ խճասալիկներով յատակի պատառիկներ: Պահպանուած է պատերուն եւ արեւելեան կողմի կիսաբոլոր խորանի հիմքի մէկ-երկու շարքի քարերը: Անկէ մնացած է պարզ գետաքարի վրայ ցցուն փորուածքով պարզուկ խաչքար մը (նկար 14): Շուրջը կայ բաւական ընդարձակ դափնիներու պուրակ մը, որ հաւանաբար հին գերեզմանատան տարածքն է: Մնացած են երկու տապանաքարեր, մէկը շարդուած, կը կրէ 1864-1888 թուականը, իսկ միւսը անվնաս մնացած է՝ «*Մանճիկեան Օհաննէսըն օղլու Կարապետին տօղիշը 1842, վէճաթը 1885 Փեւր. 4*» (Մանճիկեան Օհաննէսին որդի Կարապետին ծնունդը 1842, մահը՝ 1885 Փետ-

¹ Քորթոշեան Բ., նշվ., աշխ., էջ 21:

րուար 4)¹: Տապանասալը վերջերս ամրացուած է պեթոնէ քառանկին պատուանդանի մը վրան: XIX դարու վերջաւորութեան երկու համայնքները՝ առաքելական եւ կաթողիկէ, կը համաձայնին ու նոր գերեզմանատուն մը կ'ունենան գիւղէն քիչ մը հեռու տեղ մը (Սուսիը): Կիղիցիկը կը մնայ վերի թաղերու բոլոր հայոց սիրելի ուխտավայրը, ուր մատաղ կը զենուի ու *կիղիցիկ սայուր* կը բաժնուի հնավայրին մէջ աճած փշակաղնիի շուքին: Այստեղ 1981-ին թաղեցիք պեթոնէ խորան մը կը շինեն ի յիշատակ եկեղեցոյ մօտիկ հնամենի ջրհորին մէջ արկածեալ գոհերուն: Աստուածնայ տօնի առթիւ այստեղ կաթողիկէ համայնքը ուխտի կու գայ եւ կը հետեւի Պատարագին: Կաթողիկէ հայոց կողմէ հնավայրին տիրելու դատերը ատենը մէջ մը կը նորոգուին:

Ժողովուրդին մէջ հաւատք կայ, որ կիղիցիկը ունի իր պահապանները, ինչպէս երագներու մէջ յայտնուող *Կիղիցիկ Պէպէօր* (Կիղիցիկ պապուկը) եւ անոր ընկերակից եղջերաւոր օձը կամ *արվանտը* (վիշապը), որ իբր կը բնակի հնավայրի քարքարուտներուն ու մօտիկ *գապ* կոչուող աղբիւրին ընդերքը: Ոչ ոք կը համարձակի սրբավայրի ծառերէն ցախ կամ փայտ կտրել կամ անոր սահմանները գողնալով իր տարածքը մեծցնել:

Միւսը՝ *Ս. Մարութ*, կը գտնուի Քեսապի եւ Ներքի գիւղի միջեւ, Մամաս կոչուող վայրին մէջ, փշոտ կաղնիներու խիտ պուրակով մը ծածկուած ժառոտ բլուրի մը վրայ: Ան արեւմտեան պատին վրայ երեք խորշեր ունի, կեդրոնի խորշը խորանաձեւ է, իսկ կողմի երկու խորշերը՝ քառանկին: Տարածքը պարսպապատ է, մուտքը՝ արեւելքէն: Այժմ մեծ թիւով այցելուներ ունի:

¹ Ծանօթ չըլլալով այս եկեղեցոյ պատմութեան՝ անոր աւերակներուն առջեւ օտար հնախոյզեր ոչ ճիշդ եզրակացութիւններ ունեցած են, թիրիմացաբար գայն կապելով բիւզանդական շրջանին: Ֆրանսացի հնախոյզեր կը գրեն. «Կասիոսի հիւսիսային գառիթափին վրայ (պէտք է ըլլայ հարաւային) գտնուող Գարատուրան գիւղին մէջ ծառագարդ պուրակով վայր մը կայ, որ կը վայելէ շրջանի հայերուն մասնաւոր հոգածութիւնը եւ ուր ոչխարներ կը գոհուին անոնց կողմէ: Ճիշդ այս վայրին մէջ կրցանք գտնել բիւզանդական շրջանէն մնացած եկեղեցիի մը հետքերը: Իր կառոյցէն մնացած է միայն հիմնաքար մը փոքր չափագրութիւններով, երկարութիւնն է 9.50 մ., իսկ լայնքը՝ 6.25 մ.: Միակ գաւիթը կը վերջանայ արեւելեան ուղղութեամբ կիսաշրջանակաձեւ ծայրամասով: Տեղոյն վրայ գտանք խճաքարի մաս մը, զանազան խորանարդաձեւ գունաւոր քարերով (սեւ, դեղին, ձերմակ, կղմինտրագոյն), որոնք ազուցուած են թանձր շաղախի վրայ: Գտանք նաեւ քար մը բարձրաքանդակ խաչով, որուն չափերն էին 20 սմ. բարձրութիւն եւ 16 սմ. լայնք: Մօտակայ դաշտին մէջ գտնուեցան բազմաթիւ հին անօթներ եւ բիւզանդական շրջանէն դրամներ: Արդէն անցեալին այս վայրին մէջ գերեզմանաքար մը եւ տապանաքարի մը մէկ կտորը նկատուած է (**Jalabert L. et Monterde R.**, *Inscriptions Greques et Latins de Syrie*, t. III, Paris, 1953, *Inscriptions n° 1232 et 1233*): Նոյնը տեսած ենք **Սաասուէ Կ.**, Հայերու Ներկայութիւնը Սուրիական Ծովափին Վրայ // «Գեղարդ» տարեգիրք, գիրք Բ., Հայկէպ, 1976-1978, էջ 273): Օտար հնախոյզերը չափագրութեան մէջ նկատի առած են մատուղը իր շրջափակին մէջ առնող յետագային շինուած ցածկէկ պատը եւ ոչ բուն մատարան հիմքի պատը: Պէտք է նշել, որ Գարատուրանի բոլոր կիղիցիկներն ալ, հին թէ՛ նոր, ունին նոյն ձեւը. «Գաւիթը կը վերջանայ արեւելեան ուղղութեամբ կիսաշրջանակաձեւ ծայրամասով»: Նշուած տապանաքարերն ալ վերը նշուած հայատառ թրքերէն տապանաքարերն են ու կը վերաբերին XIX դարուն: Ասոնք լուրջ տուեալներ չեն կրնար ըլլալ Գարատուրանի այս եւ միւս կիղիցիկները բիւզանդական համերելու (տե՛ս **Չոլաքեան Յ.**, Քեսապ, հ. Ա., էջ 554, ծանօթ. թիւ 51):

Հրաշքներ կը պատմուին անոր մասին: Ուխտաւորներ հոն գոհեր կը մատուցեն, ուխտեր կը կատարեն, գումար կը դնեն խորանին: Անհաւանական չէ, որ ան հին դամբարանի մը մնացորդը ըլլայ: Ուխտավայրը կը գտնուի Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցոյ թաղականութեան խնամքին տակ (նկար 15 եւ 16): Արեւելեան մուտքով նման ժայռափոր դամբարան մը կայ Ներքի գիւղի մէջ: Մէկ արտաքին պատով երկգմբէթ իրար կից երկու դամբարաններ կան նաեւ Գարատուրան Գիւղի ծովափին, Ս. Սարգիս աւերակ եկեղեցոյ մօտիկ: Ասոնք սրբավայրեր չեն նկատուիր:

Ներքի գիւղը Ս. Աստուածածին կիղիցիկը կը գտնուի աղբիւրին առջեւ, վիթխարի սօսիին մօտիկ գերեզմանատան տարածքին մէջ: Սրբավայրին հիմքերը, խոյակ մը, սինի մը պատուանդանը տակաւին կ'երեւին: Սրբավայրին պատկանող խաչքարը տեղադրուած է կից աղբիւրի կառոյցին մէջ: Ան յստակ կերպով ԺԵ.-ԺԶ դարու հայկական խաչքարային արուեստի յատկանիշները ունի: Ըստ աւանդութեան՝ ներկայիս Քեսապ-Ներքի գիւղ տարածքին առաջին բնակավայրն է ասիկա: Յետագային բնակիչները ապահովութեան նկատառումներով կը մեկտեղուին Քեսապի մէջ: Ժողովուրդը առ այսօր Քեսապը *Գիւղ* (Գիւղ) կը կոչէ, իսկ նախկինը՝ *Նըրքը Գիւղ* (Ներքի Գիւղ) կամ *Էսկիւրան* (թրք. Էսկի Էօրան՝ հին գիւղ): 1939-ի սահմանագծումին հետեւանքով՝ Քեսապի համաժողովրդական ուխտագնացութեան վայրը՝ Պալլում (Պարլում), կը մնայ Թուրքիա: Քեսապի Առաքելական եկեղեցին կ'որոշէ համաժողովրդական ուխտագնացութեան օր ընել Ս. Աստուածածնայ Վերափոխման Երկուշաբթին ու ուխտագնացութեան վայր կը նշանակէ Ներքի Գիւղի Կիղիցիկը: Կիրակի երեկոյ կը կատարուի մատաղներու զենում, կը սկսին մինչեւ լոյս տեւող ժողովրդական հանդէսներ, Երկուշաբթի կը պատարագէ Բերիոյ թեմի առաջնորդը եւ կ'օրհնէ հերիսան: 1959-ին, անոր կից կառուցուեցաւ Ս. Աստուածածին մատուռը. ունի երկաթ-պէթոնէ կառոյց: Կը գտնուի Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցոյ թաղականութեան խնամքին տակ (նկար 17):

Գիւղի առաքելական եւ կաթողիկէ համայնքներու ընտանիքները իրենց մեռելները կը շարունակեն թաղել հին կիղիցիկի տարածքին մէջ գտնուող գերեզմանատան մէջ: Աւետարականները կը գործածեն Քեսապի գերեզմանատունը:

Ներքի գիւղէն արեւելք, Թուրքիոյ սահմանագիծին մօտիկ կը գտնուի ուրիշ կիղիցիկ մը՝ *Միվտիկի* կամ *Միպտիկէն*: Բարբառային անունը կը բացատրուի իբրեւ Սուրբ Տիկին, որ համարժէք է արաբերէն *Մէխտաթ Ազրաս* անուան (Ս. Կոյս): Սրբատեղին փոքրիկ բլուրի մը վրայ գմբէթաւոր փոքրիկ կառոյց մըն էր, ճիշդ սահմանին վրայ, միակ շէնքը այս ամբողջ ամայութեան մէջ: Վերջերս թուրք սահմանապահները ուժանակով պայթեցուցին մատուռը, հիմքէն քանդեցին զայն: Լաթաքիոյ յոյն օրթոտոքսները իբրեւ ուխտավայր կառուցեցին երկաթ-պոթոնէ նոր մատուռ մը, սահմանէն քիչ հեռու: Լաթաքիոյ յոյները հոս Ս. Աստուածածնայ Վերափոխման Կիրակի օրը կը կազմակերպեն համաժողովրդական ուխտագնացութիւն: Կը պատարագէ

յունաց առաջնորդը: Միպտիկէնի ուժին կը հաւատան շատերը՝ հայ, յոյն եւ այլազգի: Աւանդութիւններ կը պատմուին անոր մասին:

Քէօրքիւնէ գիւղին հարաւարեւելեան կողմը մինչեւ ԺԹ. դարուն սկիզբը կանգուն եղած է Ս. Ստեփանոս կիղիցիկը, որուն ատերակներուն շուրջ գիւղացիք տակաւին կը թաղեն իրենց մեռելները: Գիւղի տարեցներէն Սիրվարդ Աբելեանը, ծնեալ Չելեպեան, կը պատմէր, թէ իր մեծ հօր հայրը՝ Ստեփանոս անուն, եղած է մատրան վերջին եկեղեցականին՝ Տէր Ստեփանոսի մտերիմ բարեկամը: Իբր Տէր Ստեփանոս կը ցաւի եղեր իր խեղճացած հօտին ու անջքացած եկեղեցոյ համար: Ան խնդրած է գիւղացի Ստեփանոսէն, թէ «երբ մեռնիմ, զիս եկեղեցոյ դուռը թաղեցէք»: Սուրբ մարդ նկատուած է Տէր Ստեփանոսը: Ծերունի հոգեւորականը կ'անյայտանայ: Գիւղացիք ի գուր կը փնտռեն զինք երկար ժամանակ: Հաւատք կայ, թէ ոգեղինացած դէռ կ'ապրի այդ սուրբ վայրին մէջ, ուր ոմանց կը յայտնուի քունի ընթացքին, ճիշդ Գարատուրանի վերի թաղի սրբավայրին մէջ ապրող Կիղիցիկ Պապուկին պէս:

Տէր Ստեփանոսէն ետք մատուռը ուրիշ եկեղեցական չ'ունենար: Կը լքուի, կը քանդուի, բայց իր սրբութիւնը չի կորսնցներ: ԺԹ. դարու կիսուն, գիւղը կը վերականգնի, թէև շատ ընտանիքներ հոս միայն ամրան եղանակին կը յայտնուին: Բնակիչները մեծ մասով բողոքականութեան կը յարին: Կիղիցիկի տարածքին գերեզմանատունը կը շարունակէ գործածուիլ երկու համայնքներուն կողմէ: Գիւղի փոքրաթիւ առաքելականները չեն կրնար վերականգնել եկեղեցին:

Կիղիցիկի տարածութեան մէջ քանի մը փշոտ կաղնիներ կան: Անոնցմէ ցախ ու փայտ կտրելը մեղք կը նկատուի: Կը հաւատան, որ փորձանքներ կը բերէ, անբուժելի հիւանդութիւններու պատճառ կը դառնայ, նոյնիսկ օրինակներ կու տան: Անասուններու համաճարակէ ու այլ հիւանդութիւններէ վախցած գիւղացիք իրենց այծերու հօտերը կը քշէին ուխտատեղի: Խորանին պատուանդանին վրայ ցատկոյ առաջին կենդանին մատաղցու կ'ընտրէին ու տեղոյն վրայ կը զենէին: Ասիկա հօտը հիւանդութիւններէ կը փրկէր: Խորանին կից գտնուող փշոտ կաղնին այժմ վիթխարի ծառ է, ցողունը երկու գրկաչափ հաստութիւն ունի: Աճման ընթացքին խորանի պատը հետզհետէ մնացած է ցողունին մէջ: Անոր մէջ կիսովին թաղուած քանի մը քարեր տակաւին կ'երեւին ծառի մէկ հասակ բարձրութեան բունին վրայ: Մէկուն տակ գոյացած խոռոչին մէջ ուխտաւորներ մետաղադրամներ կը դնեն, իսկ ծառին տակ ուխտի աքլորներ կը մորթեն: Կիղիցիկի գօրութեան հաւատացած են նաեւ ալեւիներն ու թուրքերը (նկար18):

Կիղիցիկներու շարքին կը դասուի նաեւ Ծովու թաղի Ս. Ստեփանոս մատուռը, որ թէև նոր է, բայց կառոյցով մման է կիղիցիկներուն: Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցոյ քահանայ Տէր Պետրոս Բարուճեանի քաջալերութեամբ գիւղացիք կը ձեռնարկեն թաղին մէջ նոր մատոռան մը շինութեան, որ նաեւ կը գործածուի իբրև դպրոց: Ան 14x7 մ. տարածութեամբ ու հաստաբետ պատերով շէնք մըն է, որուն քարը գիւղացիք կը կտրեն քովի

քարահանքէն ու կիրն ալ հոն կը պատրաստեն: Խորանի ցցուածքը հիւսիս-արեւելեան պատին է: Կողքի պատերուն իւրաքանչիւրին վրայ ունի երկու զոյգ հանդիպակաց պատուհաններ: Տանիքը տափակ է, հողածածկ, որ կը կենայ փայտեայ երկու սիւներու վրայ հանգչած էշերու վրայ: Ներսի պատերը եղած են հողէ ձեփ: Դրան վրայ գետեղուած մարմարէ քարը ունի խաչաքանդակ եւ *ՌՅՕԷ, 1908*, իսկ մկրտութեան աւագանը՝ *1915 Փետր. 13* արձանագրութիւնները: Խորանի սեղանը ունի մարմարէ երկու զարդաքարեր: Եկեղեցոյ կոչնակը կախուած էր բակի ծառին վրայ: 1908-1947 թուականներուն Գարատուրանի Տէր Պետրոս քահանան ամէն ամսուան վերջին Կիրակին կը պատարագէր այս մատուռին մէջ (նկար 19 եւ 20):


Ֆրանսահայ Երկիր եւ Մշակոյթ Միութիւնը վերանորոգեց ծածկը, պատուհաններն ու դուռը, ամրացուց պատերը: Կայ արձանագրութիւն. *Ս. Ստեփանոս Եկեղեցի Հայոց, նորոգեցաւ յամի տեսոն 1987, արդեամբ հայ ժողովրդեան*: Անկէ ետք տարին մէկ անգամ հոս պատարագ կը մատուցուի եւ լուռ օրերուն հայ եւ օտար, քրիստոնէայ եւ այլազգի մեծ թիւով այցելութիւններ կ'ունենայ: Յատկապէս զաւակ ունենալու խնդրանքով կիներ կը դիմեն անոր օգնութեան: Կը հաւատան անոր զօրութեան: Կը գտնուի Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցոյ թաղականութեան խնամքին տակ:



Նկար 1. Ս. Գեորգի կողքին գտնուող քարէ կամարապատ ծածկով կիսաքանդ շէնքը



Նկար 2. Ս. Սարգիս եկեղեցոյ արեւելեան կիսաշրջանաձեւ պատը՝ ներսէն դիտուած: Այժմ՝ ամբողջապէս քանդուած



Նկար 3. Քեօքքինէի Ս. Ստեփանոս կիղիցիկի մօտեկայքէն գիւղի Աւետ, եկեղեցի փոխադրուած խոյակ



Նկար 4. Ս. Գեորգի շրջակայքէն գտնուուած սիւնի խարխախ եւ խոյակ



Նկար 5. Ներքի գիւղի աղբիւրը՝ քովի կիղիցիկէն հոն տեղադրուած խաչքարով



Նկար 6. Ներքի գիւղի 2017-ին վերանորոգուած աղբիւրը: Խաչքարը Մարտ 2018-ին գիւղ ներխուժած ծայրահեղ իսլամիստներու գնդակներուն թիրախ դարձած էր



Նկար 7. Արամ գիւղի 1907-ին վերակառուցուած Ս. Ստեփանոս եկեղեցոյ հարաւային պատին ագուցուած նախկին կառոյցի խաչքարերէն մէկը



Նկար 8. Արամ գիւղի մօտիկ Ս. Աստուածածնայ վանքի Ս. Գեորգ եկեղեցին, մասնակի վերանորոգութեան ենթարկուած է 1903-ին



Նկար 9. Արամ գիւղի մօտիկ Ս. Աստուածածնայ վանքի Ս. Գեորգ եկեղեցոյ ներքնամասը: Գանձախոյզներ բռնուողին վերջերս քանդած են խորանին սեղանը ու բացած երկու մարդահասակ խորութեամբ փոս մը



Նկար 10. Քեսապցի ուխտաւորներ Պալլուսի ուխտավայրին մէջ, 1939-ն առաջ



Նկար 11. Քեսապի Ս Աստուածածին նախկին կիղիցիկէն պահպանուած 1809-ի արձանագրութիւնը. գրչագիրը տե՛ս Բաֆֆի Քորթոշեան, Քեսապի շրջանի պատմական յուշարձանները, ՀՃՈՒ հիմնադրամ, Երեւան, 2014, էջ 8



Ս Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ
 Ա Ն Ո Ւ Ն Ս Ր Ր Ո Յ Ն Գ Է Ո Ր Ր Կ Յ
 Տ Ի Ն Կ Է Է Ն Գ Դ Ո Յ Ե Գ Է Ի
 Ա Է Ե Կ Է Է Է Է Է Է Է Է Է Է Է

Նկար 12. Ս. Գեորգի արձանագրութեան գրչագիրը. տե՛ս Բաֆֆի Քորթոշեան, Քեսապի շրջանի պատմական յուշարձանները, ՀՃՈՒ հիմնադրամ, Երեւան, 2014, էջ 21



Նկար 13.
Գարատուրանի ծովամերձ Ս.
Գեորգի արելելեան պատի
խորշը՝ խորանը



Նկար 14.
Գալեմտերեան-Մանճիկեան
թաղի կիլիցիկի հարաւային
պատէն անկիւն մը եւ
խաչքարը



Նկար 15.
Ս. Մարութի կեդրոնական
խորանը



Նկար 16.
Ս. Մարութի ընդհանուր տեսքը՝ վերջերս
ցանցապատուած կեդրոնի խորանով



Նկար 17.
Ներքի գիւղի կիլիցիկէն մնացած երկու
սրբատաշ քար՝ սրբազան կաղնիին տակ



Նկար 18. Քեօրքիւնէի Ս. Ստեփանոսը. հաստաբետտ կաղնիի բունին կ'երեւին խորանի քանի մը քարերը



Նկար 19. Գարատուրանի Ծովու թաղի Ս. Ստեփանոսը



Նկար 20. Ս. Ստեփանոսի դրան առջև սրբացուած դափնին

Акоп Чолакян – Древние церковные структуры Кесабского района до разделения конфессий

В статье на основе полевых исследований, бесед с народом и письменных источников представлены церковные структуры Кесаба, которые местные жители называли “кихицик” (“небольшие церкви”). “Кихицик” – это небольшие церкви сельских или районных общин с прилегающим кладбищем. Это позднесредневековые структуры, заброшенные и разрушенные вследствие насилия, совершенного со стороны Османской империи по отношению к населению, стихийных бедствий, это места паломничества, у которых есть просители и посетители начиная с XIX века до сих пор.

Hakob Cholakyan – The Ancient Churches of The Kessab Region before the Division of Denominative Communities

Based on field research, popular talks and collections of sources, the article presents the church-domed structures of the Kessab region, which are called Gighitsigs - small Armenian churches. The Gighitsigs are small churches in rural or district communities surrounded by a cemetery. These are late medieval structures, abandoned and demolished as a result of the violent movements of the Ottoman Empire, natural disasters and the 19th century denomination conflicts. Some of them have solicitor visitors to this day and they are pilgrims.

Ներկայացվել է 23.11.2018

Գրախոսվել է 18.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ՇՈՒՐՋ***

Բանալի բառեր – միջնադար, տապանաքարեր, կոթող-տապանաքարեր, վիմագրեր, համաչափ-եռանկյունաձև, անհամաչափ-եռանկյունաձև, անհամաչափ-աստիճանաձև շիրմաքարեր

Քրիստոնեության ընդունմամբ, դավանաբանական մի շարք փոփոխությունների հետ մեկտեղ, վերաիմաստավորվեցին նաև ընկալումները հանգուցյալի և գերեզմանի մասին: Այսուհետ գերեզմանը համարվում էր ոչ թե վերջնական հանգրվան, այլ միայն հանգստավայր, որտեղ նա ժամանակավոր քուն էր մտնելու, ննջելու էր մինչև հարություն առնելը¹: Ուստի պատահական չէ, որ դարերի ընթացքում գերեզմանների վրա դրվել են դրանց տեղը ցուցող, հանգուցյալի հիշատակը վառ պահող բազմատիպ կոթողներ, որոնք մատենագրական աղբյուրներում հիշատակվում են «մահարձան», «արձան» անուններով: Օրինակ, պատմահայր Մովսես Խորենացին ընդհանրական ձևով օգտագործում է «մահարձան» բառը: Արտաշեսի ու Երվանդի հակամարտության և վերջինիս մահվան առնչությամբ նա գրում է. «Բայց Արտաշիսի յիշեալ, թէ խառնուած Արշակունւոյ է Երուանդ՝ հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք»²: Հովհան Մամիկոնյանն «արձան» բառը հիշատակում է որպես տապանաքար. «և հատեալ գերեզմանս և կանգնեցին ի վերայ արձանս»³: Եղիշեն Վարդանանց պատերազմի նահատակների մասունքներն ամփոփելու առիթով հիշատակում է. «Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»⁴: «Արձան» բառը որպես գերեզմանաքար օգտագործվում է նաև հետագա դարերում⁵:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 16YR6A026 ծածկագրով գիտական թեմայի («Հայաստանի միջնադարյան թաղման կառույցները և տապանաքարերը (5-13-րդ դդ.)») շրջանակներում:

¹ **Շմիդտ Ա.**, Հայոց թաղման ծէսը մահացածների պաշտամունքի հին քրիստոնեական հաւատալիքների շրջանակում // Գանձասար աստվածաբանական հանդես, Զ, Երևան, 1996, էջ 83-84:

² **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, 1981, գիրք երկրորդ, ԽԶ, էջ 204:

³ **Մամիկոնյան Հ.**, Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 95:

⁴ **Եղիշեն**, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինայանի, Երևան, 1957, էջ 203:

⁵ Դիվան հայ վիմագրության, Լոռու մարզ, պրակ IX, Երևան, 2012, էջ 223, թիվ 441:

Վաղմիջնադարյան կոթողների ուսումնասիրությանն անդրադարձած մեծանուն հայագետ Գ. Հովսեփյանը քառակող հուշայունները համարում է գերեզմանային հուշարձաններ, որոնք Հայաստանում տարածված էին քրիստոնեության սկզբնական շրջանում¹: Մակայն հետագա ուսումնասիրությունները փաստեցին, որ քառակող կոթողների կանգնեցման շարժառիթները տարբեր են²: Ուշագրավ է, որ Հայաստանում պահպանված կոթողների պեղումներից թաղումներ գտնվել են ընդամենը երկու հուշարձանից՝

1. Քասաղի բազիլիկայի պեղումների ժամանակ տաճարի հարավարևելյան անկյունում հայտնաբերված հուշակոթողի սալերի կենտրոնում բացված խորշում գտնվել են մեծահասակի և երեխայի կմախքներ³:
2. 2018 թ. Անգեղակոթի Ս. Վարդան եկեղեցու պեղումների ժամանակ հայտնաբերվել է հիմնահողային 9 թաղում, որոնց վրա կանգնեցված է եղել հուշայուն, որի բեկորները սփռված էին շուրջը⁴: Իսկ Երեւույքի հուշակոթողներից մեկի պատվանդանի՝ 2013 թ. պեղումների ժամանակ որևէ թաղում չի հայտնաբերվել⁵:

Վաղմիջնադարյան գերեզմանային քարակոթողների ուսումնասիրության կնճռոտ հարցերից է կոթող-տապանաքար համատեղ գոյության հնարավորությունը: Հայտնի է, որ հետագա դարերում խաչքար (կոթող)-տապանաքար համատեղությունը լայն տարածում է գտնում, որոնց անխաթար բազմաթիվ օրինակներ պահպանվել են տարբեր հնավայրերում⁶: Փոխարենը մեզ հասած վաղմիջնադարյան կոթողները հանդես են գալիս առանց տապանաքարի, և հակառակը: Եվ եթե պահպանված հարյուրավոր կոթողներ չեն գտնվել իրենց նախնական վայրում, և վերջնականորեն պարզված չէ՝ արդյոք գերեզմանների վրա դրված քառակող կոթողներն ունեցել են առանձին տապանաքարեր, թե ոչ, ապա հստակ է, որ առնվազն V դարից տարածում ստացած երկթեք տապանաքարերը չունեն կոթողներ:

¹ Տե՛ս **Հովսեփյան Գ.**, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Կ. Երևան, 1987, էջ 153-189:

² Տե՛ս **Ազարյան Լ.**, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 58-59, **Գրիգորյան Գ.**, Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Երևան, 2012, էջ 31-34:

³ Տե՛ս **Սահինյան Ա.**, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 54-55:

⁴ Տե՛ս **Ալեքսանյան Տ.**, Անգեղակոթի Ս. Վարդան եկեղեցու 2018 թ. պեղումների հաշվետվությունը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

⁵ Տե՛ս **Տոնապետյան Պ.**, Նոր պրպտումներ Երեւույք հնավայրում, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Հայագիտական երկրորդ համաժողովի զեկ. ժող., Երևան, 2014, էջ 231:

⁶ Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2007, էջ 339-341:

Վերջին տարիներին Հայաստանի տարբեր շրջաններում ուսումնասիրված և չափագրված (Ճարտարապետ Սոսե Աղայան) վաղմիջնադարյան շուրջ երկու տասնյակ տապանաքարերից ներկայացնելու ենք դրանց ձևերը, զարգացման ընթացքը բնորոշող ութ օրինակ¹:

Վաղմիջնադարյան տապանաքարերը, դրանց տեսակները, գտնվելու հանգամանքները հետազատողների կողմից մանրամասն դիտարկման չեն ենթարկվել և դրանց անդրադարձել են միայն արձանագրությունների վերծանման կապակցությամբ: Վաղմիջնադարյան տապանաքարերի մասին համեմատաբար լավ նկարագրություն է տվել Կ. Ղաֆադարյանը. «Երկթեք տապանաքարերը Հայաստանում սկիզբ են առնում թևավոր խաչերի հետ միասին ամենաուշը՝ V դարում, և հարատևում են մինչև XII դարի վերջերքը: Նկատելի է, որ հնագույն երկթեք տապանաքարերն ավելի լայն նստվածք ունեն, իսկ հետադարյաններն ավելի ամփոփ և համեմատաբար բարձր են»²: Այսպիսով, նախորդ ուսումնասիրություններից գիտենք միայն, որ վաղմիջնադարյան երկլանջ տապանաքարերի նիստերը համեմատաբար լայն են:

Վերջին տարիների հնագիտական պեղումների և պատահական գտածոների տվյալները հնարավորություն են ընձեռում ներկայացնել վաղմիջնադարյան տապանաքարերի բազմատիպությունը՝ ինչպես նիստերի լայնության, այնպես և ձևերի առումով, և տալ թվագրության առավել հստակ սահմաններ:

Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ երկթեք տապանաքարերն այդ տեսքն են ստացել սարկոֆագի վրա դրվող կափարիչի ձևից³, որը փաստվում է թե՛ հռոմեական սարկոֆագների դիտարկումով, որոնք, իհարկե, ունեն ավելի շքեղ հարդարանք, և թե՛ վաղմիջնադարյան օրինակներով (գծ. 1):

Տապանաքարերի վրա հանգուցյալի անունը հիշատակող գիրն ի հայտ է գալիս համեմատաբար ուշ՝ VI դարի վերջից, և հավանաբար պայմանավորված է ննջեցյալի անունը հիշելու և այն վառ պահելու ակնկալությամբ, երևույթ, որն իր իմաստաբանական ամբողջական պատկերը ստացավ խաչքարային մշակույթում⁴ և լավագույնս ամփոփվեց մեկ նախադասության մեջ. «Ձեռքս փտի հող դառնայ, գրեալ գիրս յիշատակ մնայ»⁵:

Մեր ուսումնասիրած շուրջ երկու տասնյակից ավել վաղմիջնադարյան տապանաքարերից արձանագիր են 8-ը, որոնք կարելի է թվագրել VI դարի վերջով-VII դարով՝ հիմք ընդունելով տառաձևերը: Վաղ միջնադարյան տապանաքարերի թվագրությունը կատարվել է ըստ տառաձևերի, ըստ

¹ Բոլոր տապանաքարերը կերտված են տարբեր երանգի տուֆերից:

² **Ղաֆադարյան Կ.**, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 244:

³ Տե՛ս Սույն տեղում, էջ 245:

⁴ Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Խաչքարը և հիշատակի միջնադարյան ընկալումը // Հայոց պատմության հարցեր, թիվ 6, Երևան, 2005, էջ 198-211:

⁵ **Աբրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 311:

միջավայրի դիտարկման և հազվադեպ՝ ըստ շերտագրության: Ցավոք, V-VII դդ. տապանաքարերի թվակիր օրինակներ մինչ օրս հայտնի չեն:

Վաղմիջնադարյան երկթեք տապանաքարերից վաղագույն արձանագիր օրինակը թվագրվում է V դ. և հայտնի է Թալինից¹: Այն ունի բավականին փոփոխ նիստեր և երեք տողից բաղկացած արձանագրություն՝ խաչի պատկերով սկսվող, հանգամանք, որը բնորոշ է գրեթե բոլոր արձանագիր օրինակներին (նկ. 1):



գծ. 1


նկ. 1

Երեբույքի տաճարին համաժամանակ (այսինքն՝ V-VI դդ.) կարելի է թվագրել հարավային կողմում գտնվող տապանաքարերից մեկը, որի վրա պատկերված է շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչի պատկեր (գծ. 2, նկ. 2): Հունական կոչվող այս խաչերը լայնորեն տարածված էին վաղմիջնադարյան Հայաստանում. դրանցով զարդարվում էին թե՛ եկեղեցական կառույցների տարբեր հատվածները, թե՛ կոթողները²: Ավելի ուշ դրանց ավելացան նաև տապանաքարերը, որոնք տարբեր հատվածներում ունեն խաչանշանը (Երեբույքի դեպքում խաչը պատկերված է երկայնական նիստերից մեկի վրա): 2018 թ. Աղցքում հայտնաբերված տապանի հավասարաթև խաչերը լանջերից մեկի վրա փորագրված են, իսկ ահա Չիչխանավանքում հայտնաբերվել է սալարկղային թաղում, որի գլխաքարը հավասարաթև խաչի պատկերով տուֆե սալ է³:

¹ Տապանաքարը ցուցադրվում է Հայաստանի պատմության թանգարանում: Տե՛ս Գրի հավերժությունը, ցուցահանդես հայ գրատպության 500-ամյակի առթիվ, Երևան, 2012, էջ 26:

² Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, էջ 31-36:

³ Տե՛ս Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ., Միրիջանյան Դ., Չիչխանավանք, Երևան, 2015, էջ 36, նկ. 7:



գծ. 2




նկ. 2

Առաջին հայացքից գրեթե բոլոր տապանաքարերը միանման են, սակայն մանրամասն դիտարկումները փաստում են, որ չափերով, նիստերի լայնությամբ, անկյունների բացվածքով դրանցից ոչ մեկը չի կրկնում մյուսին: Այս հանգամանքը խիստ բնորոշ է V-VIII դարերի տապանաքարերին, ի տարբերություն XI-XIII դարերի, երբ տապանաքարերի նիստերի և անկյունների ձևավորումը խիստ համաչափ է:

Տառածներից ելնելով՝ VI դարով է թվագրվում Դվինում հայտնաբերված Յոհանի տապանաքարը, որին համաժամանակյա են Ջովունիի Ս. Վարդան եկեղեցու հյուսիսային հատվածից գտնված¹ սալատապանը (գծ. 3, 4), ինչպես նաև Հայաստանի պատմության թանգարանում պահվող Դավիթ Գնթունու շիրմաքարը² (գծ. 5): Սակայն չափերով, ձևավորումով այն առանձնանում է մյուս բոլոր տապանաքարերից: Դրա երկու նիստերը բաժանված են երկու հատվածների, իսկ արձանագրությունը փորագրված է միայն մի մասում: Այնպիսի տպավորություն է, որ մյուս հատվածները ևս նախատեսված են եղել հիշատակագրերի համար, սակայն ինչ-ինչ պատճառներով դրանք չեն արվել:


¹ Դժվար ընթեռնելի արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը. ԱՅՍ Է ՏՄՊԱՆ. ՆԵԱՅ ՎՐԵՆԱՅ ԳՆԹՈՆՆՈՅՆ Ե: Տե՛ս Պետրոսյան Վ., Ջովունիի արձանագրությունները // «ՊԲՀ», 1980, թիվ 3, էջ 305:

² Տե՛ս Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 244-245:



Տապանաքարի պարզ մշակման նմուշ է Թալինի Ս. Քրիստափոր եկեղեցու հյուսիսային կողմում գտնվող գերեզմանաքարի վաղ օրինակներից մեկը, որը համաժամանակյա է հոգևոր կառույցին և թվագրվում է VII դարով (զձ. 6):

Այս ժամանակաշրջանի տապանաքարերի շարքում ուշագրավ է նշանավոր գործիչ Խեչան Առավելյանի շիրմաքարը՝ Էջմիածին քաղաքի մշակույթի տան հարևանությամբ հայտնաբերված, որի մասին հիշատակում է պատմիչ Սեբեոսը¹ (զձ. 7): Այսպիսով, Խեչանի տապանաքարն այն եզակիներից է, որի թվագրությունը հստակ է և հիմնված է ինչպես տառաձևերի, այնպես և պատմական աղբյուրներում հիշատակությունների վրա:




¹ Տե՛ս **Կարախանյան Գ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հարությունյան Պ.**, Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ // «ԲԵՀ», 1992, թիվ 2, էջ 158-160, **Հարությունյան Ա.**, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 354:

Վաղ միջնադարյան գերեզմանոցներում (Եղիպատրուշ, Արուճ, Աղք, Չիչխանավանք)¹ հանդիպում են նաև աստիճանաձև տապանաքարեր, որոնք հանդես են գալիս երկթեք շիրմաքարերի հետ: Դրանց հարող հնագիտական միջավայրի և շերտագրական դիտարկումների հիման վրա տապանաքարերի այս օրինակները կարելի է թվագրել VII-VIII դարերով (զծ. 8):

Կոտայքի մարզի Գողթ գյուղի դպրոցում է պահվում 1980-ական թթ. այստեղ բերված տապանաքարը, որն ուշագրավ է նրանով, որ գործ ունենք հայոց մեծ թվականով արձանագրված առաջին տապանաքարի հետ, որը, ըստ վիմագրագետների, կարելի է թվագրել VIII դ.²: Ընդգծենք, որ այն իր կերտվածքով էականորեն չի տարբերվում նախորդ դարերի տապանաքարերից (զծ. 9):

Հիմք ընդունելով վաղմիջնադարյան տապանաքարերի կտրվածքները՝ կարելի է առանձնացնել շիրմաքարերի երեք տեսակ՝ 1. համաչափ-եռանկյունաձև, 2. անհամաչափ-եռանկյունաձև, 3. անհամաչափ-աստիճանաձև:




Համաչափ եռանկյունաձև տապանաքարերի լավագույն օրինակներից են Դավիթ Գնթունու (ՀՊԹ), Երերույքի, Ջովունիի, Գողթի, Էջմիածնի օրինակները (աղ. 10, նկ. 1, 3, 4, 5, 7), որոնց գագաթների անկյունային հատվածները տատանվում են 135°-106° միջակայքում, իսկ նիստերի բացվածքները համաչափ են՝ 22°-37° սահմաններում:

¹ Տե՛ս Նալբանդյան Ա. և ուրիշներ, նշվ. աշխ., աղ. IV, նկ. 6-7:

² Տե՛ս Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Վիմագրագիտական էսքիզներ-2 // «ՊԲՀ», 2012 թիվ 3, էջ 94-95:

Անհամաչափ-եռանկյունաձև օրինակներից առանձնացրել ենք Դվինի և Ս. Քրիստափորի տապանաքարերը (աղ. 1, նկ. 6, 8): Նշվածներից առաջինի գագաթի անկյունը 120° է, երկրորդինը՝ 132° , իսկ նիստերի անկյունները խիստ տարբեր են. Դվինի տապան՝ 32° - 28° , Ս. Քրիստափոր՝ 24° - 42° :

Անհամաչափ-աստիճանաձև տապանաքարն աղյուսակում ներկայացված է Եղիպատրուշի օրինակով (աղ. 1, նկ. 2), սակայն նմանօրինակ շիրմաքարեր հայտնի են նաև Արուճից, Աղցքից, Չիչխանավանքից և հանդիպում են երկթեք տապանաքարերի հետ կողք կողքի և թվագրվում նույն ժամանակաշրջանով՝ VII-VIII դդ.:



Աղյուսակ 1: Տապանաքարերի նիստերի բացվածքները (բոլոր չափագրությունները՝ ճարտարապետ Ս. Աղայանի)

Այսպիսով, թեև առաջին հայացքից վաղմիջնադարյան տապանաքարերը թվում են միատիպ, սակայն մանրամասն դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք տարբեր են ինչպես չափերով, քարի մշակումով, այնպես և նիստերի բացվածքներով, ձևավորումով:

Диана Мириджанян – Замечания о раннесредневековых надгробиях Армении

Исследования надгробных памятников имеют важнейшее значение. В частности, надгробные надписи раскрывают новые исторические лица, которые играли важную роль и о которых молчат другие исторические источники. В последние годы нами было изучено около двух десятков раннесредневековых надгробий, известных в разных регионах Армении. Из них в статье представлены восемь примеров, которые наилучшим образом описывают их формы, путь развития и произошедшие изменения. Основываясь на разрезах надгробий, мы выделили три типа плит: пропорциональные треугольные, непропорциональные треугольные, непропорциональные градуированные, которые подробно описаны в статье на разных примерах.

Diana Mirijanyan – Remarks on the Early Medieval Tombstones of Armenia

Tombstone studies are very important. Especially the inscriptions on gravestones reveal new historical persons who played an important role but are not mentioned in other historical sources. In recent years, we have studied about two dozen early medieval tombstones, known from different regions of Armenia, of which eight examples are presented in the article that best describe their forms, the path of development and the affected changes. Based on the cuts of gravestones, three types of slabs are distinguished: proportional triangular, disproportionate triangular, disproportionate graded, which are described in detail in the article on various examples.

Ներկայացվել է 06.11.2018

Գրախոսվել է 18.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐՈՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳՐՔԻ ԳՈՎԱԶԳԸ ԹԻՖԼԻՍԱԶԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1846-1865 թթ.)

*Բանալի բառեր – «Կովկաս», «Կռունկ Հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի»,
Էնֆիաճյանների գրավաճառանոց, գրահրատարակչություն, գովազդ*

Գովազդի զարգացման պատմությունն ուսումնասիրողները նշում են, որ տպագիր գովազդի սկզբնավորումից ի վեր՝ գրահրատարակչական արտադրանքի գովազդային հաղորդումները, մասնավորապես գրքային նորույթների մասին ծանուցումները շուրջ մեկ դար «առաջատար դիրք էին զբաղեցնում առևտրային տեղեկատվության ընդհանուր համակարգում»¹: Գրահրատարակչությունը նպաստավոր հող ստեղծեց գովազդի տեսակների ու ժանրերի զարգացման համար և «խթանեց լրագրային ու ամսագրային գովազդի զարգացումը»²: Պարբերական մամուլն իր հերթին նոր հնարավորություն ընձեռեց գրահրատարակչությամբ զբաղվող ձեռներեցներին ու հեղինակներին իրենց ապրանքի գովազդի համար և գրքի շուկայում դարձավ տեղեկացման ամենաարագ և արդյունավետ միջոցը:

The Theater of the Absurd was shaped in the middle of the XX century as a consequence of the devastation of human lives caused by the Second World War. Its origins are linked to surrealism, which began as a movement in literature and art in the second decade of the same century. One of the four founders of the Theater of the Absurd was Arthur Adamov, an Armenian by nationality, who wrote more than 20 plays, 6 of which have recently been translated into Armenian by Sate Khachatryan. The article presents the summary of absurd fiction, reveals a number of features peculiar to that movement, and based on that examines the issues and problems raised in A. Adamov's plays, the peculiarities that are common to the authors of that movement and the differences that are typical to playwright Adamov. The article emphasizes the great contribution that Sate Khachatryan, the translator of Adamov's plays, brought making the author of plays more popular with the readers, on the one hand and boosting the dramatic revelations and nuances of the Theater of the Absurd in the Armenian reality, on the other.

Ներկայացվել է 05.11.2018

Գրախոսվել է 21.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ
«ԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆՎԵԼ» ՎԵՂՈՒՄ

Բանալի բառեր – ինքնակենսագրական վեպ, ազգային կյանք, սնտոհապաշտություն, գյուղական իրականություն, ժանր, նարատիվ, դիպաշար, կերպար

Ղազարոս Աղայանի գեղարվեստական արձակի մեջ ուրույն տեղ ունի վիպագրությունը: Այն հայ նոր գրականության համապատկերում ուշագրավ է գաղափարագեղարվեստական արժանիքներով, ժամանակաշրջանի հայ գյուղական իրականության կենդանի պատկերներով: Աղայանի վեպերում, որոնք XIX դարի երկրորդ կեսում ժանրի առումով առաջիններից էին մեր գրականության մեջ, արտացոլված են խորաթափանց մտածողի աշխարհընկալումը, հայկական իրականությունն իր նահապետական բարքերով, դրանցում տեղ գտած կարևոր խնդիրների արծարծումներով: Այդ վիպագրությանը հատուկ է կյանքի ընդգրկուն պատկերումը՝ ընտանեկան հարաբերություններ, ազգային հոգեկերտվածք, միջավայր: Ժամանակի կյանքի բազմակողմ իրողություններն ու մտածումներն ամբողջական են դարձնում գրողի ասելիքը: Գյուղական կյանքի պատկերներում Աղայանը ներկայացրել է հարազատ եզերքի մարդու հոգսաշատ կյանքը, ավանդական գյուղաշխարհի նահապետական վարքուբարքը:

«Արություն և Մանվել» (1866) վեպի ի հայտ գալն արևելահայ արձակում ունեցավ *նախաշավդային դեր*. հետագայում XX դարի 20-ականների վերջին և հաջորդ տասնամյակին, խորհրդահայ գեղարվեստական արձակի ամենաբազմազան դրսևորումներում հատկապես ընդգծվեց *ինքնակենսագրական* վեպ-վիպակի ժանրը: Այն մի կողմից ներառեց դարաշրջանի հայոց ողբերգական ճակատագիրը, մյուս կողմից՝ սարսափների միջով անցած գրողների ինքնարտահայտման անձնական պահանջներն ու վերափնաստավորումները: «Գրական ընթացքի մեջ էին մարդիկ, որոնց կյանքը սերտորեն կապված էր ժողովրդի պատմության մի շարք քաղաքական-սոցիալական երևույթների հետ, ավելի ճիշտ՝ մի կյանքի մեջ արտացոլված էր նաև ժողովրդի պատմական բախտը: Մերունդների բախտի տարեգրություն,– այսպես կարելի է որակել այդ վեպերի բովանդակությունը: Նրանցից յուրաքանչյուրը բերում է ուրույն և ինքնատիպ աշխարհի, իր ապրած ու տեսած Հայաստանի, իր սերնդի դառն ճակատագրի պատկերը, որի շնորհիվ էլ անհատի կյանքի

պատմությունը ձեռք է բերում նաև հասարակական հետաքրքրություն»¹, – նկատում է ակադեմիկոս Հր. Թամրազյանը: Մեկը մյուսի հետևից լույս տեսան Գուրգեն Մահարու («Մանկություն», 1928, «Պատանեկություն», 1929-1930), Վահան Թոթովենցի («Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա», 1930), Զապել Եսայանի («Միլիտարի պարտեզները», 1935) և Ստեփան Զորյանի («Մի կյանքի պատմություն», I-1934, II-1939) ստեղծագործությունները, որոնք որակական նոր ընթացք հաղորդեցին ժանրի զարգացմանը:

Աղայանն իր անդրանիկ վեպը կոչեց **ազգային**՝ հենվելով նախնադասական բնորոշման վրա, և շարունակեց կիրառել աբովյանական սկզբունքները: «Արություն և Մանվելը» գաղափարական պայքարի նոր հղացք է՝ ուղղված անցյալի տգիտության դեմ. այն առաջավոր հայացքների, լուսավոր գաղափարների, նոր սերնդի հոգեմտավոր զարգացմանը միտված ստեղծագործություն է՝ ուղենշային արժեք ունեցող զանազան գաղափարների արծարծումներով: Ե՛վ «Արություն և Մանվել» վեպի, և՛ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության հերոսը ինքնակերպավորված հեղինակն է:

Հերոսի ընտրությունը դժվարության առաջ է կանգնեցնում վիպագրին, և ավելի ուշ նա այդ մասին գրում է. ««Արություն և Մանվել» վեպը իմ ինքնասիրության արդյունքն է: Ինձ հարկավոր էր ժամանակակից մի հերոս. ծանոթներիս մեջ ինձանից լավը չգտա: Քան թե պիտի երևակայեի և խելքիս գոռ տայի, ավելի համարեցի՝ ստուգապատում լինելու համար, բուն իրողությունը, իմ իսկապես տեսածն ու լսածը վիպական ձևի տակ ձգել»²: Վեպի գրությունը կապված է Պետերբուրգում հայ երիտասարդների ստեղծած ուսանողական ժողովների քննարկումների հետ, երբ հերթական ընթերցվելիք գրական երկը դարձավ «Արություն և Մանվելը»: Հերոսի կյանքի օրինակով Աղայանը ներկայացնում է XIX դարի 50-60-ական թվականների հայ իրականության պատկերը, բարքերը, մտածողությունը, Արությունի հոգեմտավոր զարգացման ընթացքը:

Վիպական պատումը հարուստ է գյուղական իրականության մեջ տեղ գտած դիպվածներով: Առհասարակ ինքնակենսագրական վեպի ժանրին բնորոշ է մանկության թեմայի արծարծումը: Աղայանի համար այս թեման դարձավ վեպի առանցքային նշանակություն ունեցող մասերից մեկը: Նրա մանկական հիշողությունները պարուրված են անսահման հուսահատությամբ, հոր կողմից մերժված լինելու ծանր գիտակցմամբ:

Գրողը թեև փորձում է հերքել իր և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վեպերի նմանությունը, այնուամենայնիվ նրա վեպը կրում է աբովյանական ավանդույթների ազդեցությունը, և Աղայանը երբեմն կրկնում է իր անմիջական նախորդին:

¹ **Թամրազյան Հր.**, Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1980, էջ 419:

² **Աղայան Ղ.**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1955, էջ 20 (այսուհետև այս ժողովածուին հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ):

Վիպագիրը բոլոր դեպքերում Աբովյանի գաղափարների արծարծողն էր նոր հանգամանքներում և նոր իրադրության մեջ: Եթե Աբովյանը ներկայացնում է Բարեկենդանի տոնակատարության պատկերը, ապա Աղայանը վերցրել է կրոնական այլ ծես, որը նրան հնարավորություն է ընձեռել բուն հայկական միջավայրում կերտել իր վիպական հերոսներին: Ակնհայտ են երկու գրողների նկարագրությունների, ժողովրդական մտածողությամբ գեղարվեստական պատկերների նմանությունները, ընթերցող-տեքստ պատումային առնչակցությունները: Աղայանը, ինչ խոսք, հրաշալի է պատկերացնում իր և Աբովյանի վեպի տարբերությունները, բայց և այնպես ընդհանրությունները ներկայացնում է որոշ վերապահություններով. «Ոմանք այն միտքը տարածեցին ընթերցող հասարակության մեջ,– գրում է նա,– որ իբրև թե իմ աշխատությունը մի հետևություն է անմահ Աբովյանցի վեպի: Այդպես չէ: Նրա «Վերք Հայաստանին» մի ողբ է, ողբ հայրենիքի թշվառության վրա, ողբ հայրենասերի, բխած մի զգայուն սրտից, զարգացած ուղեղից: «Արություն և Մանվելը» բերում է մի բոլորովին նոր ուղղություն» (հ. 4, էջ 395):

Իր ժխտման մեջ Աղայանը ենթագիտակցորեն հաստատում է ակնհայտ նմանությունը: Իրապես վեպը հին ու նոր գաղափարների, ավանդականի և արդիականի, խավարի ու լուսավորության շարունակական պայքարի և առաջընթացի գաղափարական հաղթանակի ձգտումն է: Արությունի շուրթերից հնչում է նույն աբովյանական պատգամը. «Մեր նոր սերնդի աչքը կբացվի, կտեսնի, որ հնից էլ օգուտ չկա, գրաբարը ետ ետ կքաշվի, իր տեղն աշխարհաբարին կտա, էն ժամանակ էդպես գրքերն էլ կստանան իրենց վայելուչ հարգն ու պատիվը» (հ. 4, էջ 46): Հերոսների դիմելաձևում ակնհայտ են դրսևորված Աբովյանի ոճից եկող՝ «քու հոգուն մատաղ, ես քու խաթրը կկոտրե՞մ» նմանակումները: Ն. Աղբայանն այս վեպի մասին գրել է. «Աղայանն «Արություն և Մանվելով» թոթափում է իր վրայից իդեալականության մնացորդները և պինդ խրվում է իրականության մեջ: Դրանով նա բռնում է մի պատվավոր տեղ մեր վիպագրության զարգացման պատմության մեջ: Նրա այդ և հետագա գրվածներում այլևս չկան իդեալական մարդիկ. բոլորը իրական են, սովորական, սոսկական: Այստեղ գյուղացին հավատարմությամբ է վերարտադրված»¹:

Արցախի Խաչեն գավառից Բոլնիսի ձորում հաստատված գյուղի բնակչության միակ գրագիտուհին Մանիշակն էր, որն Արությունին գրաճանաչ դարձրեց, իսկ հետո տեր Պետրոսը դարձավ նրա հաջորդ ուսուցիչը: Արությունն անվերապահորեն ընդունում էր նրա ասածները, թեպետ քահանան չէր կարդացել հայոց պատմիչների գործերը: Պատկերվող միջավայրն ու ժամանակաշրջանը կրթության համար այնքան էլ բարենպաստ չէին. «Ուսումնաստվության այդ բարբարոս և խավար ժամանակը ոչ մի երեխա գիր

¹ «Մուրճ», 1897, թիվ 7-8, էջ 1062:

չէր սովորում, նրա խելքումը չէր մտնում, նրա խելքը հակառակում էր, թեև բնագղամամբ, որ այդ ձևով սովորել անհնարին է» (հ. 4, էջ 14): Կրթության համար սահմանափակ ժամանակներ էին. նախապաշարմունքների գերակայությունը, ժողովրդի կյանքում խավարի և տգիտության արմատներն այնքան խորն էին, որ առարկաներին աներևույթ, գերբնական հատկություններ էին վերագրում ու հավատում դրանց գործությանը: Աղայանը քննական հայացքով է դիտարկում քրիստոնեական հավատքի և ծայրահեղության հասնող սնտիապաշտության դրսևորումները, որ կապված էին ժողովրդի ավանդական հավատալիքների հետ: Գյուղական կենցաղում ժողովրդի կողմից կարևորություն էին ձեռք բերել «Գիր հոպոպի», «Գիր հավախոսի», «Գիր չբերք կնոջ» սնտիապաշտական բովանդակություն ունեցող գրքերը: Դրանց հետ կապված՝ նշվում է Ներսես կաթողիկոսի վերաբերմունքը, որն արգելել էր այդ գրքերի կիրառումը: Դրանք հավաքող վարդապետները, այնուամենայնիվ, հավատում էին գրքերի հրաշք գործությանը: Ժողովրդի կյանքում տեղ գտած սնտիապաշտության, մոլորությունների, նախապաշարմունքների չարիքի ակունքը հեղինակը տեսնում էր նրա կարծրացած մտածելակերպի, հետամնացության և կրթության պակասի մեջ. «Պետք է գիտենալ միայն, թե ինչպիսի գենքով պետք է պատերազմել տգիտության և խավարի դեմ և միանգամ ընդմիջտ համոզվելու է, որ այս դարում գործ դրած գենքը մյուս դարում կարելի չէ գործածել իբրև հնացած և անպետք» (հ. 4, էջ 9):

«Արություն և Մանվելի» հերոսը գործողությունների զարգացման կենտրոնում է. դիպաշարը զարգանում է նրա անմիջական մասնակցությամբ: Ինքնակենսագրական դրվագները նուրբ թելերով բացահայտում են ժամանակաշրջանի հայկական իրականությունը: Ինչպես Աբովյանի երկերում, այնպես և Աղայանի տողերում նոր գաղափարները հասցեագրած էին երիտասարդությանը:

Ընտանեկան հարաբերությունների, ազգային հոգեկերտվածքի և միջավայրի, ազգային կյանքի հագեցած նկարագրություններն ամբողջական են դարձնում հեղինակի ասելիքը: Արությունը հեղինակի գաղափարախոսության կրողն է, և նրա կյանքի վավերական դեպքերը գեղարվեստականացնելու միջոցով զարգանում է վիպական հյուսվածքը: Հերոսի և միջավայրի հակադրության բարդ շղթայում զարգացող դիպաշարում գրողը ստեղծել է երիտասարդների համար ուսանելի գաղափարակիր հերոս: Անշարժության և քարացածության դատապարտված գյուղական միջավայրն Արությունի համար դառնում է կաշկանդող: Աղայանն իր ասելիքն արտահայտում է ոչ միայն հերոսի շուրթերով, այլև կենցաղի խոսուն պատկերագրությամբ, որտեղ ներկայացված են իրականության բացասական կողմերը՝ կնոջ իրավագուրկ վիճակը, գյուղական կյանքի հետամնացությունը, ընկերային կյանքի տխուր պատկերը: Ընտանիքի հոգսն իր ուսերին վերցրած հայ կինն իրավասու չէր խառնվելու զավակների ճակատագրին: Վեպի հերոսուհիներից Արությունի քույր Օսանը ժամանակի լուսավոր քաղաքում ստրկական

վիճակում էր. Թիֆլիսում ամուսնացած Օսանն իր կամքին հակառակ հայտնվել էր մի ընտանիքում, որտեղ «բերնի թիքեն համրում են»: Նա մենակ էր իր դժվարության և հոգսերի առաջ: Օսանի անձնական ապրումների բացահայտման դաշտում Աղայանը ներկայացնում է գյուղական կյանքի սովորույթներից մեկը՝ ծնողների կամքով երեխաներին դեռևս օրորոցից նշանելու ավանդույթը: Հասարակության կողմից սահմանված ներքին օրենքներն անտեսում են մարդկանց զգացմունքներն ու վճռում նրանց անելիքները: Կնոջ խոսքն ու կարծիքը լսելի չէին բիրտ տղամարդկանց համար. «Կնիկն ու ձին, ասում էր, մի հանգի են, կապը որ ձեռքից թողեցիր, էլ նրանից քեզ խեր չկա» (հ. 4, էջ 39): Օսանը մանկությունից նշանված է, բայց չի կարող արժանանալ իր սիրած տղային, քանի որ նրա հայրը որոշել է իր աղջկա համար քաղաքացի փեսա գտնել: Հոր կամքն անբեկանելի վճիռ է, և դուստրը չի կարող հակառակվել նրան: Ահա կնոջ և ամուսնու հարաբերություններն արտացոլող մի վիպական պատկեր.

«— Թե որ կուզես, էլի միտք անենք միասին, խելք խելքի տանք, ինչպես որ լավ կլինի մեր աղջկա համար, էնպես անենք: Հենց համարենք, թե նշանված չէ, նոր ենք ուզում նշնել: Ինձ որ մնա, ես Ռոստոմիցը լավ տղա չեմ ճանաչում մեր գեղումը, մեզ մոտիկ, մեր աչքի առաջին, մեր աղջիկն էլ է նրան հավանում, սիրում...»

— Այ կնիկ, ասաց, էդ էր մնացե՞լ, որ դու ինձ խրատ տաս: Դու քիչ-քիչ ինձ մարդկություն էլ կանես, քու լաչակը կգցես իմ գլխին, իմ փափախը կդնես քո գլխին: Էդ չէ՞ քո ուզածը: Բայց դու չես գիտում, որ ես կնկա խելքովը ապրողներիցը չեմ...» (հ. 1, էջ 38-39):

«Վիպական անցքեր» մասում Արությունի և Մանվելի քույրերի՝ Օսանի և Հռոմմսիմի զրույցը գյուղի անցուդարձի մասին Աղայանի հաջորդ՝ «Երկու քույր» վեպի դիպաշարի հիմքն են: Սա թերևս վեպի յուրահատկությունն է: Խոսակցության ժամանակ Օսանը Հռոմմսիմին պատմում է իր տխուր կյանքը. «Կնկա խոսքին չլսելու» նախապաշարմունքով ապրող գյուղում անտեսված էին կանանց իրավունքները: Ընտանիքում դրսևորվում են բարքերի՝ կոպտությունը, քաղաքակիրթ վարվեցողության բացակայությունը, կնոջ ստրկության աստիճանի հասնող իրավագրկությունը, նրա ճակատագիրը որոշելու տղամարդու ձգտումը: Վեպի հերոսուհիները հանդես են գալիս իրենց իրավագուրկ վիճակի գիտակցմամբ և այդ կարգավիճակին համակերպված: Նրանց համար ամուսին էին ընտրում հայրերը: Աղայանը բարձր է գնահատում հայ կնոջը՝ ընդգծելով նրա աշխատասիրությունը, խելացիությունը, բարձրացնում է կնոջ ազատագրության, ստրկական վիճակից նրան դուրս բերելու առաջադեմ գաղափարը: Դեռևս Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի արձարժված ֆեմինիստական այս առաջավոր հայեցողությունը կողմնորոշիչ եղավ Ղ. Աղայանի, Պ. Պռոշյանի, Բաֆֆու, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Գր. Զոհրապի համար: Նալբանդյանը «Կրիտիկա Մոս և Վարդիթեր» քննադատական աշխատության մեջ անդրադառնում է հայոց մեջ մանկահասակ

աղջիկների ամուսնության հարցին. «Եթե ուր, ինը տարեկան աղջիկը սիրահարվում է և տասը կամ տասնումի տարեկանը պատրաստ է սիրու համար իր անձը զոհել, ուրեմն, վաղ ամուսնությունը բնականաբար զգալի կարոտություն է, երբ հիմնվում է նա իմացական և զգայական պահանջողությանը վրա»¹: Նալբանդյանական այդ ցուցումները, զարգացնող հեղինակներից էր Ղ. Աղայանը, որ անդրադարձավ աղջկա իր կամքին հակառակ ամուսնացնելու հարցին: Ակնհայտ է, որ Նալբանդյանը նկատել է երևույթը, իսկ Աղայանը զարգացրել ու խորացրել է խնդիրը՝ իր տարաբնույթ դրսևորումների մեջ ցույց տալով դրա վատ հետևանքները: Նրանց պետք է հավելել արևմտահայ գրագիտուհիների՝ կնոջ ազատագրության խնդիրներով սոցորված երկերը: 1880-ականներին մեկը մյուսի հետևից երևան են գալիս Սրբուհի Տյուսաբի նշանավոր երեք վեպերը՝ «Մայտան» (1883), «Սիրանույշը» (1885), «Արաքսյա կամ Վարժուհին» (1886), ինչպես նաև Ծերենցի դստեր՝ Օրիորդ Մենիկի (Թագուհի Շիշմանյան) «Գարնան մի ասուպը»՝ արևմտահայ առաջին նորավեպը (1883): Ի դեպ, 1891 թ. դրանց պիտի գումարվեր նաև մի ուրիշ գրագիտուհու՝ Սիպիլի (Զապել Ասատուր) «Աղջկան մը սիրտը» վեպը, որտեղ փաստորեն զարգացվում էին նախորդ վիպասանուհիների արձարձած հիմնախնդիրները:

Տյուսաբը գրում է բազմաթիվ թղթակցություններ, որոնք նվիրված էին կնոջ կրթությանը, աշխատանքին և ամուսնու ընտրության հարցերին: Հիշենք դրանցից մի քանիսը՝ «Քանի մը խոսք կանանց անգործության մասին», «Կանանց աշխատության սկզբունքը», «Հայ ընկերությունք»²: Եվ ահա Ղ. Աղայանն իր հրապարակախոսության մեջ դեռևս Տյուսաբից շատ առաջ անդրադառնում է այդ թեմային և գրում «Կնոջ կոչումը» հոդվածը, որտեղ մասնավորապես ընդգծում է կնոջ բարձր դերը: «Կնիկ կամ կին կյանք ասել է: Գոնե հայոց լեզվում այսպես է: Աղամը Եվային տեսնելով ասում է Մայր Մաշտոցի լեզվով՝ «Մա եղիցի ինձ ի կեանց», որ կնշանակե սա ինձ համար կլինի կյանք» (հ. 3, էջ 36):

Աղայանն անդրադարձել է ընտանեկան հարաբերություններին, ծնողների՝ երեխաների հանդեպ դրսևորած կոպտությանը: Թիֆլիսյան միջավայրից տուն հյուր եկած Արությունը Մանվելին ուղղված նամակում անկեղծանում է: Դեռահաս Արությունը շատ էր ազդվում անտարբեր հոր վերաբերմունքից. վերջինս ոչինչ չէր անում որդուն ուսման տալու համար, բայց չէր էլ ուզում իր կողքին պահել: Ծնողի այս վերաբերմունքը խոր հետք է թողնում Արությունի պատանեկան հուզաշխարհի և հոգեբանության վրա: Նա որոշում է «վայրենացած անդաստանում» բարության սերմեր տարածել, որ սերունդները չվերապրեն իրենց զգացածը: Իր ներզգացումների, մանկական ապրում-

¹ Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1979, էջ 493:

² Հաջորդաբար տե՛ս «Արևելյան մամուլ», 1881, սեպտեմբեր, էջ 345-350, նույն տեղում, դեկտեմբեր, էջ 453-458, նույն տեղում, 1882, հունիս, էջ 244-251:

ների մասին Արությունը նամակով պատմում է Մանվելին: **Ի դեպ, նամակի ժանրի ներհյուսումը վիպական պատումին, որն արդեն կիրառված էր Աբովյանի, Նալբանդյանի վեպերում, երկը դարձնում է առավել հետաքրքրական ու որոշակի լարում է հաղորդում դիպաշարին:**

Հարազատ եզերքն ու ընտանեկան միջավայրն Արությունի համար դժոխքի կերպարանք էին ստացել: Նրա մանկության հիշողությունները շատ ծանր էին. մոր քնքշությանը հակադրված են հոր կոպտությունը, բռնակալությունը, որ խոր հետք էին թողել նրա հոգում: Հոր՝ Ավետիքի մասին խոսելիս տալիս է նաև նրա արտաքինի նկարագիրը, որ միանգամայն ներդաշնակ էր նրա ներաշխարհին. «Հայրս մի գարհուրելի մարդ է նաև, իր հսկայական հասակով, իր բարկացկոտ և կնճռոտ դեմքով, իր ծանրաբարոյությամբ և մանավանդ իր կամակորոյթյամբ և այն մեծ համարմունքով, որ վաստակել է իր մասին» (հ. 4, էջ 117): Արությունի հայրը՝ Ավետիքը, չի ներկայանում սոսկ որպես բացասական կերպար, որն ամեն քայլափոխի խոչընդոտում է գաղափարակիր որդու՝ լուսավորականությանն ուղղված քայլերը: Ավետիքը գյուղաշխարհի բռնակալական հակում ունեցող կերպարներից էր, նախապաշարումների, սնտոխապաշտությանը գերի մի մարդ, որն անցել է գյուղական իզիթի փառավոր ճանապարհ, հասարակության մեջ ձեռք է բերել խիզախ և խելացի մարդու հեղինակություն՝ դրանով ապահովելով իր դիրքը ընտանիքում և գյուղի հասարակության մեջ: Հոր ճիշտ հակապատկերն էր մայրը՝ Հռիփսիմեն, որն իր քնքշությամբ, բանիմացությամբ, հնազանդությամբ հայ կնոջ տիպական կերպար է: Մոր տոհմում ժառանգանությամբ շարունակվում էր քահանայությունը, և նա ձգտում էր Արությունին տեսնել այդ միջավայրում:

Ներսիսյան վարժարանում ուսանելու տարիներին Արությունը մտերմանում է իրեն գաղափարակից երիտասարդի՝ Մանվելի հետ: Մերը դեպի ուսումը երկու պատանիներին միացնող օղակ է դառնում, իսկ Ներսիսյան դպրոցը՝ Արությունի և Մանվելի կրթական նոր աշխարհը: Գյուղական իրականությունից պատանին ընկնում է թիֆլիսյան միջավայր, հաղորդակից դառնում իսկական գիտությանը և հասկանում, որ իր սովորածները սնտոխապաշտության արդյունք են եղել: Այստեղ Աղայանը սեղմ բնութագրումով ներկայացնում է դպրոցի ընդհանուր պատկերը, կրթական համակարգի անարդյունավետությունը: Այնուամենայնիվ, բավականին նյութական պաշարներ էին հատկացված կրթական այդ օջախին. «Այդ ուխտատեղի բոլոր արդյունքը հատկացված է Ներսիսյան դպրոցին, բայց որովհետև դպրոցը այդ տեղերից մոտիկ ոչ մի գյուղից մի որդեգիր չէր պահած և չէր պահում, դրա վրա բարկացած՝ ասում էր. «Ժողովրդի մի աչքը կուրացնում են՝ որ մյուսը լուսավոր պահեն» (հ. 4, էջ 110): Դպրոցական ուսումն ավարտելուց հետո հերոսը գիտակցում է ավանդական մոլորությունների և խավարամտության դեմ պայքարելու անհրաժեշտությունը: Նա, վեճի մեջ մտնելով քաղաքացի ուխտավորների հետ, ասում է. «Ցավի համար՝ բժիշկ կա, քեփ անել էք ուզում, ձեր բաղերումն ամեն օր քեփ էք անում, բայց եթե ավել փող ունիք,

չեք իմանում, թե ինչ տեղ մսխեք, ես տեղը ցույց կտամ: Ձեր որդոցը, ձեր աղջկերանցը ուսում տվեք, որ իրենց հավատը, իրենց ազգը ճանաչեն, ձեզ նման չասեն, թե Վարդանս որն է, ուղիղ ճամփեն թողած՝ քարեքար չընկնին, լույսը թողած խավարի մեջ ման չգան» (հ. 4, էջ 58-59):

Թիֆլիսում Արությունի վրա խոշոր ներգործություն է ունենում Աբովյանի ընկեր Օվակիմը: Վերջինս աշխարհիկ մարդ էր իր մտածողությամբ և հոգեբանությամբ: Թիֆլիս մտնելու առաջին օրն իսկ Օվակիմը Արությունի ձեռքն է տալիս «Վերք Հայաստանի» վեպը: Գրքի հասկանալի լեզուն և քաղաքի կենդանի շունչը ոգևորում են Արությունին: Դա առաջին կենդանի խոսքն էր, որը լուսավորում է իր շուրջը, ցրում հոգում տիրող խավարը: Արությունը Մանվելի հետ ընդունվում է Ներսիսյան դպրոց, բայց այստեղ էլ նրանք չեն գտնում այն զենքը, որով կկարողանային պայքարել տիրող խավարի դեմ: Այնտեղ իշխում էին նույն բռնակալական օրենքները, ինչպես և գյուղական խալիֆայական դպրոցում: Աշակերտների միակ մխիթարությունը սիրված տեսուչ Շանշյանն էր, որի հեռանալուց հետո Արությունն ու Մանվելը ևս լքում են դպրոցը:

«Արություն և Մանվել» վեպի առանցքային գաղափարներից է ազգային միասնականությունը: Հեղինակը հայ քրիստոնյաների կաթոլիկ անջատումն անիմաստ է համարում՝ գտնելով, որ միևնույն կրոնի հետևորդները չպետք է միմյանցից անջատ լինեն: Արությունն իր առաքելությունն է համարում վերացնել այդ պատնեշը և այդ նպատակով այցելում է կաթոլիկների քահանային: Նա փորձում է դառնալ վարժապետ, սակայն կաթոլիկների քահանան անհնար է համարում այդ՝ ասելով. «Քուզին միտքն ինդո՞ր է, դու խայ ես, մենք կաթոլիկ» (հ. 1, էջ 139):

Աղայանի՝ աշուղական բանաստեղծական արվեստի նկատմամբ դրսևորած հետաքրքրությունն ու սերն արտահայտված էին նաև նրա գրական-հրապարակախոսական երկերում: Գրողը հաջողությամբ տիրապետում էր այդ բարդ արվեստին՝ հիմնավորելով, որ այդ երգերի նկատմամբ վերաբերմունքն արթնացել էր մանկության ժամանակ իրենց հյուրընկալ հարկի ներքո աշուղների այցերից: Հայդարբեգ գյուղում Արությունը բաս (մրցության) է մտնում աշուղ Շոհլայի հետ և իր տաղանդով կարողանում է շարունակել նրա հանգավորած երգերն այնպես, որ խլում է աշուղի սազը նրա ձեռքից: Այս հատվածում Աղայանն անդրադառնում է մեր աշուղներից մեկին՝ Սայաթ-Նովային: Հետաքրքրական է, որ վեպում տեղ գտած չափածո աշուղական հատվածները զգալիորոն նման են Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստին, մասնավորապես ընդգծված նմանություն կա բառապաշարի կիրառման մեջ: Աղայանն անդրադառնում է հայ ժողովրդի ծագման առասպելին՝ իր սեփական մեկնաբանությունը տալով: Հակադրվելով աշուղների ստահող պատմություններին՝ Արությունն ասում է.

Եթե դու գովեիր հայոց քաջերին,
Մի համբույր կըտայի սագիդ սիմերին,
Բայց դու հավատում ես շինծու բաներին,
Չգիտես ովքե՞ր են Արամ և Տիգրան:
...Թե դու էլ լինեիր ինձ չափ կարդացած,
Կերգեիր անդադար Հայ ու Հայաստան... (հ. 1, էջ 132):

Արությունի այս խոսքերն անարձագանք չեն մնում, շարժում են մարդկանց սնոտիապաշտության մեջ թաթախված մտքերը: Թուրքի շորեր հագած քեթխուղաները, տերտերն ու աշուղը հայոց քաջերին գովերգելու նրա պահանջը որակում են որպես Աստծո աչքը հայ ազգի վրա քաղցրացնելու նշան: «Մեր Գևորգն ու Բաղդասարը,– ասում է տերտերը,– հիմի Թիփլիս են, ընդհանց գրեր են ուղարկում, որ ես կարդամ, դուք ականջ դնեք, բայց, մեղքս չեմ թաքցնիլ, ալարս էկել ա, թե կարդամ: Գրում են, թե՝ «ժողովուրդիդ քարոզի...»: Էլ չեն գիտում, թե ժողովրդի գլուխն էնքան ա հաստացել, որ մամռակալել ա: Էս քրեվբեն՝ ո՞վ գիտի՝ հիմի նրա համար էկավ ուստի սազը խլեց, որ ինձ զգուշացնի, միտս բերի մեր էրեխոց գրածը, թե չէ՝ մի օր էլ կգա իմ փիլոնը կխլի» (հ. 4, էջ 132):

Արությունը քննադատական մոտեցում է ցուցաբերում հնացած արժեհամակարգի նկատմամբ՝ նշելով. «Էնդուր ենք վատացել, փչացել, կնիկ դառել, որ մեր պապին թողած բելերին ենք պաշտում, ըղորթը թողած, մեզ սուտ բաներ են քարոզում» (հ. 4, էջ 156): Վեպն ավարտվում է գրողի՝ ապագայի հանդեպ անսահման լավատեսությամբ և հավատով: Աղայանի հերոսի քարոզած գաղափարները խոր արմատներ են ձգում նաև լոռեցի որսորդ Պողոսի հոգում: Նա նահապետականությունը մարմնավորող կերպար էր, և Արությունն սկսում է նոր աշխարհի մասին գաղափարներ քարոզել նրա միջոցով: Պողոսը ոգևորվում է և սպասում է, որ Արությունն իրեն առաջնորդի դեպի նոր աշխարհ: Արությունի տեսակը դառնում է ընդօրինակելի. Պողոսին են հանդիպում Արությունի նման մարդիկ, որոնք նույնպես լուսավոր մտքեր և գաղափարներ են տարածում: Սա հենց հեղինակի նպատակն էր, լուսավորության, նոր գաղափարների տարածման ձգտումը:

Այսպիսով, Ղազարոս Աղայանը, շարունակելով Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի սկսած պայքարը ազգային կյանքի առաջընթացի և լուսավորության բնագավառում, ի տարբերություն նախորդների, ստեղծեց վիպական ժանրի մի նոր տարատեսակ՝ ինքնակենսագրական վեպ: Ստեղծագործության գլխավոր հերոս դարձնելով իրեն՝ գրողը Արությունի կերպարի միջոցով ընթերցողին ներկայացրեց 1850-1860-ական թվականների երիտասարդության հասարակական դիրքորոշումները՝ ներկայացված մտավոր հետամնացության, սնոտիապաշտության ու խավարամտության դեմ պայքարի համատեքստում:

Анна Торосян – *Идейные вопросы в романе Газароса Агаяна «Арутюн и Манвел»*

Статья посвящена всестороннему рассмотрению автобиографического романа Газароса Агаяна «Арутюн и Манвел». Писатель, продолжая борьбу Хачатура Абовяна и Михаила Налбандяна в области прогресса и просвещения национальной жизни, в отличие от своих предшественников, создал новый жанр – автобиографический роман. Изобразив себя главным героем произведения, писатель представил читателю публичные позиции молодежи 1850-1860-ых годов в контексте борьбы с внутренней торговлей, суевериями и невежеством.

Anna Torosyan – *Ideological Issues in “Arutyun and Manvel” by Ghazaros Aghayan*

The article is devoted to the comprehensive review of “Arutyun and Manvel”, the autobiographical novel by Ghazaros Aghayan. Continuing the struggle for progress of the national life and in the field of illumination started by Khachatur Abovyan and Michael Nalbandyan, unlike his predecessors he created a new genre of novel – the autobiographical novel. Turning himself into the main character of the work the writer presented the social views of the 1850-1860s’ youth in the context of struggle against intellectual backwardness, superstition and ignorance.

Ներկայացվել է 08.11.2018

Գրախոսվել է 10.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

**ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՆՐԲԵՐԱՆՔՆԵՐԸ ՀԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ**

Բանալի բառեր – դեռահասներ, աշխարհաճանաչողություն, ինքնաճանաչողություն, սեռական և մահվան բնագղներ, անգիտակցական և ենթագիտակցական շերտեր, սեռական կյանք, վարքագիծ, հոգեկան զարգացում

Միյուրքահայ գրող և քննադատ Հակոբ Օշականի (1883-1948) ստեղծագործություններում նկատելի է փիլիսոփայական, հոգեբանական այս կամ այն հոսանքի գաղափարաբանությունը: Այս մասին բազմիցս վկայում է հենց հեղինակը. «Հոգեբանությունը ախորժակ մըն է վարդապետություն ըլլալէ առաջ, ճարտարություն մը, վէպին ամենէն մեծ առաքինությունը – գործողությունը – փոխադրել արտաքին իրողութեանց ճնշումէն ներքին իրողութեանց կրկէսին»¹: Նման տեսակետները որոշում են գրողի գեղարվեստական հայացքի յուրահատկությունը՝ նայել հերոսների հոգու խորքը, ճանաչել կյանքը և մարդուն: Այս նույն սկզբունքն է ընկած նրա գեղարվեստական համակարգում յուրահատուկ տեղ զբաղեցնող պատանեկության թեմայի արծարծումներում: Այն դրսևորվել է առավելապես ինքնակենսագրական տարրեր պարունակող «Երբ պատանի են» վիպակում (1926 թ.) և «Ծակ-պտուկը»² վեպում³ (1928 թ.):

XX դարի համաշխարհային գրական ուղղությունների (սյուրռեալիզմ, էքզիստենցիալիզմ), մոդեռնիստական պատկերամտածողությանը ներհատուկ իրողությունների (գիտակցության հոսք, ժամանակների ներթափանցումներ)

¹ **Օշական Յ.**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. տասներորդ, Անթիլիաս, 1982, էջ 194:

² Վեպում ոչ մի տեղ չմեկնաբանվող վերնագրի բացատրությունը՝ «Ծակ-պտուկը», ընթերցողը կարող է գտնել «Երբ պատանի են» վիպակի «Դարձը» հատվածում: Ըստ գյուղի բարքերի ու սովորույթների՝ հարսանիքից հետո, երբ հարսը առաջին անգամ դարձ է գալիս հայրական տուն, նրա մայրը մեծ կաթսայի՝ պտուկի մեջ հավով և աքլորով պատրաստված կերակուր է մատուցում տան շուրջը հավաքված գյուղացիներին: Հավը և աքլորը խորհրդանշում են հարսին և փեսային: Ծեսը տեղի էր ունենում միայն այն դեպքում, երբ հարս գնացած աղջիկը կույս էր: Իսկ եթե նա ամուսնությունից առաջ կապ էր ունեցել այլ տղամարդու հետ, ապա նրա անվանը կցվում էր «ծակ պտուկ» որոշիչը:

³ Մեր խնդիրն է քննել Օշականի փոքր արձակի հերոս պատանիների կերպարները: Մակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ծակ-պտուկը» վեպում գրողը ընդլայնում է պատանիների սեռաբանության հարցերի շրջանակը, ուստի այս աշխատանքում անդրադարձել ենք նաև վեպի պատանիների կերպարներին:

համադրությամբ և գեղարվեստական հայացքի յուրահատկությամբ Օշականն իր արձակում պատանիների հոգեբանությունը ներկայացնելու առանձնահատուկ մոտեցումներ է դրսևորում: Մանկության և պատանեկության թեման նորություն չէր հայ գրականության մեջ¹, սակայն նոր էր Օշականի մոտեցումը, որով նա փորձում էր ամբողջականացնել դեռահասի կերպարը²:

Հայ գրականության մեջ Օշականն առաջինն էր, որ պատանիներին «արգելվածի մասին» արտահայտվելու հնարավորություն տվեց. «Ով որ պատանի է եղած, երագած է անշուշտ օր մը բանի մը, գոր վախցած է խօսելու»³: Եվ ահա գրողը իր հերոսների միջոցով պատմում է պատանեկան բարդ ու անհանգիստ ներաշխարհում տեսանելի և գիտակցված, առավել ևս՝ անտեսանելի և չգիտակցված երևույթների մասին՝ ընդգծելով ամենակարևորը, էականը: Նա համոզված էր, որ պատանիների համար, անկախ սոցիալ-մշակութային նորմերից ու արժեքներից, առավել կարևորվում են սեռական ապրումները. «Ըլլա՛յ անիկա քաղաքի մը մէջ, ըլլա՛յ գեղին այգիներուն խորը, պատանի է, որուն համար աշխարհին միւս բոլոր ապրումները գրեթէ կշիռ չունին, բացի այդ մէկէն»: Ուստի Օշականն իր պատանի հերոսների ներաշխարհը բացահայտում է այդ լույսի ներքո՝ սովորական հետաքրքրությունների կողքին ներկայացնելով սեռական ապրումների նկատմամբ երեխաների ճանաչողական հետաքրքրությունը:

«Երբ պատանի են» վիպակի իրադարձությունների կենտրոնում հեղինակ-հերոսն է, որ պատմում է մանկության և պատանեկության տարիներին ապրած հիացմունքների և հիասթափությունների մասին: Գրականագետ Կ. Աղաբեկյանը գրում է. «Եվ նա պատանեկան խանդավառությամբ բացում է իր հոգու ու սրտի դռները, տեսանելի դարձնում հայրենի եզերքի գեղեցկու-

¹ Օշականի մոտեցումներն ու խնդիրները տարբերվում են թե՛ նախորդների՝ Ղ. Աղայանի, Ե. Օսյանի, թե՛ հաջորդների՝ Գ. Մահարու, Ստ. Ջորյանի, Վ. Թորոպենցի, Ջ. Եսայանի և այլոց ինքնակենսագրական վեպերի խնդրադրումներից:

² «Երբ պատանի են» վիպակի նորություններից մեկը նրա կառուցվածքն է, որի ուսումնասիրությունը անհրաժեշտ է երկի լիարժեք քննության համար: Այն կազմված է «Մարօ», «Ալպոմ», «Բուբուլ» մասերից, սրանք՝ առանձին վերնագրեր ունեցող պատմություններից, որոնք իրենց հերթին՝ որոշակի հեռավորությամբ՝ տեսողական-տեխնիկական տեսքով: Գրեթե բոլոր պատմվածքները ունեն արձակի համար արտասովոր տողերի դասավորություն: Երկերը, բացի վերնագրերից, ունեն բառ-ցուցումներ կամ շատ հակիրճ նախադասություն-ցուցումներ, որոնց միջոցով գրողը ցույց է տալիս հիմնականում ծավալվող գործողությունների վայրը, ժամանակը կամ գեղարվեստական այլ նպատակ է հետապնդում: Եվ եթե գրող-ընթերցող կապը քննող տեսաբաններից հետևենք Ու. Էկոյի տեսությանը, թե ստեղծագործությունը հասկանալու համար ամենակարևոր բանալին դրա վերնագիրն է (տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Դիտանկյուն, Երևան, 2015, էջ 59), ապա կարող ենք ասել, որ Օշականի երկերում դրանք հուշող վերնագրեր են: Այս հարցը մեր խնդրի շրջանակում դիտարկելու դեպքում կարող ենք ասել, որ դրանք մատնանշում են նաև հերոսի և սիրած աղջկա հարաբերությունների բնական հաջորդականությունը, անձի հոգեկան զարգացման աստիճանները:

³ **Օշական Յ.**, Երկեր, Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 501:

թյունները, գյուղի բարքերն ու սովորությունները, չկայացած սերերի տառապանքը, կորցրած երջանկության ցավն ու մրմուռը, չվանի վրա կամ լճում իրենց կյանքը վերջակետած գեղեցկուհիների ողբերգությունը»¹: Տարբեր դեպքերի նկարագրությունների կողքին հեղինակը կենտրոնանում է իր ներաշխարհի բացահայտման վրա և զուգահեռ՝ հետաքրքիր ընդհանրացումներ կատարում պատանիների հոգեբանության մասին²: Գրականագետ Վ. Գաբրիելյանը գրում է. «Այս գործերում գրողը հետադարձ հայացքով վերապրում է մանկության ու պատանեկության, ապա և 1915-ի ու հետագա տարիների իր կյանքի պահերը, որոնք, անձնական, անմիջական տպավորություններ լինելով, ընդհանրացնում են ժամանակի պատկերը՝ հայ «պզտիկի» ու «պատանու» սպրումներն ընդհանրապես»³: Կարող ենք ասել, որ Օշականը խոսում է պատանիների լեզվով, պատանիների «միջից»⁴, ինչը գրողի անձնական փորձառության և մարդկային հոգեբանությունը ճանաչելու գրավականն է⁵:

Այս հոդվածի նպատակն է տիպաբանական քննության միջոցով երևան հանել դեռահաս հերոսների սեռական կյանքի հոգեբանական առանձնահատկությունները, նրանց վարքագիծը և գործունեությունը պայմանավորող ներհոգեկան, ինչպես նաև արտաքին պատճառները և զուգահեռաբար ցույց տալ Օշական գրողի մտածողության ինքնատիպությունը: Այս ամենը ներկայացնելու համար որպես առանցքային կերպարներ ընտրված են «Երբ պատանի են» վիպակի պարմանի հերոսը և «Ծակ-պտուկը» վեպի պարմանուհին՝ Նազիկը⁶: Կան դեռահասների այլ կերպարներ ևս, որոնք, որպես օժանդակ կերպարներ, օգնում են ամբողջացնելու դեռահասների հոգեբանության ընդհանուր գծերը:

Առավել նպատակահարմար ենք համարել աշխատանքը քննել հերմենևտիկայի մի շարք հայեցակարգերի (Շ. Օ. դը Սենտ-Բյով, Ֆ. Շլայերմախեր, Վ. Դիլթեյ, Զ. Ֆրոյդ, Դ. Հիրշ) և ֆեմինիստական հերմենևտիկայի մեթոդաբանության համադրությամբ: Քանի որ հերմենևտիկան գործ ունի առավելապես հոգևոր-մշակութային դաշտի իրողությունների հետ, նման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում սոցիալ-հոգեբանական տեսությունների տե-

¹ Աղաբեկյան Կ., Հակոբ Օշական, Երևան, 2006, էջ 74:

² Պատանիների սեռաբանության խնդիրները առկա են նաև Օշականի «Խոնարհները» շարքում: Այս գործերը, սակայն, դուրս են մնացել մեր քննությունից, քանի որ հերոսների մեծ մասը զուրկ է հոգեկան առողջ զարգացումից:

³ Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Երևան, 2016, էջ 57:

⁴ Հր. Մաթևոսյանի այս արտահայտությունը վերաբերում է գյուղացիների մասին գրելու բակունցյան մոտեցմանը (տե՛ս Մաթևոսյան Հր., Ես ես եմ, Երևան, 2005, էջ 220): Պատանիների կյանքի և ներաշխարհի պատկերման հարցում Օշականին ևս բնորոշ է հերոսներին «ներսից խոսեցնելու» հնարքը:

⁵ Հայտնի է, որ Օշականը տասնինը տարեկանից սկսած շուրջ հիսուն տարի հայրենիքի և սփյուռքի տարբեր դպրոցներում զբաղվել է ուսուցչական աշխատանքով, հետևապես լավ ծանոթ էր պատանիների ներաշխարհին:

⁶ Երկերի տարբեր հատվածներում Օշականը նշում է նրանց տարիքը՝ 8-16 տարեկան:

սանկյունից կատարելու միջգիտակարգային վերլուծություն: Ջերծ մնալով միայն մեկ սկզբունքի կիրառման սահմանափակումներից՝ առաջնություն ենք տվել Դ. Հիրշի տեսությանը, քանի որ նա հերմենևտի խնդիրն էր համարում բացահայտումը ստեղծագործության այն իմաստների, որոնք արտահայտում են հեղինակային նպատակադրումը¹: Գիտենք, որ քննադատ Օշականի «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» աշխատության 10-րդ հատորը նվիրված է իր իսկ երկերի քննությանը: Հաշվի առնելով նրա քննադատական մոտեցումները՝ փորձել ենք տալ հեղինակի մտահղացումներին համապատասխան, սակայն, բնականաբար, ոչ նույնական մեկնաբանություն²:

Օշականի հերոսների հոգեւեռական առանձնահատկությունների զարգացման ընթացքը համեմատելիս առավել տեսանելի են դառնում հերոսների՝ կյանքից և հակառակ սեռից ստացած *առաջին* տպավորությունները (սոցիալական ընկալումները), այդ տպավորությունների *զարգացումները* և առաջացրած հակազդումների գեղարվեստական պատկերները: Գ. Ս. Վասիլչենկոյի տեսությունը հնարավորություն է տալիս հետևելու հերոսների գիտակցության զարգացման փուլային ընթացքին³ և կատարելու յուրատեսակ «ճանապարհորդություն» երեխայից դեպի մեծահասակ:

Պետք է նկատել, որ Օշականի հերոսների համար սեռը դառնում է *ինքնաճանաչողության բանալի*: Հերոսներին օժտելով բարձր բանականությամբ՝ գրողը նրանց մղում է ինքնաճանաչողության: Պատանիները զգայական մակարդակից աստիճանաբար բարձրանում են դեպի իմացականը, հասնում ինքնաճանաչողության:

Կերպարների աշխարհաճանաչողությունը սկսվում է դռան կամ պատի անցքից⁴ փողոցի անցուղարձը (որն ըստ էության աշխարհն է) ուսումնասիրելով:

¹ Տե՛ս **Տուրիշևա Օ.Ն.**, Արտասահմանյան գրականության տեսությունը և մեթոդաբանությունը, Երևան, 2017, էջ 240-243:

² Ամերիկյան գրականագետներ Ռ. Ուելլեքը և Օ. Ուորրենը գրականության ու զաղափարների հարաբերության մասին դիտարկումներ անելիս գրականությունը համարում են փիլիսոփայության մի ձև, որպես ձև հագած «զաղափարներ», և դրա վերլուծության նպատակը «հիմնական զաղափարներին» հետևելն է (տե՛ս **Ուելլեք Ռ., Ուորրեն Օ.**, Գրականության տեսություն, Երևան, 2008, էջ 155): Նշեմ, որ Օշականի երկերը տարբերությունների լայն հնարավորություն են ընձեռում: Այդպիսիները Ումբերտո Էկոն փակ տեքստեր է անվանում՝ նկատի ունենալով դրանց ապակոդավորման բազմաթիվ հնարավորությունները (տե՛ս **Քալանսարյան Ժ.**, Գրական հորիզոններ, Երևան, 2008, էջ 20): Ուստի, մեր այս մոտեցումների դեպքում ևս, հնարավոր են նաև հեղինակի կողմից չնախատեսված տարբերակով ընթերցումներ:

³ Մեռային գիտակցության զարգացման մասին տե՛ս **Васильченко Г. С.**, Динамика становления полового сознания как один из аспектов формирования личности // Проблемы клиники и патогенеза психологических заболеваний: Труды Моск. НИИ психиатрии, М., 1974, с. 208-212.

⁴ Փոխադարձ օգնության նպատակով երկու կից տների ընդհանուր պատի մեջ բացված անցքը՝ դրիջակը (*բրբ.*), շփման միջոց է նաև Պ. Պոռոյանի «Հացի խնդիր» վեպի սիրահար հերոսների համար: Գրականագետ Գրիգոր Պըլտյանը Օշականի «Խենթ-Սողմենը» պատմ-

Օշականը գիտակցաբար թե ենթագիտակցորեն մատնանշում է դեռահասներին բնորոշ ծիկրակելու հատկությունը, որից սկիզբ են առնում նրանց աշխարհընկալման փորձերը: Գրողը կյանքի ճանաչողության երեխայի ջանքերը կապում է հակառակ սեռի հետ՝ հաստատելով Ֆրոյդի այն միտքը, թե «ճանաչողության ձգտումը բացառապես վերաբերում է սեռականությանը»¹: Եվ պատահական չէ, որ հերոսների ծիկրակելու գործողությունը գուգորդվում է հակառակ սեռին սպասելու հոգեբանական ապրումով:

Օշականի երկերը ընթերցողի ուշադրությունը առարկայական աշխարհից դեպի հերոսների ենթագիտակցական և անգիտակցական աշխարհն են շեղում՝ արտացոլելով ֆրոյդյան անգիտակցական և ենթագիտակցական ոլորտների աշխատանքը պարզաբանող հիմնադրույթները. «Երբեմն մեր զգայարանքները յանդգնութիւններ ունին, որոնց ծանօթ չենք կամ չենք խորհիր: Բայց անոնք անակնկալ խռովքով մը կը յառնեն մեր մէջ, հոգեկան մեծ փոթորկումներու պահուն»²: Գրողը ցույց է տալիս, թե մանկությունը, նախնական տպավորությունները, երազները, ենթագիտակցական ոլորտներում կուտակված զգացումներն ինչպես են հետագայում «մասնակցում» նրանց կյանքին: Ըստ Օշականի՝ մանկությունն է այն ժամանակահատվածը, «որոնց մեջ մարդը, ապագա մարդը կշինվի, և ուր կերտված մարմինը իր կնիքը կուտա մարդուն մնացած օրերուն»³: Հետևապես, մանկության կարևորումը դառնում է Օշականի գրականության առանցքային հարցերից մեկը, որին գրողը անդրադարձել էր դեռևս իր առաջին՝ «Խոնարհները» ժողովածուում:

Օշականը 1926-1928 թթ. հայ գրականությունն է բերում «անմեղության և անմեղության կորստի» թեման⁴: Մանուկ հասակում մեղքի հետ առնչվելով՝ հերոսները կորցնում են անմեղությունը և իրենց կամքից անկախ՝ մտնում մեծերի աշխարհ: Սեփական մարմնի շոշափումն ու զննումը, մեծահասակներին հետևելը՝ ծիկրակելը, ձևավորում է նրանց ինքնագիտակցությունը: Ծիկրակելու գործողությանը հետևում է տեսածը կրկնելու երևույթը, և դիտորդի դեր ունեցող երեխան, իր կամքից անկախ, դառնում է մեծերի աշխար-

վածքը քննելիս առանձնացում է «ԾԱԿԻ ՏԱԿԷՆ» ենթավերնագիրը կրող մի հատված, որտեղ քննարկում է Օշականի պատմվածքներում հաճախ հանդիպող «ծակի» նշանակությունը: Այն սիրահարների համար ծառայում էր որպես շփման հիմնական միջոց: Գրականագետը նկատում է. «Այդ ծակը մեկ տունէն միւրը հաղորդակցութեան բացուածք մը կը կազմէ, որ տղաքը կը պահէ իրարու մօտ եւ մէջ: Նորավէպին մէջ՝ այդ բացուածքը ռազմագիտական արժէք ունի գրեթէ՝ տղոց համար, մարդոց կառուցած, բաժնած, կտրատած ու սահմանած միջոցին տակ, անկէ անդին» (Պըլտյան Գ., Մարտ, Անթիլիաս, 1997, էջ 124): Մեր կարծիքով, Օշականի հերոսների պարագային այն առաջին հերթին աշխարհճանաչողության պատուհան է, հետո միայն հաղորդակցության սահման:

¹ Փրեյդ Զ., *Очерки по психологии сексуальности*, Минск, 1993, с. 55.

² Օշական Թ., *Ծակ-պտուկը*, Անթիլիաս, 1996, էջ 10:

³ Օշական Զ., *Երկեր*, էջ 30:

⁴ Hurst M. J., *The Voice of the Child in American Literature*, Linguistic Approaches to Fictional Child Language, Kentucky, 1990.

հում տեսածը կրկնօրինակող էակ. «Այն ատեն է, որ մեր պզտիկ շրթունքները իրարու երեսները կը փնտռեն: Մենք ատ բանը տեսած ենք հարսներէն»¹:

«Ծակ-տուկը» վեպի հերոսուհու՝ Նազիկի սեռական վարքի առանձնահատկությունները նրա անցյալի հանրագումարն են: Հերոսներից առավելապես նրա վարքագծում են կարևորվում միջավայրի և ժառանգականության գործոնները: Մանձարձակ վարք ունեցող ծնողների գէների կրողն էր Նազիկը, որը, տակավին մանուկ, բազմիցս ակնատես է լինում սեփական տունը հաճույքի ու խրախճանքի վայր դարձրած հոր վարքին: Աղջկա հոգում բեկումնային են լինում կիսամերկ հարձերի դյուրիչ պարերին հետևելը և ծիկրակելիս նրանց՝ ամբողջովին մերկ, հոր գրկում տեսնելը. «... ան սողուկեցաւ մինչեւ իր հորը սենեակը, ուր գինովները դադրել էին պռռալէ ու լոյսին մէջ տեսաւ այդ «մանչ»երը փաթթուած իր հորը, իրենց ծիծերուն լիբր կծիկները դրած անոր մարմնին: Հասկցաւ՝ բայց ահաւոր ու վճռական կորուստով մը: Այդ գիշերուրնէ անմեղ աղջիկը մեռած էր մէջը»²: Նազիկը գրկվում է մանկությունից:

Եթե տղայի ծիկրակելը հետագայում սահմանափակվում է մեծահասակների կրկնօրինակելով, ապա Նազիկի հոգեբանական արագընթաց զարգացմանը զուգահեռ առաջանում է սեփական մարմինը ճանաչելու, բացահայտելու պահանջ, ինչը նա փորձում է անել հայելու առջև: Պարմանուհուն անհանգստացնում են հատկապես թույլ զարգացած կրծքերը, և նրա մտահոգությունները ապակողավորելու դեպքում հասկանում ենք, որ սեփական մարմնի հետ կապված կոնֆլիկտը առաջանում է մերկ հարձերի «կատարյալ մարմինների» և իր «անկատար մարմնի» համեմատությունից³: Այդ զգացողությունը, որը մանուկ հասակում ստացած տպավորությունների հետևանք է, գլուխ է բարձրացնում Թումասիկի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ. «Յետոյ, կոնակին ետեւէն վար քաշեց պլուզը, որ պրկեց ու ցուցադրեց անոր կուրծքը: Ու կեցաւ: Մտիկ կ'ընէր: Ինքն ալ չէր գիտեր: Երկար ու հանգչեցնող շունչ մը փորձեց: Ու տեսաւ որ նեղ էր կուրծքը: Ու վարանում կար իրմէ ներս: Ուրկէ՛ : Ինչու »⁴:

Գրողը քայլ առ քայլ հասունացնում և հոգեբանորեն հիմնավորում է «նարգիզմի»⁵ դրվագը. «Այսպէս աճած ու խորհրդաւոր, այսքան կանուխէն

¹ **Օշական Յ.**, Երկեր, էջ 519:

² **Օշական Յ.**, Ծակ-պտուկը, էջ 31:

³ Ըստ հոգեբան Է. Էրիկսոնի՝ այս փուլում անձը, այլոց հետ համեմատվելով, վերակառուցում է իր «Ես»-ը՝ (**Эриксон Э.**, Детство и общество, М., 1996):

⁴ **Օշական Յ.**, Ծակ-պտուկը, էջ 8:

⁵ Ֆրոյդը սեռական հակման լիբիդոյի հետ է կապում «նարգիզմ» հասկացությունը (փոխառված է Պ. Նեքքեից), որը հանդես է գալիս այն դեպքում, երբ բացակայում է սեռական օբյեկտը: Այս դեպքում անձը սեփական մարմնի հետ վարվում է նույնպիսի քնքշությամբ, ինչպես որ կվարվեր օտար սեռական օբյեկտի հետ (տե՛ս **Քալանթարյան Ճ.**, Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն, Երևան, 2017, էջ 152):

տոգորուած մանաւանդ սեռին հաճախանքովը, անիկա երբեք չամչցավ ինքնիրմէ, խաղալու համար իր ծիծերուն գրեթէ անգոյ գլխիկներուն հետ»¹: Ի վերջո, տասներկուամյա աղջնակն այդ զգացումներին հագուրդ է տալիս հարևանի թոքախտավոր տղայի՝ Թումասիկի միջոցով: Որոշ գրականագետներ կարծում են, որ Նազիկն ընդառաջ է գնում հիվանդ Թումասի խնդրանքին: Սակայն, մեր կարծիքով, աղջիկը տրվում է Թումասիկին տեսածը կրկնելու, ինչ-որ բան բացահայտելու նպատակով: Եվ եթէ նա ուղարկվեր ոչ թէ Թումասիկէնց, այլ ուրիշի տուն, ապա դրությունը նույնը կլինէր:

Նազիկի կերպարում ենթագիտակցական մղումներին հոգեբանական լուծումներ տալու համար Օշականը դիմում է «էդիպի բարդույթի» (Ֆրոյդ) վկայակոչմանը: Վեպի որոշ հատվածներում նա ներկայացնում է Նազիկի չգիտակցված սեռական հրապուրանքը հոր նկատմամբ: Նման երևույթը Ֆրոյդն անվանում էր «էդիպյան բարդույթ»²: Հայրն էլ իր հերթին ի դեմս աղջկա տեսնում էր տարիներ առաջ մեռած կնոջ հմայքն ու գեղեցկությունը: Վեպում չկա արնետաղծության իրադրություն, պարզապես Օշականը Նազիկի կերպարում բացահայտում է ժառանգաբար փոխանցված մեկ այլ հոգեախտաբանական երևույթ և հոգեբանորեն հանգուցալուծում այն: Հոր հոգեվարքի ժամանակ, երբ աղջիկը ձեռքով հպվում է հորը, անցյալում տեսած, սակայն չգիտակցված երևույթները իմաստավորվում են. «Ու տարուեցավ մտածել բաներու, որոնք տեսեր էր առաջ, բայց ձգեր՝ առանց հասկանալու: Ու սա մահուան մահիճէն անիկա բացատրեց իր հորը հմայքը կիներուն վրայ»³: Այս զգացումները հետագայում ենթարկվում են հոգեբանական մեկ այլ օրինաչափության. Նազիկը սիրում և տենչում է իր հորը հիշեցնող հաղթանդամ ու համարձակ Ջաքարին:

Ի տարբերություն Նազիկի, որի սեռական վարքը պայմանավորված է միջավայրի և ժառանգականության ազդեցությամբ, վիպակի հերոսների վարքը ներկայացվում է որոշակի իրավիճակներում: Հոգեբանական մի շերտ բացելու համար Օշականը դիմում է անդրոգեն մարդու առասպելին և դրա միջոցով գեղարվեստականացնում հերոսների չգիտակցված սեռական հրապուրանքը: Եվ քանի որ «միֆական խոսքը հաղորդագրություն է»⁴, ուստի գրողն ընթերցողին է հուշում գաղափարական իր ասելիքը. մարդը ֆիզիկական սիրո պահանջով ամբողջանում և իմաստավորում է իր կեցությունը:

«Երբ պատանի են» վիպակի հերոսները սկզբում ներկայացված են վաղ տարիքում, երբ ֆիզիոլոգիական հակազդումները դեռևս չունեն զգայական հիմք, այսինքն՝ նրանց ապրումները անբացատրելի և անհասկանալի են:

¹ Օշական Յ., Ծակ-պտուկը, էջ 32:

² Արտահայտությունը վերցված է Մոֆոկլեսի «էդիպ արքա» ողբերգությունից, որի հերոսը սպանում է հորը և ամուսնանում մոր հետ:

³ Օշական Յ., Ծակ-պտուկը, էջ 153:

⁴ Տե՛ս **Բարտ Բ.**, Избранные работы. Семиотика. Поэтика, М., 1989, с. 73:

Անբացատրելի հրապուրանքի հոգեբանական ապրումը զուգորդվում է սև գոգնոցի պատկերով: Մևը դառնում է մութի, անձանոթի անբացատրելի խորհրդանիշ. «Չեմ գիտեր ինչ համ կայ երազկոտ այն գնացքին մեջ, որ տղոց քայլերեն կը թափի, երբ անոնց առջին սեւ գոգնոցով աղջիկներուն խումբն է, որ կը քաշուի վեր, դանդաղ, թերեւս խորհուրդով»¹: Երբ աղջիկների խմբից տղայի համար առանձանում է մի աղջնակ, անբացատրելի խորհուրդը վերածվում է ձգողության ուժի. «Ու այդ տարտամութեան մէջ մեր ձեւերը իրարու կը քաշուին ուժով մը, որ անուն չունի»²: Հոգեբանական զարգացման հետագա ընթացքում կրքի, սիրո ուղեկիցն ու հայտանիշը դառնում է կարմիրը, որը որոշ հատվածներում խորհրդանշում է ֆիզիկական կամ «հոգեկան» մահվամբ ավարտվող ոչ ցանկալի ամուսնությունը:

Հերոսների «պլատոնական» շփումները գրողը ներկայացնում է խաղերի միջոցով և ցույց տալիս, որ սիրահարվածությունը, խանդը, սիրելիի շահերի պաշտպանությունը, սեփական շահերի գոհաբերությունը և այլ զգացմունքներ բնորոշ են նաև երեխաներին. «Ես խելօք տղեկ մըն եմ: Խոյս կու տամ կռիւ եւ կը հաշտեցնեմ զգուրտողները: Բայց անողոք եմ, երբ մէկը համարձակի մատ վերցնել Բուրուլին»³: Կամ՝ «Ձմեռ իրիկունները հեքիաթ մտիկ ընելու ատեն, բոլոր տղոց նման, իրար չենք ուտեր, պատմողին ծունկին համար: Ես կը կենամ ետ, ձեռքովս տեղաւորելով անոր գլուխը հորքուրիս ծունկին: Ան նեղուելով, ինքզինքը պգտիկցնելով, կը ճարէ իմ գլուխիս ալ կտոր մը ծունկ»⁴:

«Սոցիալ-սեռական» խաղերում⁵ արտահայտված են կերպարների սեռադերային դիրքորոշումները, մոդելավորված են հայկական ընտանիքները և ընտանեկան հարաբերությունները:

Աստիճանաբար տղայի կերպարում մեծանում է սեռային տարբերությունների գիտակցման աստիճանը: Հերոսների հարաբերությունները նոր երանգ են ստանում, և խաղերի ընթացքում տղայի քայլերն ընկալվում են որպես յուրօրինակ սիրահետման փորձ: Այս դեպքում բացահայտվում են սեռերի միջև առկա հոգեբանական որոշ տարբերություններ: Կարևորվում է նաև մեկ այլ հատկանիշ. Օշականը բացահայտում է սեռական և ոչ սեռական ապրումների անքակտելի կապը:

Չգիտակցված ներքին զգացումը աստիճանաբար վերածվում է գիտակցված սեռական հակման: Այդ անցումը Օշականը բավականին հետաքրքիր է կատարում: Թե՛ Նազիկի և թե՛ հեղինակ-հերոսի՝ հակառակ սեռի փորձառությանը ենթարկվելու ձգտումը սկզբնապես պարզապես տա-

¹ Օշական Յ., Երկեր, էջ 493:

² Նույն տեղում, էջ 498:

³ Նույն տեղում, էջ 521:

⁴ Նույն տեղում:

⁵ րտահայտությունը վերցված է՝ **Հարությունյան Մ.**, Մարդու հոգեսեռական զարգացման հիմունքները, Երևան, 2004, էջ 116:

բուն հաղթահարելու միջոց է: Հետո իրական կիրքն ու վայելքը կերպարները զգում են միայն սիրած էակի հպումներից:

Պատանիների նախնական անմեղությունը Օշականի պատկերած աշխարհում ստանում է հետևյալ բնութագիրը. «Ու մաքուր կաւ էր անոնց (պատանիների – Մ. Ղ.) խմորը, դեռ կնոջ մը խմորէն չքացխած»¹: Կնոջ մարմինը տակավին չճանաչած պատանու զգացմունքների մեջ իշխող է դառնում անսահման հիացումը կնոջ մարմնական գեղեցկության նկատմամբ: Քաղաքում կնոջ փորձառությանը ենթարկվելուց հետո փոխվում են տղայի զգացմունքները գյուղում ապրող սիրած աղջկա նկատմամբ: Պլատոնական շփումների ցանկությունը վերածվում է ֆիզիկական մերձեցման ձգտման, որը առավել է սրվում սեռական սահմանափակման հետևանքով: Եթե կույսին վերաբերող հատվածներում ընդգծվում են սիրո և բնապատկերների նուրբ առնչություններ, ապա հասուն կնոջ նկարագիրը հատկանշվում է տարփանքի ցայտուն պատկերներով: Գեղարվեստական տեքստ են ներմուծվում զգայական ընկալումների պատկերներ, որոնք դառնում են սրված զգացողությունների արտահայտման լավագույն միջոցը: Այս առումով հատկանշական է «Դարձը» պատմվածքը, որտեղ գրողը հետաքրքիր մոտեցումներ է ցուցաբերում զգայական ընկալումների և հերոսների հոգեվիճակի պատկերման նկատմամբ: Հատկանշական են հոտի և ձայնի զգայական ընկալման դրսևորումները, որոնք ծառայում են մերթ կնոջ գեղեցկության և նրա թողած ազդեցության պատկերմանը, մերթ գյուղական անցյալի և կամ այն իրականության կենդանագրմանը, որի մեջ ապրում էին պատանիները: Հարյուրավոր դժբախտ պատանիների ողբերգությունը, որոնք ստիպված էին ամուսնանալ հետևելով գյուղի բարքերին, Օշականը արտահայտում է բույրի զգայական ընկալումների միջոցով: Այս դեպքում արդեն բուրմունքը վերածվում է գարշահոտության:

Պատանու կերպարի հոգեբանական մեկ այլ շերտ դիտելի է դառնում այն ժամանակ, երբ ամուսնացած Բուբուլի նկատմամբ հերոսը միաժամանակ համակրանքի և հակակրանքի զգացում է ունենում: Կույսի՝ տաճար հիշեցնող մարմնի երբեմնի գեղեցկությունը՝ հակադրվում է մսե զանգվածի նմանվող մարմնի թողած տպավորությանը՝ սիրո, կրքի ու խանդի ծանր ապրումների հերթագայությամբ:

Օշականի հիշյալ երկերի դիպաշարերը զարգանում են հոգեբանական գործողություններով, որոնց խորքում գործում են երկու առանցքային՝ *սեռական և մահվան (էրոս և թանատոս) բնագղներ*: Պատմվածքներում և հատկապես վեպում սիրո ու մահվան պատկերները հաջորդում են միմյանց, և կերպարների հոգեբանական շերտերը բացահայտելիս Օշականը գեղարվեստորեն իրացնում է էքզիստենցիալիզմի փիլիսոփայության դրույթները: Երկերում կան և՛ օտարացման, և՛ սահմանային վիճակների, և՛ միայնության դա-

¹ Օշական Յ., Մնացորդաց, հ. Բ, Անթիլիաս, 1988, էջ 131:

տապարտվածության, և՛ մահվան մասնակի դրսևորումներ, որոնք հոգեբանորեն հիմնավորված են:

Գրեթե բոլոր կերպարներն այս կամ այն չափով առնչվում են *մահվան* հետ: Նրանցից շատերի համար մահվան մասին խորհրդածելը դրա առեղծվածը ըմբռնելու անորոշ ձգտում է: Իսկ ահա կյանքի և մահվան սահմանին գտնվող տասնհինգամյա Թումասիկի կերպարը գոյի հավերժական խնդիրների արծարծման գեղարվեստական հնարավորություն է դառնում: Նրա կերպարի էական բաղադրիչը կյանքից վերջին քաղցր վայրկյանները խլելու դրվագներն են միայն: Մեռնող պատանու մեջ Նազիկը առավել է սրում կյանքի ծարավը և գոյատևելու կորով տալիս: Նազիկենց բակից մինչև «հանցանքի» սենյակ տանող ճանապարհը, ըստ էության, Թումասիկի մաքառումի ճանապարհն է՝ իր գոյության իմաստի և անիմաստության մասին դրամատիկ մտորումներով: Պատումի այս ընթացքում պատանին կենտրոնանում է իր կյանքի իմաստի ըմբռնման և ընկալման վրա: Այս առումով ուշագրավ են մեռնող պատանու դիտարկումները վաղաժամ մեռած հարսի մահվան լուրը լսելու ժամանակ. «Ու անիկա կարգուեցաւ ու ճանչցաւ աշխարհը: Ան կերթայ առնելով ասկէ ինչ որ կրնայ տալ «ասդենականը»¹: Գրողը այս դեպքում ևս սեռը՝ սրված զգացողությունները, համարում է ոչ միայն ինքնաճանաչման բանալի, այլև մարդու գոյության և էության հետ կապված խորքային բացահայտումների միջոց:

Մահվան բնագրի հետ են կապվում պատանիների սուիցիդալ վարքի դրսևորումները: Նրանց սերն արգելված էր, ուստի ողբերգական երանգ է ստանում: Տառապանքի ուժգնությունը ընդգծվում է օքսիմորոնների, հատկապես «ես՝ ձեր պատանի» կիրառությամբ: Միանգամայն հասկանալի են դառնում միայնակ և գյուղի բարքերի դեմ անգոր կերպարների աֆեկտիվ հոգեբանական վիճակը և ինքնասպանություն գործելու որոշումը: Կուտակված զգացումները ծնում են չարության զգացողություն և աշխարհը կործանված տեսնելու ցանկություն. «Որքան կ'ուզեմ, որ ամեն, ամէ՛ն բան փլի իմ շուրջը: Որ սա տունները լիկին ու սմբին հովեն զարնուած սունկերու նման: Որ սա հարսները չորնան ու սեւնան՝ ինչպէս բոցերուն նետուած ծաղիկները: Որ չքանան սա տղաքը, մրջիւններու պէս, մեծ ջուրի մը տակ: Ու մնանք մինակ, անիկա ու ես: Ես ու անիկա սա քարնալիք աշխարհին վրայ»²: Մակայն երկերի հետագա էջերում ընթերցողը տեսնում է իրենց ճակատագրին հնազանդ կամ հոգեպէս ամուր և դիմադրության պատրաստ պատանիներին, և հոգու ամբողջան հատկանիշը առավելապես վերագրվում է պարմանուհիներին:

Օշականը երկու սեռերի հոգեբանության տարբերությունների պատճառները շաղկապում է նախաստեղծ մեղքի մասին պատմող աստվածաշնչյան

¹ Օշական Յ., Ծակ-պտուկը, էջ 41:

² Օշական Յ., Երկեր, էջ 561:

լեզենդին, ըստ որի կինն է ուտում արգելված պտուղը, հասնում իմաստնության և գաղտնիքները ճանաչել տալիս տղամարդուն: Մրանով է պայմանավորված կնոջ՝ կյանքի օրենքների հանդեպ ճկունություն և հնարամտություն ցուցաբերելու հատկանիշը, որի կրողներն են Բեմպեն, Բուբուլը և Նազիկը:

Պատանիների խոհերի միջոցով գրողը ընթերցողի ուշադրությունը սևեռում է սեռային խնդիրների լուսավորման հարցի վրա: Պատանիները սեռի հետ կապված իրենց հուզող հարցերի պատասխանները փորձում են գտնել գրքերում, քանի որ սեռական սիրո մասին գյուղում խոսելը արգելված էր. այն պիղծ և անպարկեշտ երևույթ էր և պետք է մնար ընդհատակում: Մակայն մանկական ու պատանեկան ապրումների, սեռական վարքագծի ձևավորման գործում առավելապես կարևորվում են ծնողների հետ փոխհարաբերությունները: Ճիշտ է նկատում Մարի Ռոզ Աբուսեֆյանը, երբ Նազիկի «Ծակ պտուկ» դառնալու հանգամանքը բացատրում է ընտանիքի արհամարհական վերաբերմունքով¹:

Չկարողանալով արտահայտել իրենց ներաշխարհի փոթորկումները՝ պատանիները մեկուսանում են և ստեղծում իրենց մտացածին աշխարհը, որը հատկանշվում է կերպարների էրոտիկ երևակայությամբ, ենթագիտակցական շերտերում կուտակված վերհուշների, վերապրումների ու մղձավանջների արտահոսքով (Ֆրոյդ, Յունգ): Հետևապես, ըստ Օշականի, ֆանտաստիկ կենսագագացողությունը, որն ի հայտ է գալիս հիմնականում արտաքին աշխարհի հետ կապերի խզման հետևանքով, առավել բնորոշ է պատանեկան տարիքին:

Արագ և բուռն ընթացող հուզական գործընթացները հերոսները հաղթահարում են կամային ջանքերի միջոցով: Նրանց կամքը կապվում է բանականության, բարոյականության և հոգեկան այլ երևույթների հետ²:

Հնարավորություն ունենալով տիրելու «միսովն ու հոգիովը անպաշտպան» աղջկան՝ վիպակի հերոսը չի դիմում այդ քայլին՝ պաշտպանելով աղջկա վտանգված պատիվը: Վարդավառի գիշերը Բուբուլի թաց ու խելքահան անող մարմնի գեղեցկությունն աչքերի առջև, գրեթե մթագնած գիտակցությամբ, երբ տղան պատուհանից մտնում է Բուբուլի սենյակ, այնուամենայնիվ իր մեջ ուժ է գտնում մեղքի սլաքը սիրած աղջկա վրա չուղղելու. «Ու բառ չբացած, նոյնիսկ չհամբուրած, ես կը դնեմ աղջիկը բարձին ու կը

¹ **Աբուսեֆյան Մ. Ռ.**, Հակոբ Օշականի «Հարյուր մեկ տարվան եռագրությունը», Երևան, 2011, էջ 161:

² Պետք է նշել, որ Օշականի՝ կամքի մասին ընկալումները համընկնում են Էկզիստենցիալիզմի փիլիսոփայական ըմբռումներին: Էկզիստենցիալիստները, չժխտելով, որ մարդու գոյությունը պայմանավորվում է կյանքի կամքով (Շոպենհաուեր) կամ ուժի կամքով (Նիցշե), սահմանեցին կամքի երրորդ տարբերակը՝ կյանքի իմաստը փնտրելու կամքը (տե՛ս **Մեդրակյան Ա.**, Ակնարկներ արտասահմանյան գրականության պատմությունից, Երևան, 2016, էջ 101-102): Ահա կամքի փիլիսոփայական այս ըմբռումն է ընկած Օշականի գեղարվեստական համակարգում:

նետուիմ դուրս»: Նա իրեն դրսևորում է որպես հոգեպես հասուն, բարոյական բարձր արժեքներ ունեցող անձ, իսկ բարոյական զգացմունքների զարգացումը անձի ընդհանուր բարոյահոգեբանական զարգացման և հասունացման էական կողմերից է: Հենվելով Ստ. Վասիլչենկոյի և Ե. Արկինի տեսությունների վրա՝ կարող ենք ասել, որ ռոմանտիկ փուլում ապրած զգացմունքները հետագայում թույլ չեն տալիս, որ նրանց սերը վերածվի հեշտասիրության:

Օշականը համոզված է, որ մարդու հոգեկան կյանքից հնարավոր չէ վերացնել սեռական բնագործ: «Մեր կեանքը դեռ չէր ազատագրուած կենդանականին – կը գրեմ բառը՝ *անասնականին* ընդհանուր ճնշումէն»¹,– գրում է Օշականը: Անասնական բնագործների առաջացման պատկերներ պատմվածքներում չկան: Սեռական բնագործ առավել ընդգծված է Նազիկի կերպարում, որի միջոցով գրողը հոգևորի և մարմնավորի բարդ ներդաշնակումներով բացահայտում է իսկական սիրո իր ըմբռնումը: Իր կյանքում Նազիկն ունենում է երեք տղամարդ, երկուսը՝ հիվանդոտ, որոնց հետ կենակցելիս ուզում էր հագուրդ տալ միայն իր սեռական բնագործներին: Մական սիրում և ձգտում է առողջին՝ Զաքարին: Հետևապես, հիվանդ-բնագործ միասնությունը Օշականի արձակում հակադրվում է առողջ-սեր միասնությանը:

Օշականի պարմանուհիները սոցիալականացման ընթացքում ընկալում են հասարակական ու մշակութային երևույթները, իսկ հետո վերափոխում դրանք սեփական արժեքային դիրքորոշումներին համապատասխան: Սա էլ այն առանձնահատկությունն է, որը աղջիկների պարագայում պատճառ է դառնում ըմբռստանալու գյուղի բարքերի դեմ, որակվելու «ծակ պտուկ» (ոչ կույս) և կնքելու մահկանացուն:

Հարկ է նշել, որ նրանց համոզմունքների ձևավորումը զուգակցվում է հոգեկան բախումներով, և դա դառնում է բարոյագիտության խնդիրները քննելու յուրատիպ գեղարվեստական հնարք: Միննույն երևույթին հասարակության և հերոսների տված տարբեր գնահատականները արտահայտում են բարոյականության հարաբերականությունը, իսկ ավելի լայն առումով՝ օբյեկտիվ իրականության հանդեպ մարդու սուբյեկտիվ վերաբերմունքը: Օշականը սահմանագիծ է անցկացնում «մեղքի բաժակը» ճաշակած պատանիների ըմբռնումների և մարդկային աղավաղված բարքերի միջև: Գեղարվեստական այս դաշտում դեռահասները դառնում են ողբերգական կերպարներ: Մեծահասակների կյանքը նրանց համար անվերջանալի սխալների շղթա է թվում, իսկ իրենք՝ այդ սխալների գոհերը: Իրական աշխարհի և պատանեկան աշխարհների տարբերությունը ներկայացվում է գյուղ-լեռ

¹ **Օշական Յ.**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, տասներորդ հատոր, Անթիլիաս, 1982, էջ 170:

հակադրությամբ¹: Լեռը պատանեկան ներաշխարհի խորհրդանիշն է, գյուղը՝ դաժան իրականության, իսկ գյուղի՝ դագաղների նմանվող տները՝ առանց սիրո կամ սիրո ողբերգությունն ապրած անհատների:

Ամուսնացած Բուրուլի և պատանու մերձեցումից հետո հոգեբանական ապրումները Օշականը պատկերում է՝ հիմնվելով աստվածաշնչյան մոտիվների վրա: Առանց Պետրոսի ուրացման դրվագի հետ ուղղակի զուգահեռների՝ վիպակի այդ հատվածը զարգանում է աստվածաշնչյան սյուժեի դրվագով: Տեղի էր ունեցել դավաճանություն, ուրացում, և լուսաբացին դրան հաջորդում է երեքանգամյա աքլորականչը: Հագուրդ տրված սիրո և կրքի զգացումին հետևում է մեղքի գիտակցությունը, ինչը առաջացնում է ներքին կոնֆլիկտներ: Սա թույլ է տալիս ասելու, որ գրողը սեռի խնդիրը դիտարկում է նաև կրոնականի համատեքստում:

Հերոսները կանգնում են հոգեբանական փակուղու առջև, մշտապես ճնշվում մեղքի զգացումից: Եվ որքան ավելի են կենտրոնանում այդ մտքերի վրա, այնքան ավելի է սրվում ներքին կոնֆլիկտը:

Նազիկի սեռական անհագուրդ ցանկության և մեղքերի գիտակցման միջև առաջանում է ներքին կոնֆլիկտ, որը ծնվում է Ջաքարի նկատմամբ զգացմունքին զուգահեռ: Նախկինում սեռական բնագոյները սանձել չկարողացող պարմանուհին դառնում է իր մեղքերի գիտակցմանը հասած մի կերպար և որոշում իր վարքագծի ճիշտն ու սխալը: «Կի՛ն, թե պոռնիկ» հարցը, որ հայտնվում է Նազիկի մտորումների կենտրոնում, աստիճանաբար ստանում է իր պատասխանը. «Պոռնի՛կ: Հիմա կը զգար, որ չէր անիկա: Ու կը հերքեր իր **առջի** մտավախությունները... Իր սերը կը փռուեր վրան, օրհնուած իսկութեան մը պէս, ողողելով իր բոլոր մասերը: Ու **տարբեր** էր զգացումը, որ զինքը մինչև հոն էր վագուցեր»²: Գեղարվեստական այս պատկերը ապացույցն է նաև այն բանի, որ պատանիները նույնպես կարող են բարոյական դատողություններ անել, և նրանց բարոյական ընկալումները կարող են փոփոխվել: Վեպի սկզբում մենք տեսնում ենք միայն տարփանքի իշխանության տակ գտնվող դեռահասին, իսկ հետագա էջերում՝ անձնագոհության պատրաստ կնոջը: Նազիկի հոգեմարմնական փոփոխությունների մասին գրականագետ Լ.-Լ. Մեյրանյանը գրում է. «Իսկ Ջաքարը առնականի և հերոսականի, վեհի, գեղեցիկի ու ողբերգականի խտացումն է վեպում, որի կերպարում սեռը վերաճում է սիրո, և դրա շնորհիվ էլ պոռնիկը դառնում է կին. ճշմարիտ արական սկիզբը Նազիկի ախտավոր իգականության զանգումով նրա կանացիության անաղարտ ակունքներն է բացահայտում»³:

¹ Օշականի ստեղծագործության մեջ լեռ-գյուղ հակադրության մասին տե՛ս **Մեյրանյան Լ.-Լ.**, Օշականի տիեզերքը շարժող ուժերը // «Գրականագիտական հանդես», 2010-2011, Երևան, 2011, էջ 224-225:

² **Օշական Յ.**, Ծակ-պտուկը, էջ 296:

³ **Մեյրանյան Լ.-Լ.**, նշվ. աշխ., էջ 218:

Օշականը Բեմպեի, Բուրուլի, Նազիկի կերպարներով 1926-1928 թթ. բերում է երկու սեռերի՝ սեռական սիրո մեջ հավասար իրավունքի խնդիրը և կնոջ սեռական իրավունքի շեշտադրմամբ հաստատում է նաև սեփական ճակատագիրը տնօրինել ցանկացող կնոջ իրավասությունը: Սա, ըստ ֆեմինիստական գրաքննադատության¹, գրականության մեջ արտահայտված արական մշակույթի կարծրատիպերի քողագերծում է տղամարդ հեղինակի կողմից, որը կնոջ սեռական ազատության և դրա պատկերման խնդիրը իր գրականության առանցքային հարցերից մեկն է դարձրել:

Որպես ամփոփում կարելի է նշել, որ Օշականն այս երկերում արժանի խորությամբ է ընկալում և իմաստավորում դեռահասի սեռական կյանքի հոգեբանական առանձնահատկությունները: Թեև մեր քննության նյութը մեկ դար առաջ ստեղծված գրականությունն է, սակայն Օշականի առաջ քաշած բոլոր խնդիրները արդիական են: Նրա երկերը թույլ են տալիս մուտք գործել մարդու ներաշխարհի դժվար հասանելի խորշերը, մղում են ինքնաքննության և, որ ամենակարևորն է, պատուհան բացել պատանու հոգեաշխարհի վրա: Կենտրոնանալով դեռահասների հոգեսեռական զարգացման խնդիրների վրա՝ գրողը փորձում է ամբողջացնել առհասարակ մարդ արարածի կերպարը: Սա Օշականի ստեղծագործության այն առանձնահատկությունն է, որով նրա արձակը, կարծում ենք, կարելի է դուրս բերել հայ գրականության շրջանակից և դիտարկել համաշխարհային գրականության համապատկերում:

Марине Казарян – Психологические особенности половой жизни подростков в прозе Акопа Ошакана

В статье методом сравнительной герменевтики рассматриваются психологические особенности половой жизни, а также внешние и внутренние духовные мотивы поведения и деятельности героев-подростков в пьесе “Когда молоды” и романе “Порченная” писателя и критика армянской диаспоры Акопа Ошакана. В ходе исследования выясняется, что Ошакан в своих произведениях с помощью фактов, присущих модернистскому образному мышлению и особенностям художественного взгляда, демонстрирует новые подходы к изучению психологии подростков. Цель писателя – показать, что для подростков, независимо от социально-культурных норм и ценностей, наиболее важными являются сексуальные переживания. Сосредоточившись на проблемах психо-сексуального развития подростков, писатель пытается обобщить целостный образ человека.

Marine Ghazaryan – The Psychological Nuances of the Sexual Life of Adolescents in Hakob Oshagan’s prose

By the application of the method of Comparative Hermeneutics, this article analyzes the psychological peculiarities of the sexual life of teenage heroes of the novel “Being a Teenager” and the novel “The Holy Saucepan” by Hakob Oshagan, an Armenian Diaspora writer and

¹ Տե՛ս Տնօրինող Օ. Ն., նշվ. աշխ., էջ 234:

critic, as well as the internal-psychological and external causes of heroes' behavior and activities. With the combination of the 20th century literature movements, modern ways of thinking and an aesthetic special outlook, Oshagan showed different approaches in his fiction while examining teen psychology. His aim was to show that regardless of socio-cultural norms and values for teenagers, sexual advancement was more important. By concentrating on the issues of development of psycho-sexual development, the writer tried to complete the image of a human being.

Ներկայացվել է 11.01.2019

Գրախոսվել է 17.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԼԻԱՆԱ ՄԱՐԳՍՅԱՆ,
ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼԵԶՈՒՆ. ՇԱՐԱԿՅՈՒՍԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր – իրավական տեքստ, դատական ակտ, հստակություն, պարզություն, դերբայական դարձված, շաղկապ, շարահյուսական հոմանիշներ, ներգործական և կրավորական նախադասություններ, բարդ ստորադասական նախադասություն

Շարահյուսական հոմանշությունը բարդ երևույթ է: Այն, ըստ էության, ընդգրկում է լեզվի շարահյուսական կառուցվածքն ամբողջությամբ: Հոմանշային հարաբերություններով առնչակից են նախադասության տարբեր տեսակներ՝ միակազմ և երկկազմ, դիմավոր և անդեմ, կրավորական ու ներգործական, պարզ ու բարդ և այլն¹: Այս կառույցները, սակայն, դրսևորում են իմաստային և ոճական որոշակի տարբերություններ. առերևույթ նույն միտքն արտահայտող երկու հոմանիշ կառույցներ ունենում են գործառական տարբեր իրացումներ, նախադասության այս կամ այն անդամը շեշտադրելու առանձնակի հնարավորություններ: Այդ իսկ պատճառով իրավական տեքստում պետք է ուշադիր հաշվարկել նախադասության հոմանիշ տեսակների ընձեռած հնարավորությունները. հստակ ու դիպուկ նախադասությունները տեքստը միանշանակ ընկալելու երաշխիք են:

Դեռևս 2002 թ. ընդունված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում էր՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի **ճշգրիտ, հստակ և մատչելի**²: Հետագա տասնամյակում օրենքը տարբեր փոփոխությունների ենթարկվեց: 2018 թ. ընդունված և ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նշված դրույթը դուրս է մնացել³: Անկախ այս հանգամանքից՝ իրավաբանական տեքստի համար **ճշգրտությունը, հստակությունն ու մատչելիությունը** միշտ

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Պառնապյան Ն.**, Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:

² Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մաս, ընդունվել է 2002 թ. ապրիլի 3-ին (էլ. հասցե՝ www.arlis.am/documentview.aspx?docID=90941):

³ Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2018 թ. մարտի 21-ին (էլ. հասցե՝ www.irtek.am/views/act.aspx?aid=150549):

էլ պարտադիր որակներ են: Հետևաբար իրավական գրագրության մեջ կարևոր են ոչ միայն հաղորդվող նյութի բովանդակությունը, փաստերն ու փաստարկումները, ձևավորումը, այլև շարադրելու մշակույթը, նախադասության տեսակի նպատակային ընտրությունը¹:

1. Դերբայական դարձվածով պարզ և բարդ ստորադասական նախադասություններ

Դերբայական դարձվածները հնարավորություն են տալիս մեկ նախադասության մեջ միաժամանակ մի քանի գործողություն նշելու: Թերևս այս պատճառով է, որ դրանք հաճախակի կիրառություն ունեն պաշտոնական գրագրության մեջ:

Պաշտոնական խոսքում դերբայական դարձվածով են արտահայտվում գերազանցապես գործողության՝

- **հիմունքը** (հիմունքի պարագան)՝ *հիմք ընդունելով դատարանի որոշումը...; ելնելով վերը նշվածից...; հաշվի առնելով այդ փաստը...;*
- **ձևը** (ձևի պարագան)՝ *բեռնափոխադրողը, հերքելով հայցվոր կողմի մեղադրանքը, նշել է...; ավտոմեքենան, վթարի վայրից տեղափոխելով, կայանել է ՄՊԸ տարածքում,*
- **հակառակ հիմունքը** (զիջման պարագան)՝ *չնայած կողմերի միջև եղած պայմանագրին...; փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու փոխարեն...;*
- **Ժամանակը** (Ժամանակի պարագան)՝ *փաստաթղթերը ներկայացնելիս չեն կցվել...; վթարի վայրում գտնվելիս չի նկատել...;*
- **նպատակը** (նպատակի պարագան)՝ *դատարանը հեռացավ՝ որոշում կայացնելու; կողմերը դիմում են ներկայացրել՝ պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու և այլն:*

Այսօրինակ կառույցները պաշտոնական խոսքի առանցքն են. խոսքին տալիս են որոշակի վերամբարձություն, պաշտոնականություն, նպատում են խոսքի հակիրճությանը, համատեղում են զուգընթաց գործողությունների նկարագրություններ, խոսքը դառնում է ավելի տարողունակ: Այս առումով, իհարկե, մեծ է դրանց դերը: Սակայն, պայմանավորված որոշ նկատառումներով, պետք է հրաժարվել դրանց հաճախակի գործածությունից կամ կուտակումից: Այսպես:

ա) Դերբայական դարձվածների հաճախակի գործածությունը կամ կուտակումը հատուկ չէ հայերենին. հանգեցնում է խոսքի արհեստականության, անհստակության: Եթե խոսքը տալիս է հնարավորություն, ապա երբեմն նպատակահարմար է դերբայական դարձվածները կամ դրանց մի մա-

¹ Իրավաբանական ենթառճի շարահյուսական առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, Երևան, 2003, էջ 51-55, **Ավետիսյան Յու.**, Պաշտոնական ոճ, Երևան, 2011, էջ 55-72:

սը փոխարինել երկրորդական նախադասություններով: **Դիմավոր բայի առկայությունը խոսքին հաղորդում է հստակություն և դինամիզմ:** Օրինակ՝

Արձակուրդ գնալիս, երկարատև գործուղման մեկնելիս կամ այլ պատճառներով բացակայելիս աշխատողը պարտավոր է իր մոտ եղած փաստաթղթերը հանձնել իրեն փոխարինող անձին:

Նախադասության սկզբում «տեղադրված» մի քանի դերբայական դարձվածները թուլացնում են խոսքի տեմպը. նախընտրելի է, որ թավ տրված վերջին կապակցությունը (*իրեն փոխարինող*) ձևակերպվի առանձին նախադասությամբ: **Հմնտ.**՝

⇒ Արձակուրդ գնալիս, երկարատև գործուղման մեկնելիս կամ այլ պատճառներով բացակայելիս աշխատողը պարտավոր է իր մոտ եղած փաստաթղթերը հանձնել այն անձին, ով փոխարինելու է իրեն:

Կամ՝

Դատարանը, գտնելով, որ սույն գործով տրված կատարողական թերթի պարզաբանման անհրաժեշտություն չի եղել, ավելին, դատարանը, բողոքարկվող դատական ակտով պարզաբանելով կատարողական թերթի պահանջները, ըստ էության սահմանել է կատարման ենթակա նոր պահանջներ:

Առավել նպատակահարմար է միտքն արտահայտել առանց դերբայական դարձվածի՝ կոնկրետ ստորոգումով, նաև կարելի է որոշ բառեր փոխել, ինչպես՝

⇒ Դատարանի համոզմամբ՝ այս գործով տրված կատարողական թերթը պարզաբանելու անհրաժեշտություն չի եղել, ավելին՝ բողոքարկվող դատական ակտով դատարանը պարզաբանել է կատարողական թերթի պահանջները և սահմանել կատարման ենթակա նոր պահանջներ:

Ընդ որում, կատարված փոփոխությամբ՝ նախադասության ձևի պարագան (*Դատարանը, գտնելով, որ սույն գործով տրված...*) փոխվում է հիմունքի պարագայի: Խոսքը դառնում է առավել տրամաբանական ու համոզիչ:

բ) Եթե նպատակ կա բուն գործողությանը զուգահեռ ներկայացնելու զուգընթաց գործողություն(ներ), ապա դրա համար դերբայական դարձվածը հարմար, նույնիսկ անփոխարինելի միջոց է: Այդպիսով խոսքը դառնում է ավելի սեղմ, ասելիքը՝ ավելի պարփակ և ամբողջական: Երբեմն, սակայն, ինչ-ինչ նկատառումներով պայմանավորված, իրավակիրառողը դարձվածի միջոցով փորձում է որոշ գործողությունների ընկալումը թուլացնել կամ դրանց տալ ոչ էական նշանակություն: Իսկ երբ դրանք տրվում են առանց շաղկապի կամ հաջորդում են իրար, ապա ավելի է մեծանում ասելիքը բողոքարկելու հավանականությունը. անշաղկապ կառույցները արագ են ընթերցվում, և դարձված(ներ)ով արտահայտված գործողությունը մղվում է երկրորդ պլան: Օրինակ՝

Տարբերակ 1. *Մթության մեջ չկողմնորշվելով, արագ վարելով՝ վթարի էր ենթարկվել:*

Տարբերակ 2. *Մթության մեջ չկողմնորոշվելով և արագ վարելով՝ վթարի էր ենթարկվել:*

Տարբերակ 3. *Մթության մեջ չի կողմնորոշվել և արագ վարելով՝ վթարի է ենթարկվել:*

Տարբերակ 4. *Արագ է վարել և մթության մեջ չկողմնորոշվելով՝ վթարի է ենթարկվել:*

Այստեղ ունենք նույն մտքի ոճական-նրբիմաստային չորս տարբերակ. հմուտ իրավաբանը դրանցից յուրաքանչյուրը կգործածի ըստ հարկի և նշանակության:

Մյուս կողմից, սակայն, իրավաբանական ցանկացած տեքստ պետք է լինի **բաց, հստակ, միանշանակ**: Դրանցում խոսքային հնարներով միտքը քողարկելը չի արդարացվում, և ուստի բնավ հարկ չկա այդ միտումով դիմելու դերբայական դարձվածների:

զ) Միշտ չէ, որ կարելի է դերբայական դարձված գործածել: Դա հնարավոր է դառնում այն դեպքում, երբ գործողությունը, որն արտահայտվում է դերբայով և ստորոգյալով, իրականացնում է միննույն անձը (առարկան): Հակառակ դեպքում ստացվում է երկիմաստություն կամ պարզապես անիմաստություն: Օրինակ՝

Հեռագրերը մատյանով հանձնվում են համապատասխան ծառայությունների օգնական-ռեֆերենտին՝ նշելով ընդունման ամսաթիվը և ժամը:

Այս կառուցից ստացվում է՝ **հեռագրերն են նշում ամսաթիվը:**

Կամ՝ ***Հեռագրերի ընդունումը կատարվում է շրջանառության բաժնում՝ նշելով ամսաթիվը:***

Եվ կամ՝ ***Հաշվի առնելով 2017 թ. բյուջեի պակասուրդի անհամաչափ բնույթը՝ հրատապ է դառնում ծախսերի և եկամուտների համաչափության ապահովումը:***

Այս կարգի սխալներից խուսափելու համար կարելի է՝

➤ *դերբայական դարձվածը փոխարինել առանձին նախադասությամբ՝*

Հեռագրերի ընդունումը կատարվում է շրջանառության բաժնում. նշվում է ամսաթիվը:

➤ *փոխել գլխավոր կամ ամբողջ նախադասության կառուցվածքը՝*

Հեռագրերն ընդունում է շրջանառության բաժինը՝ նշելով ամսաթիվը:

Քանի որ 2017 թ. բյուջեի պակասուրդը անհամաչափ է, հրատապ է դառնում ծախսերի և եկամուտների համաչափության ապահովումը:

դ) Ծատ դեպքերում նախընտրելի է դերբայական դարձվածն արտահայտել համապատասխան ստորադասական նախադասությամբ: Այս կերպ բաղադրիչ նախադասությունների տրամաբանական կապն ու հարաբերությունը առավել ցայտուն են դրսևորվում: Օրինակ՝

Եռօրյա ժամկետում կարող էք հետ վերցնել նույն հողվածի 1-ին մասով նախատեսված՝ աշխատանքային պայմանագիրը աշխատողի նախաձեռ-

նույնապես լուծելու մասին առնվազն երեսուն օր առաջ գրավոր ձևով գործատուին ներկայացված ծանուցումը:

Դերբայական դարձվածների կուտակումը խճողում է միտքը, անհարկի ձգձգում ընկալումը: Խանգարում են նաև ոչ ճիշտ կետադրությունը և շարադասությունը: **Հմտ.**

⇒ **Համաձայն նույն հոդվածի 1-ին մասի՝ եռօրյա ժամկետում կարող էք հետ վերցնել աշխատանքային պայմանագիրը աշխատողի նախաձեռնությամբ լուծելու մասին ծանուցումը, որն առնվազն երեսուն օր առաջ գրավոր ներկայացվել է գործատուին:**

Այլ օրինակ՝

Հայցվորի՝ նախկինում զբաղեցրած պաշտոնն այլ անձի կողմից զբաղեցված լինելու հանգամանքն ինքնին որպես գործատուի և աշխատողի աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն նրակվել չի կարող:

Նախադասությունը կարելի է շտկել երկու տարբերակով:

✓ Որոշիչ դերբայական դարձվածը վերածել ստորադասական նախադասության.

⇒ **Այն հանգամանքը, որ այլ անձ է զբաղեցրել հայցվորի նախկինում զբաղեցրած պաշտոնը, չի կարող դիտվել գործատուի և աշխատողի աշխատանքային հարաբերությունները վերականգնելու անհնարինություն:**

✓ Վերաձևակերպել նախադասության երկրորդ մասը՝ դերբայական ոչ այնքան հարթ կառույցը փոխարինելով ստորոգումով.

⇒ **Այն, որ հայցվորի նախկինում զբաղեցրած պաշտոնը զբաղեցրել է այլ անձ, չի նշանակում, որ այլևս հնարավոր չէ վերականգնել գործատուի և աշխատողի աշխատանքային հարաբերությունները:**

Գարծում ենք՝ երկրորդ տարբերակը առավել հաջողված է. հստակ է և ավելի հարազատ մեր լեզվամտածողությանը:

Կամ՝

Աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ աշխատողի՝ պայմանագրի լուծման ժամկետի և այլ պայմանների վերաբերյալ տեղեկություններ չպարունակող գրավոր առաջարկը և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի հրամանը միասին չեն կարող նույնացվել երկկողմանի համաձայնագրի հետ:

⇒ **Աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ աշխատողի գրավոր առաջարկը, որը պայմանագիրը լուծելու ժամկետի և այլ պայմանների վերաբերյալ տեղեկություններ չի պարունակում, և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի հրամանը միասին չեն կարող նույնացվել երկկողմանի համաձայնագրի հետ:**

Երբեմն դերբայական դարձվածների կուտակումները պարզապես ձախողում են խոսքը: Հակիրճ արտահայտվելու ձգտումը չի իրականանում: Օրինակ՝

Որևէ ապացույց չեն ներկայացրել նաև նշված հարցը ընդհանուր ժողովում քննարկված լինելու կամ այն քննարկման դնելու իրենց պահանջի մերժված լինելու մասին:

Կառույցում երկրորդական նախադասության «ներկայությունը» անխուսափելիորեն անհրաժեշտ է: **Հմմտ.**¹

⇒ Որևէ ապացույց չեն ներկայացրել նաև այն մասին, որ նշված հարցը քննարկվել է ընդհանուր ժողովում, կամ հարցը քննարկելու պահանջը մերժվել է:

Կարծիք կա, որ դերբայական դարձվածները նպաստում են պաշտոնական խոսքի վերամբարձությանն ու հանդիսավորությանը, և որ դրանց բացակայությունը կամ քիչ գործածությունը իրավական խոսքը դարձնում է պարզունակ ու առօրեական: Կարծիք կա նաև, որ ստորադասական նախադասություններն էլ իրենց հերթին ծանրացնում, ձգձգում են ասելիքը: Բերված օրինակներից երևում է, սակայն, որ **որևէ դեպքում մենք հատուկ նախապատվություն չենք տվել միայն մեկին կամ մյուսին:** Առավել հարմար և նպատակային ենք համարել այդ երկուսի համատեղ գործածությունը այն տրամաբանությամբ, որ դրանք ակնհայտորեն հարստացնում են խոսքը, դարձնում բազմազան ու հստակ, միաժամանակ նպաստում են խոսքի պաշտոնական որակների պահպանմանը: Թերևս ավելորդ չէ նշել նաև, որ իրավական փաստաթուղթը, ի տարբերություն, օրինակ, անձի բժշկական (առողջական) տեղեկագրի (հիվանդության պատմության) կամ հաշվապահական հաշվետվության, ուղղվում է ավելի մեծ և բազմաշերտ լսարանի: Այդ իսկ պատճառով հստակ և միանշանակ շարադրանքը պետք է նկատվի իրավական տեքստի անբեկանելի հատկանիշը:

Փաստաթուղթ կազմելիս տեղին կլինի թերևս հիշել հետևյալ խոսքերը. «Ջանացե՛ք, որ նախադասությունները միշտ լինեն կարճ, հասկանալի ու պարզ: Հիշե՛ք, որ Ձեր խնդիրն ամենևին այն չէ, որ լսարանին ցուցադրեք, թե ի վիճակի եք գործածելու դժվարարտասանելի բառեր ու շարահյուսական բարդ կառույցներ (եթե Ձեր նպատակը միայն սեփական կրթվածությունն ու խելքը ի ցույց դնելը չէ), այլ այն, որ Ձեր ունկնդիրները միանգամայն ճիշտ ըմբռնեն այն, ինչ Դուք ցանկանում եք նրանց ասել»¹:

2. Ներգործական և կրավորական նախադասություններ

Դրանց ոճական հնարավորությունները շատ որոշակի են ու հստակ:

ա) Ներգործական նախադասությունը ակտիվ խոսք է, կրավորականը՝ պասիվ: Երկրորդում սովորաբար ընդգծվում է ինքնին կատարման փաստը՝ անկախ այն բանից, թե ով է հատկապես կատարողը. ստեղծվում է մի տեսակ **չեզոք վերաբերմունք:** **Հմմտ.**¹

Վերաքննիչ դատարանը վերանայել է հայցը:

¹ Честара Дж., Деловой этикет (перевод: Бескова Л.), М., 2001, с. 98.

Հայցը վերանայվել է վերաքննիչ դատարանի կողմից:

բ) Կրավորական կառույցները երբեմն անհրաժեշտ են ներգործականների «հարուցած» միօրինակությունը մեղմելու համար, ինչպես՝

Իր ընկերներից X-ի խնդրանքով 24.01.2013 թ. Y-ի փոխարեն Z-ը ամբողջությամբ մարել է վերջինիս պարտավորությունները: ... Առանց որևէ շահունենալու մարել է պարտավորությունը, որպեսզի տունը չանցնի բանկին, իսկ վերջիններս պարտավորվել են մի քանի ամիսների ընթացքում վերադարձնել նրա վճարած գումարը: Հետագայում տունը կրկին ձևակերպվում է Y-ի անունով:

գ) Կրավորականը լեզվական հարմար միջոց է, եթե անհրաժեշտություն է առաջանում կարևորելու ոչ թե գործողություն կատարողին (ենթակային), այլ գործողությունը կամ դրան առնչվող հանգամանքները: **Հմնտ.**

Այդ արարքի համար օրենքը նախատեսում է հետևյալ պատիժը:

Այդ արարքի համար նախատեսվում է հետևյալ պատիժը:

Երկրորդով (կրավորական կառույցով) ընդգծվում է **պատիժ** բառը (այսինքն՝ կարևորվում է պատժի գաղափարը), իսկ առաջինի դեպքում խոսքի կենտրոնում ենթական է՝ **օրենք**-ը: Կամ՝

Տնօրենությունը երկու անգամ զգուշացրել էր աշխատակցին այդ մասին:

Աշխատակիցը երկու անգամ զգուշացվել էր այդ մասին (տնօրենության կողմից -ը պարտադիր չէ):

դ) Կրավորական կառույցները խոսքին տալիս են պաշտոնականության երանգներ և խիստ տարածված են որոշակի փաստաթղթերի լեզվում՝ հաշվետվություն, որոշում, արձանագրություն և այլն: Դատական ակտերում, սակայն, հավասարապես կարևոր են թե՛ կատարողը, թե՛ գործողությունը և թե՛ դրանց վերաբերող հանգամանքները: Կրավորական կազմությունները հասկանալի պատճառներով այդ «հավասարության» հնարավորությունը չեն տալիս: Այս դեպքում առաջին պլան են մղվում ներգործականները:

Ի վերջո, ավելորդ չենք համարում կրավորական կառույցների վերաբերյալ անել մի կարևոր դիտարկում. **կրավորական կառույցները բնորոշ չեն հայերեն լեզվամտածողությանը և գրական հայերենում առանձնապես գործուն չեն:** Եվ եթե փաստաթղթում հատուկ նպատակ չկա կրավորական կառույցի վերը նշված ոճական հնարավորությունները օգտագործելու, ապա նախընտրությունը պետք է տրվի ներգործական նախադասություններին:

Որքանո՞վ են նպատակահարմար, օրինակ, հետևյալ կազմությունները. *դատարանի կողմից որոշվեց նիստը հետաձգել; հայցվորի կողմից ներկայացված փաստաթուղթ; պատասխանողի կողմից մերժված առաջարկ; գործատուի կողմից լուծված պայմանագիր* և այլն: Ընդ որում, հանդիպում են նաև **օրենքի կողմից նախատեսվող...**, **օրենսգրքի կողմից սահմանվող...** սխալ կապակցությունները: **Կողմից** կապը գործածվում է անձ ցույց տվող կամ անձի առմամբ դրված գոյականների հետ (*դատավորի կողմից, ներկայացուցչի կողմից, դատարանի կողմից*): Մինչդեռ իր ցույց տվող գոյական-

ները ներգործող խնդրի պաշտոնում կիրառվում են առանց **կողմից** կապի. դրվում են բացառական կամ գործիական հոլովներով: Ճիշտ են՝ **օրենքով նախատեսվող...., օրենսգրքով սահմանվող....** կապակցությունները:

Տարիների ընթացքում այսպիսիք ավանդույթի ուժով մտել և ամրապնդվել են իրավաբանական գրագրության ու գրականության մեջ, դարձել են մասնագիտական լեզվամտածողության անբաժան տարրեր: Վստահաբար կարող ենք ասել՝ սա իրավաբանական գրագրության խոցելի կողմերից մեկն է: Թերևս ճիշտ կլինի իրավական փաստաթղթերը և ընդհանրապես իրավաբանական ենթառձր բեռնաթափել կրավորական նախադասությունների անհարկի բեռից:

Միտքը ներգործական կառույցներով արտահայտելը ավելի դյուրին է: Բացի այդ, պարտադրվող կապային կառույցները չեն ծանրաբեռնում խոսքը: Բերենք մի քանի օրինակ (ընդգծված են նաև բառերի անհարկի կամ ոչ ճիշտ գործածությունները):

Իր կողմից վճարված գումարի դիմաց անձը գնեց վիճելի բնակարանը:

⇒ *Իր վճարած գումարով անձը գնեց վիճելի բնակարանը:*

Դատարանի կողմից սույն քաղաքացիական գործով իրականացվել է ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատում:

⇒ *Այս քաղաքացիական գործով դատարանը ապացույցները գնահատել է բազմակողմանի և օբյեկտիվ:*

Արտահայտվելու պարզ ու հստակ ոճը միշտ էլ նախընտրելի է: **Հմնտ.**՝

Դատարանի կողմից այդ գործարքը չի կարող կեղծ որակվել որպես կեղծ, քանի դեռ չի ապացուցվել գործարքը կնքած կողմերից մեկից ներկայացված բողոքի հիմնավոր լինելը:

⇒ *Դատարանը այդ գործարքը չի կարող կեղծ որակել, քանի որ դեռ չի ապացուցվել գործարքը կնքած կողմերից մեկի ներկայացրած բողոքի հիմնավոր լինելը:*

...պարզ է դառնում, որ Դատարանի կողմից որևէ կերպ դիմումատուի կողմից վկայակոչված և ներկայացված պահանջի հիմքում դրված իրավական նորմին, դրա կիրառելիությանը անդրադարձ չի եղել:

⇒ *...պարզ է դառնում, որ Դատարանը չի անդրադարձել դիմումատուի վկայակոչած և ներկայացրած պահանջի հիմքում դրված իրավական նորմին, դրա կիրառելիությանը:*

Առանձին դեպքերում կրավորական կառույցները պարզապես սխալ են ձևավորվում և տեղիք են տալիս տարընթերցումների: Դրանից խուսափելու համար ճիշտ կլինի հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք.

- ✓ Ոչ բոլոր ներգործական բայերից է հնարավոր վ-ով կրավորական սեռի բայեր կազմել: Օրինակ՝ **ունենալ** - *ունեցվել* (նկատի է *ունեցվել*), **նախաձեռնել** - *նախաձեռնվել* (*նախաձեռնված* աշխատանքը), **պատգամել** - *պատգամվել* (իրեն *պատգամված* խոսքը...): Մրանք գրական հայերենի համար սովորական կազմություններ չեն:

- ✓ -Վ- ածանց ունեցող որոշ բայեր բազմիմաստ են: Օրինակ՝ **հայտնվել** նշանակում է *ի հայտ գալ, երևան գալ*: Այս բայը գրեթե չի գործածվում **տեղեկացնել, իրազեկել** բայերի կրավորական նշանակությամբ: Մինչդեռ դատական ակտերում երբեմն կիրառվում է հենց վերը նշված նշանակությամբ՝ հանգեցնելով տարընկալման: Օրինակ՝

...հարցը պարզ է դառնում ...կայացած դատական նիստում հենց հայցվորի կողմից Դատարանին հայտնված տեղեկություններից, որոնցով ըստ էության հաստատվել են...

Մի պահ թվում է, թե տեղեկություններն իրենք են եկել, հայտնվել դատարանում, մինչդեռ խոսքը հայցվորի **հայտնած** տեղեկության մասին է: Իմաստային այս շփոթից խուսափելու համար ճիշտ կլինի օգտագործել ներգործական նախադասություն: **Հմմտ.**՝

⇒ *...հարցը պարզ է դարձել ...կայացած դատական նիստում հենց հայցվորի՝ Դատարանին հայտնած տեղեկություններից, որոնցով հաստատվել են...*

Կամ՝ *Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացված չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:*

Կրավորական կառույցի ընտրությունը մի շարք նկատառումներով այս դեպքում նույնպես տեղին չէ: **Նախ**՝ պատճառահետևանքային հարաբերություններն առավել շեշտվում են երկրորդական նախադասությունների միջոցով, հստակ ստորոգումով: Ապա՝ տարբեր են **ներկայանալ** և **ներկայացված լինել** բայերի իմաստները: **Ներկայանալ**-ը ունի մի քանի իմաստ. առաջին իմաստով նշանակում է **պաշտոնական գործով, անհրաժեշտաբար որևէ տեղ գնալ**¹: Ցույց է տալիս ենթակայի ինքնին գործողություն: Այլ է **ներկայացված լինել** կապակցության իմաստը: Այն նշանակում է նաև **ինչ-որ մեկի կողմից ներկայացվել**: Հետևաբար ներգործական կառույցը, ինչպես նաև պայմանի պարագան երկրորդական նախադասությամբ արտահայտելը նպատակային ու տեղին կլինեն: **Հմմտ.**՝

⇒ *Եթե գործի մասնակիցներից որևէ մեկը չի ներկայացել, ապա վճռի օրինակը հրապարակման [օրը] կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:*

Այսպիսով, ներգործական և կրավորական նախադասությունների միջև ընտրություն կատարելիս լավ կլինի հաշվի առնել վերը նշված հանգամանքները:

3. Պարզ և բարդ նախադասություններ

Հայտնի է, որ պաշտոնական լեզվում գերիշխում են բարդ ստորադասական նախադասությունները: Շաղկապներով և հարաբերյալ-հարաբերական-

¹ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, 1969:

ներով (*եթե...., ապա; քանի որ...., ուստի; ոչ միայն...., այլ; ոչ թե...., այլ; այն...., որ; այնպես...., ինչպես* և այլն) կապված կառույցները ձևավորում են խոսքային կուռ միջավայր, ստեղծում են տրամաբանական ամուր կապ, ընդգծում են տեքստի պատճառահետևանքային կառուցվածքը: Սա պաշտոնական ոճի առանձնահատկությունն է: Ավելին, նախադասության տեսակի, շաղկապի կամ ամփոփիչ մեկ բառի ճիշտ ընտրությունը ապահովում է պարբերությունների տրամաբանական կապը և սահուն անցումը: Հիշենք, որ **պարբերությունը** տեքստի այն հատվածն է, որն ունի իմաստային միասնություն և ինքնուրույնություն: Կազմված է առնվազն մեկ նախադասությունից: Բանավոր խոսքում պարբերությունների միջև եղած դադարը ավելի մեծ է, քան նախադասությունների: Գրավոր խոսքում սկսվում է նոր տողից: Պարբերության նախադասությունները բովանդակային, ռիթմահնչերանգային որոշակի կապի ու ներդաշնակության մեջ են: Բնորոշվում է կառուցվածքային, իմաստային ավարտվածությամբ, նաև մասերի համաչափությամբ, կապակցվող տարրերի միատեսակությամբ, բաղադրիչների արտասանական գրեթե նույն տևողությամբ, կառույցների կաղապարային մերձակցությամբ, հնչերանգային հստակ անցումներով և այլն¹:

Ասվածի հաջող օրինակ է հետևյալը.

Տվյալ դեպքում բողոքարեբը Դատարան ներկայացրած դիմումի իրավական հիմքում դրել է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասը: Դրա համաձայն, եթե ֆինանսական առողջացման ծրագիր հաստատված չէ, ապա պարտապան ֆիզիկական անձի վաճառքի ենթակա գույքի կազմում չի ներառվում այն գույքը, որը ձեռք է բերել վերջինիս սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

***Մինչդեռ** բողոքարկվող դատական ակտի պատճառաբանական մասի բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դատարանը չի անդրադարձել դիմումատուի վկայակոչած և ներկայացրած պահանջի հիմքում դրված իրավական նորմին, դրա կիրառելիությանը: Այդ մասով դատական ակտում եզրահանգումներ չկան: Դրա փոխարեն վկայակոչվել են ներկայացված դիմումին և դրա պահանջին չառնչվող նորմեր: Առանց համապատասխան վերլուծության Դատարանը եզրահանգել է **նրան, որ** միջնորդությունը ենթակա է մերժման: **Մինչդեռ** Դատարանի կիրառած հոդվածները հիմք չէին այս գործով ներկայացրած դիմումը մերժելու:*

Այս տեքստը հիմնականում կազմված է բարդ ստորադասական նախադասություններից: Տեղին ու ճիշտ են գործածված տարաբնույթ շաղկապական կառույցները: Ըստ հարկի՝ մեջընդմեջ գործածվել են նաև պարզ նախադասություններ, որոնք աննկատ թերթևացնում, մեղմում են խոսքի ձգձգվածությունը:

¹ Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 525:

Եվ որքան էլ տարօրինակ է, իրավաբանական գրագրության ամենից ճնշող թերությունը հենց ձգձգված, երկար և խրթին նախադասությունների կուտակումն է: Հիմնական պատճառներից մեկը թերևս այն է, որ հաճախ փորձ է արվում մեկ նախադասության մեջ ամբարելու հնարավորինս շատ տեղեկույթ (ինֆորմացիա): Գործողությունը, գործողության հիմունքը, հակառակ հիմունքը, պատճառը, տեղը, ձևը, օբյեկտը, սուբյեկտը հաճախ մեկտեղվում են մեկ նախադասության կազմում: Իրավական փաստաթղթերի խոսքային թերությունների մեծ մասը հենց այսպիսի կառույցների հետևանք է: Երկարուձիգ նախադասություններում շատ անգամ աննկատ են մնում քերականական սխալը, անհարկի բառօգտագործումը: Բերենք ընդամենը մեկ օրինակ:

ՀՀ աշխ. օր.-ի 110-րդ հոդվածի 1-ին մասը դրանում պարունակվող բաների և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանելու արդյունքում ակնհայտ է, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծված կարող է համարվել բացառապես այն դեպքում, երբ այդ պայմանագրի լուծմանը հետամուտ կողմը մյուս կողմին ներկայացրել է պայմանագիրը լուծելու վերաբերյալ գրավոր առաջարկ, և մյուս կողմն էլ յօթնօրյա ժամկետում իր համաձայնության մասին ծանուցել է առաջարկ ներկայացրած կողմին, ընդ որում, այդ ծանուցումն էլ պետք է հաջորդի պայմանագրի լուծման՝ փոխադարձաբար համաձայնեցված ժամկետը և այլ պայմանները սահմանող երկկողմանի գրավոր համաձայնագրի կնքումը, ինչը նշանակում է, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելու գործընթացի շրջանակներում համապատասխան գրավոր առաջարկ ստացած գործատուի կողմից այդ առաջարկն ստանալու օրվան հաջորդող յոթնօրյա ժամկետի ընթացքում աշխատանքային պայմանագիրը լուծելու (աշխատողին աշխատանքից ազատելու) մասին անհատական իրավական ակտ կայացվել չի կարող, քանի դեռ աշխատողը ծանուցված չէ գործատուի համաձայնության մասին, և քանի դեռ կնքված չէ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ երկկողմանի գրավոր համաձայնագիր (այլ կերպ ասած՝ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ աշխատողի՝ պայմանագրի լուծման ժամկետի և այլ պայմանների վերաբերյալ տեղեկություններ չպարունակող գրավոր առաջարկը և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի հրամանը միասին չեն կարող նույնացվել երկկողմանի համաձայնագրի հետ, քանի որ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրաման կարող է արձակվել միայն աշխատողի և գործատուի երկկողմանի համաձայնագրի հիման վրա՝ դրանով պայմանագրի լուծման բոլոր պայմաններն արդեն իսկ փոխադարձաբար համաձայնեցված լինելու պայմաններում):

Գրեթե մեկ էջ ձգվող մեկ նախադասություն: Սա այն նմուշ-օրինակներից է, որը ցույց է տալիս, թե **ինչպես չի կարելի գրել**: Թերևս բացառվում է, որ հմուտ իրավաբանն անգամ միանգամից ընկալի այսպիսի տեքստը: Եթե

նույնիսկ մի կողմ թողնենք խմբագրելու ենթակա լեզվական որոշ անճշտություններ, ապա գոնե կարելի էր բազմաբաղադրիչ նախադասությունները միմյանցից տրոհել վերջակետերով: **Հմտ.**՝

⇒ **ՀՀ աշխ. օր.-ի 110-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությամբ՝ ակնհայտ է, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կարող է լուծված համարվել բացառապես այն դեպքում, երբ այդ պայմանագիրը լուծել ցանկացող կողմը մյուս կողմին ներկայացրել է պայմանագիրը լուծելու վերաբերյալ գրավոր առաջարկ: Մյուս կողմն իր հերթին յոթնօրյա ժամկետում իր համաձայնության մասին ծանուցել է առաջարկ ներկայացրած կողմին: **Ընդ որում, այդ ծանուցմանը պետք է հաջորդի երկկողմանի գրավոր համաձայնագրի կնքումը, որը, փոխադարձաբար համաձայնեցված, սահմանում է ժամկետը և այլ պայմաններ: Սա նշանակում է, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելու գործընթացի շրջանակներում համապատասխան գրավոր առաջարկ ստացած գործատուն այդ առաջարկը ստանալու օրվան հաջորդող յոթնօրյա ժամկետի ընթացքում աշխատանքային պայմանագիրը լուծելու (աշխատողին ազատելու) մասին անհատական իրավական ակտ չի կարող կայացնել, քանի դեռ աշխատողը ծանուցված չէ գործատուի համաձայնության մասին, և քանի դեռ կնքված չէ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ երկկողմանի գրավոր համաձայնագիր: (Սյլ կերպ ասած՝ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ աշխատողի գրավոր առաջարկը, որը պայմանագիրը լուծելու ժամկետի և այլ պայմանների վերաբերյալ տեղեկություններ չի պարունակում, և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի հրամանը միասին չեն կարող նույնացվել երկկողմանի համաձայնագրի հետ, քանի որ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրաման կարող է արձակվել միայն աշխատողի և գործատուի երկկողմանի համաձայնագրի հիման վրա: **Ընդ որում, հրամանն արձակվում է, եթե պայմանագրի լուծման բոլոր պայմաններն արդեն իսկ փոխադարձաբար համաձայնեցված են):******

Այստեղ թերևս տեղին է հիշել ՀՀ Կառավարության՝ 2012 թ. ապրիլի 5-ի արձանագրային որոշումը, որում հավելվածով տրված են իրավական ակտերի նախագծեր կազմելու մեթոդական ցուցումները¹: Նշվում է.

- Մեկ նախադասությունը պետք է մեկ միտք արտահայտի: Մեկ գլխավոր ու մի քանի երկրորդական նախադասություններից բաղկացած երկար նախադասությունները ճիշտ կլինի բաժանել մի քանի պարզ նախադասությունների:
- Քանի որ երկար պարբերությունները դժվարընթեռնելի և դժվարընկալելի են, հոդվածի բովանդակությունը պետք է բաժանվի համապա-

¹ Տե՛ս www.e-gov.am/protocols/item/159/

տասխան մասերի (կետերի, ենթակետերի)՝ մտքի տրամաբանական զարգացմանը համապատասխան: Սակայն դա չի նշանակում, որ նախադասությունները պետք է արհեստականորեն և անհարկի մասնատվեն:

- Նախադասության տարբեր մասերի միջև քերականական կապը պետք է հստակ լինի: Պետք է պարզ լինի՝ ենթական վերաբերում է գլխավոր, թե՞ երկրորդական նախադասության ստորոգյալին:
- Նախադասությունների կառուցվածքին վերաբերող վերոհիշյալ կանոնների պահպանումը անհրաժեշտ է պարզ կառուցվածքով հոդվածներ ունենալու և դրանց կիրառումը, ինչպես նաև հոդվածում հետագա փոփոխություններ և լրացումներ կատարելը հեշտացնելու համար¹:

Եթե անգամ մեթոդական այս ցուցումները ներկայումս օրենքի ուժ չունեն, միևնույն է, տեղին և առաջնային պահանջներ են բոլոր դեպքերում:

Կամ՝

Հայտնել են, որ Դատարանը երկու տարակարծությունների դեպքում ընդունել է «X» ՄՊ ընկերության դիրքորոշումը, այլ ոչ թե «Y» ԻԱՄ-ի կողմից նշանակված փորձաքննության արդյունքների շուրջ Դատարանում որպես վկա հարցաքննված փորձագետ X-ի դիրքորոշումն այն մասին, որ, ուսումնասիրելով շուկան, պարզել է, որ 2016 թվականին նման մեքենան արժե 2.456.000 ՀՀ դրամ գումար, որը 560.000 ՀՀ դրամի տարբերությամբ է, չի փորձել հստակեցնել դրանց խոշոր չափի տարբերությունը, ինչպես նաև 4 ամիս ավտոմեքենան շահագործելու ընթացքում մաշվածության գնային արժեքը և կայացրել է չհիմնավորված դատական ակտ:

Մի կողմից՝ դատարանի դիրքորոշում, **մյուս կողմից՝** հարցաքննված փորձագետի դիրքորոշում, **մի երրորդ կողմից՝** մեքենայի արժեք և այլ տեղեկություններ, **ապա՝** չհիմնավորված դատական ակտ: Եվ սրանք բոլորը վերաբերում են ընդամենը մեկ խնդրի: Բացի այդ՝ ծագում է երկու կարևոր հարց՝ **ա)** ո՞րն է մեքենայի արժեքի տարբերությունը, արժեքը պակաս է ներկայացված, թե՞ ավել, **բ)** ո՞րն է նախադասության ենթական՝ դատարանը, թե՞ «X» ՄՊԸ-ն: Երկրորդ հարցի պատասխանը թերևս հնարավոր է ճշտել վերջին մտքով՝ **կայացրել է չհիմնավորված դատական ակտ.** ենթադրվում է՝ խոսքը դատարանի մասին է: Բայց առաջինի պատասխանը անհնար է պեղել: Քանի որ մտքերը խճճված են, կան նաև բացթողումներ ու անորոշ ձևակերպումներ, տեքստի բովանդակությունը չի ընկալվում կամ գոնե դյուրությամբ չի ընկալվում: Այս ամենը ստվերում, նաև կասկածի տակ է դնում տեքստի բովանդակության հավաստիությունը: Դրանից կարելի է խուսափել՝ ներկայացվող հարցի կողմերն իրարից առանձնացնելով: Իսկ դա

¹ Տե՛ս www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/04/qax13-2_1.pdf

կարելի է անել պարզ և բարդ նախադասությունների համատեղ և փոխնիփոխ գործածությամբ, իհարկե, կատարելով նաև խմբագրական որոշ ճշգրտումներ: **Հմմտ.**՝

⇒ Հայտնել են, որ Դատարանը տարակարծությունների դեպքում ընդունել է «X» ՄՊԸ դիրքորոշումը: Դատարանը չի ընդունել «Y» ԻԱՄ-ի նշանակած և որպես վկա հարցաքննված փորձագետ X-ի դիրքորոշումը: Վերջինս, ուսումնասիրելով շուկան, պարզել է, որ 2016 թ. այդպիսի մեքենան արժեք 2.456.000 ՀՀ դրամ, որը 560.000 ՀՀ դրամով ավել է (կամ պակաս): Դատարանը չի փորձել հստակեցնել նաև այս հանգամանքը՝ ավտոմեքենայի արժեքի խոշոր տարբերության չափը, ինչպես նաև չի ճշտել 4 ամիս շահագործված ավտոմեքենայի մաշվածության արժեքը: Ուստի կայացրած դատական ակտը հիմնավորված չէ:

Ի դեպ, նկատելի է, որ նման ձևակերպումներում տեքստի հեղինակը, փորձելով առավել հստակ ներկայացնել ասելիքը, հաճախ գործածում է հավելյալ լեզվական միջոցներ (այլ կերպ ասած, այսինքն, ըստ էության և այլն) կամ օգտվում է ներդրյալ նախադասություններից: Օրինակ՝

Հայցադիմումը վարույթ ընդունելիս Դատարանը ստուգում և պարզում է հայցվորի՝ հայց հարուցելու իրավունքի առկայությունը, այսինքն՝ հայց հարուցելու իրավունքի նախադրյալների առկայությունը, ինչպես նաև՝ արդյոք հայցվորը պահպանել է այն հարուցելու (դատարան դիմելու) օրենքով սահմանված կարգը, այլ կերպ ասած՝ պահպանվել են հայցադիմումի գրավոր ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, որոնց չպահպանումը հիմք է հայցադիմումը վերադարձնելու համար (հայցադիմումի ներկայացման պահին գործող 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 92):

Հմմտ.՝

⇒ Հայցադիմումը վարույթ ընդունելիս Դատարանը ստուգում է ինչպես հայց հարուցելու իրավունքի նախադրյալների առկայությունը, այնպես էլ այն հանգամանքները, թե պահպանվել են արդյոք հայցադիմումի գրավոր ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենքով սահմանված պահանջները: Դրանք չպահպանելը հայցադիմումը վերադարձնելու հիմք է (հայցադիմումը ներկայացնելու պահին գործող 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 92):

Այլ օրինակ՝

Այնուհետև բազմիցս հեռախոսակապ է հաստատվել Դատարանի որոշմամբ փորձաքննությանը մասնակից դարձված պատասխանողի ներկայացուցիչ X-ի հետ՝ փորձաքննությանն անհրաժեշտ լրացուցիչ էլակետային տվյալներ, ինչպես նաև հետազոտման առարկա հանդիսացող բնակարանը փորձաքննությանը տրամադրելու համար, սակայն վերջինս հայտնեց, որ պատասխանող կողմը գտնվում է հանրապետությունից դուրս և չի կարող

տրամադրել բնակարանը, հիմք՝ «Y» ՊՈԱԿ-ի 04.02.2016 թվականի թիվ 29521507 եզրակացությունը:

⇒ Սյնուհետև բազմիցս հեռախոսակապ է հաստատվել պատասխանողի ներկայացուցիչ X-ի հետ, որը, Դատարանի որոշմամբ, մասնակից է դարձել փորձաքննությանը: Վերջինիս դիմել են, որպեսզի փորձաքննությանը տրամադրի անհրաժեշտ և էականային լրացուցիչ տվյալներ, ինչպես նաև հետազոտման առարկա բնակարանը: Մակայն նա հայտնել է, որ պատասխանող կողմը հանրապետությունում չէ, ուստի չի կարող բնակարանը տրամադրել հետազոտության համար (հիմք՝ «Y» ՊՈԱԿ-ի 04.02.2016 թվականի թիվ 29521507 եզրակացությունը):

Այսպիսով, շարահյուսական հումանիշ կառույցների ճիշտ ընտրությունը և գործածությունը խիստ կարևոր նախապայմաններ են իրավական փաստաթուղթը հստակ, ճշգրիտ և մատչելի կազմելու համար: Բերված օրինակներից նկատելի է, որ միշտ էլ հնարավոր է ի սկզբանե ընտրել նախադասությունների այնպիսի կառուցվածք, լեզվական այնպիսի միջավայր, որ ասելիքը հավելյալ ճշգրտումների կարիք չունենա: Հիշենք՝ որքան կարճ են նախադասությունները, այնքան քիչ է սխալվելու հավանականությունը:

Юрий Аветисян, Лиана Саркисян, Арсен Мкртчян – Язык правовых документов: выбор синонимических синтаксических конструкций

В статье рассматриваются особенности выбора и употребления синтаксических синонимов в правовых документах. Синонимические отношения подобны различным типам предложения: полные и неполные, активные и пассивные, простые и сложные и т.д. Две синонимические конструкции, выражающие почти одно и то же, имеют разные реализации и обладают особыми возможностями акцентирования того или иного члена предложения. Именно поэтому в правовом тексте важное значение приобретает выбор синонимичного предложения: точные и ясные предложения являются залогом однозначного восприятия текста.

Yuri Avetisyan, Liana Sargsyan, Arsen Mkrтчyan – The Language of Legal Documents: the Choice of Syntactic Synonymous Structures

The article examines the peculiarities of the choice and usage of syntactic synonymous structures in legal documents. Different types of sentence have synonymic relationships: complete and incomplete, passive and active, simple and complex, etc. Two synonymous structures expressing apparently the same idea may have different actualisation and special features to emphasize this or that member of the sentence. For this reason, in legal texts the choice of synonymous types is of great importance: clear and concise sentences are a guarantee of unequivocal perception of the text.

Ներկայացվել է 06.02.2019

Գրախոսվել է 18.02.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱ ԱԶԱՏԱՆ

«ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր – Հայաստանի խորհրդայնացում, Հայիեղկում, բոլշևիկներ, ռազմական կոմունիզմ, բռնագրավումների քաղաքականություն, քաղաքացիական պատերազմ, պատմագրություն

1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով իշխանությունը խաղաղ կերպով շֆ-ից անցավ բոլշևիկներին, սակայն երկրի գլուխ անցած Հայիեղկումը ամենևին հավատարիմ չմնաց կնքված համաձայնագրի կետերին: Վերջինս ամբողջ երկրով մեկ սկսեց իրականացնել հետապնդումներ և անտեղի ձերբակալություններ նախկին կառավարության ու կուսակցությունների անդամների, հայկական բանակի նախկին զորահրամանատարների, ինչպես նաև շարքային քաղաքացիների նկատմամբ: Քաղաքական այս հետապնդումների հետ միաժամանակ Հեղկումը բռնագրավում էր նրանց ունեցվածքը: Փաստորեն, հայ բոլշևիկները կրկնում էին Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին (1918-1920) որդեգրված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում, ինչը խոր դժգոհություն առաջացրեց ժողովրդի շրջանում և պատճառ դարձավ փետրվարյան ապստամբության: Չնայած Խորհրդային Ռուսաստանում կիրառված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը չէր արդարացրել իրեն, Հայիեղկումի անդամները, այդուհանդերձ, ամենևին դասեր չքաղեցին դրանից և Խորհրդային Հայաստանում կրկնեցին դա՝ չգիտակցելով դրա վնասակար հետևանքները:

1920 թ. դեկտեմբերի 8-ին Հայիեղկումը արձակեց «Պարենավորման մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանը¹, որով, փաստորեն, սկիզբ դրվեց բռնագրավումներին:

Խորհրդահայ պատմագրության մեջ այս խնդրի ուսումնասիրությանն անդրադարձել են Բ. Բորյանը, Ա. Հակոբյանը, Հ. Էլչիբեկյանը, Վ. Ներկարարյանը, Ս. Խարմանդարյանը, Բ. Օհանջանյանը, Գ. Ղարիբջանյանը, Ս. Սահ-

¹ Տե՛ս Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, Էջմիածին, 1921, էջ 8:

րադյանը, Ս. Ալիխանյանը, Ի. Թախիրյանը, Վլ. Ղազախեցյանը, Գ. Գեղամյանը, Կ. Սարգսյանը, Յու. Հովսեփյանը և այլք:

Խորհրդահայ պատմագրության մեջ բուռն քննարկման առարկա դարձած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությանն առաջինն անդրադարձել է բոլշևիկ պատմաբան Բ. Բորյանը, և հարկ է փաստել, որ նրա դիրքորոշումն ամենևին դրական չի եղել: Նա մեկ առ մեկ ներկայացրել է դրա բոլոր բացասական հետևանքները. «Հեղկոմը Հայաստանում իրականացրեց անխնա բռնագրավումներ, առանց դասակարգային սկզբունքը հաշվի առնելու, առանց նկատի ունենալու գյուղացիության ընդհանուր տնտեսական դրությունը և նրա հոգեբանական վիճակը: Դրա հետ մեկտեղ բռնագրավումները տեղի էին ունենում անկազմակերպ, առանց ծրագրի, առանց դասակարգային բնույթի և ուղեկցվում էին անհարկի բռնությունների կիրառմամբ»¹: Հեղինակը նշում է, որ Հեղկոմը կոչ է արել բռնագրավել բնակչության պարենը, և դա համատարած բնույթ է կրել: Բ. Բորյանը այս բռնագրավումները չի համարում դասակարգային բնույթի միջոցառումներ, այլ դիտում է իբրև խորհրդային քաղաքականությունը և բոլշևիկյան դասակարգային գաղափարախոսությունը ճիշտ չըմբռնելու հետևանք: Պատժամիջոցներով ուղեկցվող այս միջոցառումները նա իրավացիորեն համարում է փետրվարյան ապստամբության հիմնական պատճառը²: Հարկ է նշել, որ Բ. Բորյանը ժամանակի համարձակ պատմաբաններից էր և իր տեսակետներով հիմնովին տարբերվում էր խորհրդահայ մյուս պատմաբաններից:

Խորհրդահայ պատմագրության մեջ տարածված էր այն տեսակետը, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Հայաստանի համար անհրաժեշտություն էր: Այսպես, Վ. Ներկարարյանը կարծում էր, որ հանրապետության առջև ծառայած խնդիրների լուծման համար աշխատավորական զանգվածներին մոբիլիզացնելու նպատակով պարզապես անհրաժեշտ էր պարենավորման դիկտատուրայի հաստատումը³: Նրա կարծիքով՝ Կոմկուսը և Խորհրդային Հայաստանի կառավարությունը ստիպված էին դիմել «ռազմական կոմունիզմի» քաղաքականությանը⁴: Ծ. Աղայանը գրում է, որ աղքատությունը և երկրի քայքայվածությունը չտեսնված չափերի էին հասել. երկրում զգացվում էր հացի և բոլոր տեսակի մթերքների պակաս, ուստի նման պայմաններում Հեղկոմը մթերքներ ձեռք բերելու համար ստիպված դիմել է արտակարգ միջոցների⁵: Ի. Թախիրյանը, ներկայացնելով հանրապե-

¹ **Борян Б.**, Армения, международная дипломатия и СССР, ч. 2, М.-Л., 1929, с. 126.

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս **Ներկարարյան Վ.**, Հայաստանի կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925), Երևան, 1956, էջ 43:

⁴ Տե՛ս **Неркарарян В.**, О некоторых закономерностях и особенностях строительства социализма в Армении, Ереван, 1967, с. 10.

⁵ Տե՛ս **Աղայան Ծ.**, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, էջ 337:

տությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, փորձում է հիմնավորել, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները ստիպված էին դիմել «ռազմական կոմունիզմի» քաղաքականությանը¹: Վլ. Ղազախեցյանը խորհրդային տարիներին հրատարակած աշխատություններից մեկում թեև գրում է, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն իրականացնելու ժամանակ թույլ տրվեցին կոպիտ սխալներ և աղավաղումներ, բայց, այնուամենայնիվ, կարծում է, որ խորհրդային իշխանությունը ստիպված էր իր գոյության առաջին օրերին Հայաստանում դիմել նման քայլի²: Կ. Սարդարյանը նշում է, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից բխող բռնագրավումները լինելու էին մասնակի, ինչը, հեղինակի խորին համոզմամբ, ստեղծված պայմաններում «անխուսափելի անհրաժեշտություն» էր³: Թեև նա նշում է, որ շուտով պարզվել է, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը լի էր բազմաթիվ վտանգներով և ի վիճակի չէր մեղմելու հանրապետության տնտեսական ճգնաժամը: Սրա պատճառը հեղինակը համարում է այն, որ այդ քաղաքականությունը Հայաստանում կիրառվեց հապճեպ և զգալի շեղումներով⁴:

Խորհրդահայ պատմագրության մեջ մինչև 1970-ական թվականները հրատարակված գրեթե բոլոր աշխատություններում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումը դիտվում էր անհրաժեշտություն: Վիճակը փոխվեց 1970-ական թվականների վերջերին, երբ վերանայվեց նախկին տեսակետը, և մի շարք պատմաբաններ հանգեցին այն եզրակացության, որ Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության իրականացման անհրաժեշտություն ամենեին չկար:

Այսպես, Ն. Էլչիբեկյանը 1978 թ. համարձակորեն նշում է, որ «ռազմական կոմունիզմը» պարտադիր փուլ չէր, որի միջով պետք է անցնեին Հայաստանը⁵: Գ. Գեղամյանը փաստում է, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո Հեղկոմը Ռուսաստանի օրինակով շտապեց կիրառել «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը՝ հույս ունենալով կուտակել անհրաժեշտ քանակի պարենամթերք: Այդուհանդերձ նա գտնում է, որ ավերված ու քայքայված Հայաստանում կարելի էր խուսափել լայնածավալ գործողություններից՝ բավարարվելով սոսկ առանձին բռնագրավումներով⁶: Բ. Օհանջանյանը, Հա-

¹ Տե՛ս **Таирян И.**, Красная армия в борьбе за установление и упрочение советской власти в Армении, Ереван, 1971, с. 195-196:

² Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը (1920-1929), Երևան, 1975, էջ 67-68:

³ Տե՛ս Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922), Երևան, 1987, էջ 11:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 13:

⁵ Տե՛ս **Эльчибекян А.**, От ревкомов к Советам, Ереван, 1978, с. 27:

⁶ Տե՛ս **Գեղամյան Գ.**, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նեպի տարիներին (1921-1936), Երևան, 1978, էջ 29, 36:

յաստանում «ռազմական կոմունիզմ» իրականացնելու հարցը կասկածի տակ դնելով, գտնում է, որ այդ քաղաքականությունը ոչ թե ռազմական կոմունիզմ էր, ինչպես Ռուսաստանում, այլ պարզապես սննդամթերքի բռնագրավումներ¹: Հեղինակը այս առիթով գրում է. «Կյանքը ցույց տվեց, որ բռնագրավումների քաղաքականությունը, որը պատմագիտական գրականության մեջ սխալմամբ համարվել է «ռազմական կոմունիզմ», Հայաստանում չպետք է կիրառվեր»²:

Խորհրդահայ որոշ պատմաբաններ կարծում էին, որ «ռազմական կոմունիզմի» իրականացման պատճառները միննույնն էին թե՛ Խորհրդային Ռուսաստանի և թե՛ Խորհրդային Հայաստանի համար: Ա. Հակոբյանը և Հ. Էլչիբեկյանը գրում են. «Հայաստանի սովետական իշխանությունը, հետևելով Սովետական Ռուսաստանի օրինակին և օգտագործելով նրա ավելի քան երեք տարվա փորձը, իր գոյության առաջին շրջանում, 1920 թ. դեկտեմբերից սկսած մինչև 1921 թ. գարունը կիրառեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը»³: Ս. Սահրադյանը նշում է, որ Հայհեղկոմը, ընդօրինակելով Խորհրդային Ռուսաստանին, որդեգրեց պարենամասնատրման համակարգ՝ նպատակ ունենալով երկիրը դուրս բերել պարենային ճգնաժամից⁴:

Ճիշտ է, Հայհեղկոմն այդ հարցում նմանակեց Խորհրդային Ռուսաստանին, բայց դրա պատճառները երկու երկրների պարագայում ամեննին նույնը չէին: Այն ժամանակ, երբ Խորհրդային Ռուսաստանում սկսվեց կիրառվել «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, երկիրը գտնվում էր քաղաքացիական պատերազմի բովում, ռազմական շրջափակման մեջ, ուստի անհրաժեշտ էր պարեն հայթայթել թիկունքի և ճակատի համար: Մինչդեռ նոր խորհրդայնացած Հայաստանը ո՛չ քաղաքացիական պատերազմում էր, ո՛չ էլ ռազմական շրջափակման մեջ. այլ բան է, որ երկիրը տնտեսական ծանր վիճակում էր գտնվում, որի պարագայում, կարծում ենք, անիմաստ էր «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումը: Առանց այդ էլ տնտեսությունը քայքայված էր: Այդ քաղաքականության հետևանքով երկիրը նաև պառակտվեց, իսկ հակամարտությունը խորացավ:

Խորհրդահայ որոշ պատմաբաններ, արդարացնելով «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, կարծում էին, որ դրա կիրառումը նպաստեց Հայաստանում խորհրդային իշխանության ամրապնդմանը և հետագա զար-

¹ Տե՛ս **Օհանջանյան Բ.**, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Երևան, 1982, էջ 56:

² Նույն տեղում, էջ 61:

³ **Էլչիբեկյան Հ., Հակոբյան Ա.**, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ Ա, Երևան, 1954, էջ 71:

⁴ Տե՛ս **Սահրադյան Ս.**, Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեները Հայաստանում (1917-1922), Երևան, 1961, էջ 86:

գացմանը¹: Թեև խորհրդային տարիներին կային հեղինակներ, որոնք քննադատում էին այս հեղինակների տեսակետը և կարծում, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը զգալիորեն թուլացրեց խորհրդային իշխանությունը Հայաստանում²: Մենք ևս հակված ենք այն տեսակետին, որ «ռազմական կոմունիզմը» խարխլեց Խորհրդային Հայաստանի հիմքերը:

Խորհրդահայ պատմագրության մեջ չկա միասնական կարծիք «ռազմական կոմունիզմի» քաղաքականության ժամկետի վերաբերյալ: Թեև այս հարցը դուրս է մեր քննության շրջանակներից, բայց ցանկանում ենք նշել, որ դեռևս խորհրդային տարիներին պատմաբան Յու. Հովսեփյանը, վերլուծելով առկա տեսակետները, հանգել է այն եզրակացության, որ Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն իրականացվել է 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. ապրիլի կեսերն ընկած ժամանակահատվածում. այնուհետև սկսվել է նահանջն այդ քաղաքականությունից³:

«Ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառման ժամանակ թույլ տրված մի շարք կոպիտ սխալները փաստում են նաև խորհրդահայ պատմաբաններ, սակայն ոմանք պնդում են, որ բռնագրավումները համատարած չեն եղել, այլ տարածվել են միայն կուլակների վրա, իսկ ոմանք փորձում են հիմնավորել պարենմասնատրման անհրաժեշտությունը: Այսպես, օրինակ՝ «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակում նշվում է, որ խորհրդային իշխանությունը պարենային ճգնաժամը մեղմելու նպատակով 1920-1921 թթ. ձմռանը ստիպված է դիմում ունևոր գյուղացիների հացի պաշարների մասնակի բռնագրավումների և սահմանում հացի առևտրի պետական մենաշնորհ⁴: Յու. Հովսեփյանի կարծիքով՝ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ստիպված էր կիրառել պարենմասնատրում, քանի որ դաշնակցական կառավարությունից ժառանգել էր քայքայված, սովի, համաճարակի ու մահվան դատապարտված երկիր: «Մանդամթերքը և առաջին անհրաժեշտության ապրանքները կենտրոնացնելով իր ձեռքում,– գրում է նա,– Հայաստանի կառավարությունը հնարավորություն էր ստանում այն

¹ Տե՛ս **Хармандарян С.**, Армянская ССР в первый год Новой экономической политики (1921-1922), Ереван, 1955, с. 73, **Հակոբյան Ա.**, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Երևան, 1955, էջ 59, **Ներկարարյան Վ.**, նշվ. աշխ., էջ 46, **Սահրադյան Ս.**, նշվ. աշխ., էջ 87-88:

² Տե՛ս **Օհանջանյան Բ.**, նշվ. աշխ., էջ 53:

³ Տե՛ս **Հովսեփյան Յու.**, Սովետահայ պատմագրությունը Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործման մասին // Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր. 1920-1922 թթ., Երևան, 1987, էջ 35-38:

⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան 1967, էջ 127:

բաժանել ազգաբնակչությանը՝ նրան փրկելով սովամահ լինելուց»¹: Նրա տեսակետը չի համապատասխանում իրականությանը, քանի որ հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Հեղկոմի քաղաքականությունը ամենին ժողովրդին սովամահությունից փրկելու նպատակ չէր հետապնդում, այլ, ընդհակառակը, ավելի խորացրեց հայ ժողովրդի՝ առանց այն էլ ծանր վիճակը: Ս. Սահրադյանի կարծիքով՝ հեղկոմները բռնագրավում էին կուլակների ու սպեկուլյանտների հացի ու պարենամթերքի ավելցուկները²: Այս տեսակետը ևս չի համապատասխանում իրականությանը, քանզի բռնագրավումների մասին բազմաթիվ հրամաններ էին ընդունվել, այդ թվում՝ պետք է բռնագրավվեին և պետականացվեին գործարանները, եկեղեցու կալվածքները, հանքերը, անտառները, ջրերը և այլն³:

Խորհրդահայ պատմագրության մեջ շրջանառվում էր նաև այն տեսակետը, թե ՀՅԴ-ն, օգտվելով երկրում տիրող դժգոհությունից, որն առաջացել էր «ռազմական կոմունիզմի» քաղաքականության հետևանքով, 1921 թ. Փետրվարին խռովություն բարձրացնելով, փորձեց իշխանությունը վերցնել իր ձեռքը: Բոլշևիկներն անգամ բռնագրավումների քաղաքականությունն էին վերագրում դաշնակցականներին՝ նշելով, թե վերջիններս «ինքնագլուխ գործունեությամբ ի չիք են դարձնում խորհրդային իշխանությունը»⁴, ինչը չէր համապատասխանում իրականությանը, քանզի այդ բռնագրավումները իրականացվում էին Հայհեղկոմի հրամանների հիման վրա:

Միյուրքահայ պատմագրությունն այս հիմնահարցի վերաբերյալ բոլորովին այլ տեսակետներ է զարգացրել: Դաշնակցական հեղինակ Հ. Իրազեկը նշում է, որ այդ քաղաքականության իրականացման հենց առաջին օրերից սկսվեցին ու շուտով սովորական երևույթների շարքն անցան հաճախակի բռնագրավումները⁵: Նա փաստում է, որ բոլոր քաղաքներում ու գյուղերում ազգաբնակչության ունեցվածքի և հարստության նկատմամբ իրականացվում էր պետական թալան, ուստի «բռնագրավում» կոչված կառավարական այդ ձեռնարկը վերածվեց համատարած կողոպուտի և դարձավ իսկական աղետ ամբողջ երկրի համար⁶: Հեղինակի կարծիքով՝ բռնագրավումները պարբերաբար ու համատարած էին և իրականացվում էին վայրագ ձևով. «Ոչ ոք վստահ չէր, որ իր ունեցած մի կտոր հացը, մի պարկ ալիւրը, բրինձը, մի սենեակը, մի կովը, հորթը, վաղը չեն գայ ու խլի իրենից «յանուն օրէնքի»:

¹ **Հովսեփյան Յու.**, 1921 թ. փետրվարյան խռովության առաջացման պատճառների նենգափոխումը հայ բուրժուական պատմագիտության մեջ // «Լրաբեր հասարակական գիտություններին», 1987, թիվ 4, էջ 52:

² Տե՛ս **Սահրադյան Ս.**, նշվ. աշխ., էջ 87:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1253, ց. 1, գ. 4, թ. 1-3, 9:

⁴ «Կոմունիստ», 1921, 12 փետրվարի:

⁵ Տե՛ս **Իրազեկ Յ.**, Փետրուար 18, Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան (1890-1950), Բոստոն, 1950, էջ 307:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 308:

Կ. Սասունին մանրամասն ներկայացնում է բոլշևիկների իրականացրած թալանը և բռնագրավումները¹: Նրանց դաժանությունների մասին նա հետևյալն է գրում. «Գիւղական աշխատավորութեան եւ քաղաքի օրավարձով ապրող բանուորների նուագագոյն ապրուստը անասելի բռնութիւններով բոլշևիկները գրաման ենթարկեցին եւ այդ գործողութիւնների անունը դրին «բուրժուազիային սեփականագրկել իր ունեցվածքից»²: Ս. Վրացյանը ևս, անդրադառնալով այս խնդրին, նշում է, որ բոլշևիկները բռնագրավում էին ամեն ինչ՝ բնակարան, հագուստ, ուտելիք, կառք, գրաստ, վառելիք, անգամ երաժշտական գործիք, լվացքի օճառ, թել-ասեղ³:

Սփյուռքահայ պատմագրոյթյան մեջ շրջանառվում էր այն տեսակետը, թէ իբր ժողովրդից խլված այս մթերքները ուղարկում էին Ռուսաստան: Օրինակ՝ Կ. Սասունին գրում է. «Հայաստանում եղած պետական խղճուկ պահեստները հետզհետէ դատարկուեցին եւ գիշերանց, բեռնատար կառքերով փոխադրուեցին Ղազախի վրայով դէպի Ադրբեյջան եւ Ռուսաստան»⁴: Ս. Վրացյանը ևս փաստում է, որ պետական պահեստներից և ժողովրդից բռնագրավված պաշարը Հայաստանից բեռնակիր ինքնաշարժերով նվեր էր ուղարկվում Ռուսաստան՝ «ընկեր Լենինին» կամ «կարմիր բանակին»⁵: Նա իր հուշերում գրում է բռնագրավումների զանազանութեան մասին, հիշատակում «Պարենի շաբաթի» կամ «Թալշաբաթի» մասին, ըստ որի՝ Հայաստանում ևս պետք է պետական դառնար ազգաբնակչութեան մասնավոր ունեցվածքը: Որոշված էր առաջին հերթին խլել պարենը, ապա՝ սպիտակեղենը, այնուհետև՝ ոսկին, արծաթը և այդպէս մինչև վերջ⁶: Հեղինակը նշում է, որ բոլշևիկներն այնքան էին ոգևորվել «Թալշաբաթի» հաջողություններով, որ սկսեցին ակտիվորեն պատրաստվել «Սպիտակեղենի շաբաթին», որին պիտի հաջորդէր «Ոսկու շաբաթը»⁷:

Բոլշևիկյան բռնագրավումներին իր հուշերում անդրադարձել է նաև Ա. Սևանը՝ դրանք անվանելով «չտեսնած, չլսած բռնութիւն»: Նա նշում է, որ հալածանքները միայն հարուստների դէմ չէին, այլ անխտիր բոլորի, անգամ ամենահետին ջրավորից էին խլում չարքաշ աշխատանքի գնով ձեռք բերված հացահատիկի և մթերքի պաշարները⁸: Հ. Քաջագունին Հեղկումի այս քաղա-

¹ Տե՛ս **Սասունի Կ.**, Փետրուարեան ապստամբութիւնը // «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, էջ 98-100:

² Նույն տեղում, էջ 100:

³ Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 546, *նույնի՛* Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պէրյուք, 1953, էջ 144:

⁴ **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 99:

⁵ Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 144:

⁶ Տե՛ս **Վրացյան Ս.**, Յուշեր մօտիկ անցեալից // «Հայրենիք», 1924, մարտ, էջ 111:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 113:

⁸ Տե՛ս **Սևան Ա.**, Փետրուարի 18-ի յեղափոխութիւնը // «Վեմ», 1936, թիվ 1, յունարփետրուար, էջ 93:

քականությունը անվանում է «սանձարձակ ու վայրագ բռնություն»: Բոլշևիկյան բռնությունները նա իրավացիորեն համարում է անիմաստ, ավելորդ ու աննպատակ¹: Անշուշտ, դաշնակցական պատմագրությունը, ներկայացնելով բոլշևիկների բռնագրավումները, փորձում է ցույց տալ, որ հենց այս թալանը դարձավ փետրվարյան ապստամբության հիմնական պատճառը:

Հարկ է նշել, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը քննադատել են նաև սփյուռքի ոչ դաշնակցական հեղինակները, թեև ոմանք դա արդարացնում էին: Օրինակ, սփյուռքահայ հեղինակ, նախկին դաշնակցական Ա. Ղազարյանը գտնում է, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը ոչ միայն աննպատակ և վնասակար չէր, այլև մարտավարական տեսակետից անհրաժեշտություն էր, որի նպատակն էր ամրապնդել հեղափոխությունը²: Մեկ այլ հեղինակ՝ Ս. Բաղդասարյանը, նույնպես իրավացիորեն նկատում է, որ փետրվարյան ապստամբությունը Հեղկոմի սխալ քաղաքականության արդյունք էր: Նրա համոզմամբ՝ Հայհեղկոմը հաշվի չառավ Հայաստանի առանձնահատկությունները և նման գործելակերպով ժողովրդին կանգնեցրեց փետրվարյան ապստամբության առջև³:

«Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն իրավացիորեն քննադատվել է նաև հետխորհրդահայ պատմագրության մեջ: Վլ. Ղազախեցյանը իր հոդվածներից մեկում նշում է, որ Խորհրդային Հայաստանի ղեկավարներն ամեն ինչում հետևում էին Խորհրդային Ռուսաստանի փորձին, ուստի բացառություն չէր նաև «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանում արդեն մտածում էին դրանից հրաժարվելու և նոր քաղաքականություն մշակելու մասին⁴: Նա նշում է, որ թե՛ Ռուսաստանում և թե՛ Հայաստանում այդ քաղաքականությունը ոչ միայն իրեն չարդարացրեց, այլև առաջ բերեց ժողովրդական լայն զանգվածների դժգոհությունը և ապստամբական ելույթներ⁵:

Ա. Հակոբյանի կարծիքով՝ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն ավելի սրեց պարենային ճգնաժամը և խորացրեց տնտեսության քայքայումը: Նա տեղին է նկատել, որ «ռազմական կոմունիզմի» կիրառումը Հայաստանում ավելի շատ վնաս է տվել, քան օգուտ: Հեղինակի համոզմամբ՝ այդ քաղաքականությունը քաղցի, թշվառության և ավերակ երկիր Հայաստանում ավելի վարկաբեկեց ու խարխլեց սոցիալիզմի գաղափարը և խորհրդային

¹ Տե՛ս **Քաջազունի Հ.**, Շ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 46:

² Տե՛ս **Ղազարեան Ա.**, Ազատութեան ուղին եւ հայի քաղաքական վարքագիծը, Թեհրան, 1924, էջ 29-30:

³ Տե՛ս **Բաղդասարյան Ս.**, Խորհրդային Հայաստան, պրակ առաջին, Թեհրան, 1927, էջ 13:

⁴ Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2011, թիվ 1, էջ 48:

⁵ Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 30:

իշխանության հիմքերը¹: Հետխորհրդահայ մեկ այլ պատմաբան՝ Խ. Ստեփանյանը, «ռազմական կոմունիզմի» քաղաքականության գործադրումը տնտեսապես քայքայված Հայաստանում համարում է անմտություն²:

Վերջում նշենք, որ տողերիս հեղինակը կհսում է այն պատմաբանների տեսակետը, որ Հայհեղկոմի կիրառած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն ավելի խորացրեց տնտեսության քայքայումը, սրեց հայ ժողովրդի առանց այն էլ ծանր վիճակը և դարձավ 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը:

Արա Ազատյան – Оценка политики «Военного коммунизма» в армянской историографии

Сразу после советизации Армении пришедший к власти Ревком по примеру Советской России осуществил в Армении политику «военного коммунизма», что и вызвало глубокое недовольство среди армянского народа. В армянской историографии, особенно в историографии Советской Армении, довольно часто возвращались к вопросу политики «военного коммунизма». Но в существующей литературе так и не было сформировано единого мнения по этому вопросу. Политика, проводимая Ревкомом, была оценена по-разному в армянской историографии, и поэтому нашей целью было представить и проанализировать противоречивые взгляды на эту политику.

Ara Azatyan – Evaluation of the “Military Communism” Policy in Armenian Historiography

After the sovietization of Armenia the Revolutionary Committee which came to power implemented the “Military Communism” policy in Armenia following the example of Soviet Russia. The latter caused a deep dissatisfaction among the Armenian people. In Armenian historiography, especially in Soviet Armenian historiography the “Military Communism” policy was quite quoted. In spite of this fact there is no unanimous opinion on this issue in the existing literature. The policy of Revolutionary Committee has been rated differently in Armenian historiography. Hence, our aim was to present and analyze the contradictory views on this policy.

Ներկայացվել է 11.02.2019

Գրախոսվել է 21.02.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

¹ Տե՛ս **Հակոբյան Ա.**, ՀԽՍՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2014, էջ 194-195, *նույնի* «Ռազմական կոմունիզմ»-ից Նեպին անցման հարցերի լուսաբանումը հայ պատմագրության մեջ // «Հայկազեան հայագիտական հանդես», 2013, էջ 108:

² Տե՛ս **Ստեփանյան Խ.**, Խորհրդային Հայաստանում կիրառված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.) // «ԼՀԳ», 2015, թիվ 2, էջ 145:

Վահան Թեքեյան. ազնվական քերթողը, կազմող, նախաբանի և հող-վածների հեղինակ՝ Արծրուն Ավագյան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 215 էջ

Միանգամայն համոզիչ ու աներկբայելի են ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արծրուն Ավագյանի խոսքերը. «Նա՝ հոգին խռովյալ ու դեմքը միշտ տխուր մարդը, հայ գրականության հավերժական ուղեկից Վահան Թեքեյանը, ում կյանքն ու գործը, թերևս, կարելի է բնութագրել հետևյալ բառերով՝ պայքար, անկում և սլացում: Ո՛չ կյանք, ո՛չ սեր, ո՛չ երջանկություն. այդ հենց նրա համար էր ասված: Եվ, այնուամենայնիվ, Թեքեյանը երջանիկ եղավ, երջանիկ, որ բանաստեղծ էր, ավելի ճիշտ՝ նա բանաստեղծ էր և հենց դրա համար երջանիկ եղավ» (էջ 59):

Հայ մշակույթի այս հսկան եղավ և մնաց հայոց պետականության ստեղծման ու պահպանման ամենամեծ ջատագովներից մեկը: Վկան՝ նրա ամբողջ կյանքն ու ստեղծագործությունը, ինչպես նաև խոստովանությունը.

«Դժոխք մեր կյանքը ըրինք՝ որ դուն դրախտ մը ըլլաս

Ով հայրենիք, անդունդին և երկնքին մեջ առկախ» (էջ 45):

Ա. Ավագյանի ուսումնասիրությունը մի շարք կողմերով նոր է ու շահեկանորեն տարբեր մինչ այժմ մեզ ծանոթ նմանատիպ աշխատանքներից: Նկատի ունեմ ամենից առաջ կառուցվածքը: Նա ընտրել է միանգամայն նոր, ըստ իս՝ առավել արդյունավետ և ազդեցիկ ճանապարհ՝ գիտականորեն բացահայտել ու հիմնավորել Թեքեյանի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող յուրաքանչյուր փաստ՝ դրանք դիտելով իրենց մասնավոր դրսևորման և ազգային-հասարակական ու գրական-մշակութային համապատկերի մեջ:

Ա. Ավագյանը «Նախաբանի փոխաբեն» բաժնում նախ հիմնավորում է գրքի անհրաժեշտության գաղափարը այն անվիճարկելի փաստարկմամբ, ըստ որի՝ «Թեքեյանի մահվանից հետո թե՛ սփյուռքում և թե՛ մայր հայրենիքում տարբեր տարիներին տպագրվել են նրա մի շարք ժողովածուներ, ինչպես անտիպ, այնպես էլ տպագրված գործերից կազմվել գրքեր, որոնց մեջ հատկապես առանձնանում են «Գահիրեի Թեքեյան ֆոնտի յանձնախմբի» հրատարակած «Ամբողջական երկերի» վեցհատորյակը (նախատեսվում էր տասնհինգ հատոր): Վերջին տարիներին Ստամբուլում տպագրվեցին Թեքեյանի «Կեսարիա» (2016 թ.) և «Երկու դրախտները. ցանուցիր էջեր» (2017

թ.) վերնագրերով գրքերը: Այդուհանդերձ, եթե բացառենք 2012 թ. Երվանդ Ազատյանի կազմած «Վահան Թեքեան. Բանաստեղծություններու հատընտիր» ժողովածուն, վերջին տասնամյակներում ոչ միայն Թեքեյանի արձակից, այլև պոեզիայից որևէ գիրք չի տպագրվել մայր հայրենիքում» (էջ 10-11): Այս ծավալուն մեջբերումը ոչ միայն փաստում է, որ «ներկայացվող հատընտիրը սիրո ու գնահատանքի մի տուրք է մեծ բանաստեղծի ապրած կյանքին ու կատարած գործին՝ նրա ծննդյան 140-ամյակի առիթով» (էջ 11), այլև վկայում, որ վաղուց ժամանակն է նորովի և նոր ձևաչափով ներկայացնել հայ ընթերցողին «վսեմափայլ մարդուն ու ազնվական քերթողին» (էջ 12), ինչը, անտարակույս, հաջողվել է հմուտ գրականագետին:

Գրքին կցված ծավալուն հետազոտությունը, որ հեղինակը համեստորեն համարում է «Երեք հոդված», ուղղորդում է ընթերցողին ճշմարիտ, Վ. Թեքեյանին արժանի գեղագիտական մոտեցում դրսևորելու՝ նրա գեղարվեստին առնչվելիս: Ուզում եմ ասել, որ «Նախաբանի փոխարեն» հատվածում համառոտ, բայց սպառիչ ներկայացնելով Վ. Թեքեյանի ժառանգության՝ մինչ այժմ հրատարակման պատմությունը և փաստելով նոր հատընտիրի անհրաժեշտությունը՝ կազմողը նույնքան սպառիչ ու բազմակողմանիորեն բացահայտում է գրողի ստեղծագործության՝ նրա կյանքի վրա վճռական ազդեցություն ունեցած քիչ ծանոթ կամ գրեթե անծանոթ մի շարք դրվագներ ու մեկնաբանում դրանք:

Ա. Ավագյանը ընթերցողին համոզում է նաև այն անվիճարկելի ճշմարտությամբ, «որ մեծերը անսպառ են և միշտ էլ հնարավորություն են ընձեռում ուսումնասիրողներին՝ լրացումներ ու ընդլայնումներ կատարելու իրենց գործերի վերաբերյալ: Թեքեյանի պարագայում կա և այն իրողությունը, որ նրա կյանքն ու ստեղծագործությունները անչափ բազմաշերտ են, տարողունակ, անգամ՝ անընդգրկելի» (էջ 14): Այս փաստարկմամբ հասկանալի է դառնում և հիմնավորված «Կյանքի ուղիներում» ուսումնասիրության գետեղումը գրքի սկզբում: Թեքեյանի կյանքը ներկայացնելիս գրականագետը չի բավարարվել արդեն հայտնի ձևաչափի կանոնիկայով: Նրան ավելի շատ հետաքրքրել են գրողի՝ իբրև մարդու, հասարակական գործչի և գեղագետի ներաշխարհի բացահայտումները մի կողմից, մյուս կողմից՝ գրողի և միջավայրի մարդկանց միջև ձևավորված փոխհարաբերությունները՝ հակադրությունների և համադրությունների իրենց ամբողջ ծավալով:

Այս նպատակադրմամբ լիովին հասկանալի է դառնում այն մոտեցումը, որով Ա. Ավագյանը ներկայացնում է գրողի կյանքը, այն բաժանում երկու մեծ շրջափուլերի՝ «Պոլսից Պոլիս՝ 1878-1922» և «Կահիրեից Կահիրե՝ 1922-1945», որը լիովին արդարացված է: Հասկանալի են դառնում այն բեկումնային հանգուցակետերը, որոնք վճռական ազդեցություն են ունեցել գրողի ձևավորման գործում: Եվ, իսկապես, գլխապտույտ է առաջացնում Թեքեյանի թափառական կյանքի կարճ հանգրվանների պարզ ու ոչ ամբողջական թվարկումն անգամ՝ Պոլիս, Իզմիր, Լիվերպուլ, Մարսել, Կահիրե, Համբուրգ, Ալեքսանդ-

րիա, Թիֆլիս, Երևան, Էջմիածին, Երուսաղեմ, Նիկոզիա: Խոստովանենք՝ հեշտ գործ չէ այս անվերջանալի թվացող ցանկում գտնել և առանձնացնել այն հիմնական միջավայրերը, որոնք շրջադարձային են եղել գրողի կյանքում թե՛ ընկերային և թե՛ մանավանդ հոգեբանական առումներով:

Որդեգրած այս սկզբունքը Ա. Ավագյանին ոչ միայն հնարավորություն է ընձեռել ամբողջական և սպառիչ ներկայացնել Թեքեյան-երևույթի ձևավորման և կայացման ընթացքը, այլև արժևորել այն և ամրակայել այն տեղն ու դերը, որ իրավամբ պատկանում է նրան հայ գրականության անդաստանում: Ա. Ավագյանի հետազոտության կարևոր բաժիններից մեկը «Հայրենի եզերքի հայտնաբերման ուղիներում» հոդվածն է՝ նվիրված Թեքեյանի «Կեսարիա» օրագրությանը: Նա վստահ է, որ «Թեքեյանի «Կեսարիան» գեղարվեստական առումով չի գերազանցում գրողի մյուս արձակ գործերը», բայց նաև համոզված է, որ «հարյուր էջից մի փոքր ավելի այս գործում ականատեսի հավաստի վկայություններ են ներկայացվում ժամանակաշրջանի կեսարահայության կյանքի ճանաչողության առումով, որոշակի բացահայտումներ գրողի կենսագրության մանրամասներ և, շնորհիվ հեղինակի գրավիչ լեզվի, պատկերվող դեպքերի ու երևույթների ուշագրավության՝ այն կարդացվում է հետաքրքրությամբ» (էջ 63): Այս առումով համաձայն չեմ Ա. Ավագյանի այն պնդման հետ, թե Թեքեյանի «Կեսարիան» «բնականաբար հեռու է հայ դասական հուշագրության Եր. Օտյանի «Տասներկու տարի Պոլսեն դուրս», Կ. Չարյանի «Անցորդը եւ իր ճամբան», Վ. Շուշանյանի ու այլ հեղինակների ստեղծած համանման գրական արժեքներից» (էջ 63): Ավելին, համոզված եմ, որ Թեքեյանի այս գործը ամբողջականացնում է հայ օրագրական-հուշագրական գրականությունը, քանի որ հենց իր՝ Ա. Ավագյանի իրավացի գնահատանքով «Թեքեյանի այս գործը ամենից առաջ մի **վկայություն է**: Վկայություն հայության կյանքի բարդ մի շրջանի ու այն մարդկանց մասին, ովքեր եղեռնի հետևանքով այլևս անցյալ էին դարձել: ...Եվ հենց սա է, որ բարձրացնում է նրա արժեքը ու կարևոր է դարձնում մեզ համար ևս» (էջ 74):

Ես կարծում եմ, թե Ա. Ավագյանի հետազոտության առավել նորարարական հատվածը թե՛ քննաբանության և թե՛ Թեքեյան-մարդու բացահայտման նշանակությամբ «Վահան Թեքեյան – Լևոն Չավեն Սյուրմեյան. սերտ բարեկամություն և անդարձ բաժանում» հատվածն է, որը բացահայտում է Թեքեյանի՝ իբրև անխարդախ մարդու և նվիրյալի կերպարը մի կողմից՝ միաժամանակ ներկայացնելով նրա՝ արդեն «կես մը մանուկի և կես մը ծերի վիճակով» ապրող մարդու անհատնում թախծության պատճառներից ևս մեկը՝ հարազատ մարդուն կորցնելու դառնությունը: Մյուս կողմից՝ լույս է սփռում Թեքեյան-Սյուրմեյան՝ միշտ մշուշոտ և կեսբերան մեկնաբանված հարաբերությունների վրա, որոնք իրենց պարզության մեջ այնքան զարմանալիորեն շքեղ ու մարդկայնորեն ողբերգական են եղել, որ տեղիք են տվել նաև տգեղ ու գաղջ

բամբասանքների, ի մասնավորի՝ ոչ գրական կամ մերձգրական մարդկանց շրջանակներում:

Սյուրմեյանը մեր սփյուռքահայ գրականության վերջին և ազդեցիկ դասականներից է: Դասականը մեծություն է, բայց այլևս գաղտնիք չէ, որ նա առնվազն երախտագետ չգտնվեց Թեքեյանի հանդեպ, որը նրանց նամակագրության մեջ առկա բազմաթիվ վկայագրություններով փաստում է Ա. Ավագյանը: Հայտնի է, որ նրանց առաջին հանդիպումը տեղի է ունեցել 1919 թ., երբ Սյուրմեյանն ընդամենը 16 տարեկան էր, իսկ Թեքեյանն արդեն ծանրակշիռ ճանապարհ անցած, կյանքի դառնությունները ճաշակած, ընտանիք և զավակ չունեցող, բայց ունենալու անհագուրդ ցանկությունը սրտում ամբարած 43-ամյա տղամարդ: Տասներեք տարեկանում Եդեռնի գեհեռում ծնողներին կորցրած Սյուրմեյանը ևս ամբողջ խորքով ճաշակել էր որբության դառնությունը, և նրա մեջ առկա գրական հետաքրքրություններում որոշիչ էր նաև նրան վիճակված տխուր մանկության դերը: Դժվար է չհամաձայնել Ա. Ավագյանի հետ, թե՛ «այդ տխուր մանկությունը «ոչ այլևս» վերստին ապրելու բաղձանքը Սյուրմեյանի առաջին բանաստեղծություններում արտահայտվում է որպես վիճակ ու մտածում, իսկ Թեքեյանի պոեզիայում՝ որպես ընդհանրացնող ասելիք ու բողոք» (էջ 79): Հայտնի է նաև, որ Սյուրմեյանը իրեն բանաստեղծ չի համարել, չնայած «իրականում Սյուրմեյանը իրոք օժտված էր բանաստեղծական շնորհով, բանաստեղծ էր իր էությամբ ու տաղանդով, բայց բանաստեղծ չէր իր նախասիրություններով ու նպատակներով» (էջ 81): Թեքեյանի և Սյուրմեյանի շփումները կարճ տևեցին: 1922 թ. օգոստոսից Սյուրմեյանն արդեն Ամերիկայում էր՝ երկրագործի մասնագիտություն ստանալու և Հայաստանին ծառայելու իր նպատակների համար, բայց «գուտ ուժի եւ տգեղ ուժի երկաթե ու քարե զանգուած» այդ երկրում (Սյուրմեյանի բնութագիրն է) նա աստիճանաբար կորցնում է և՛ սրտի ջերմությունը, և՛ երախտագիտությունը, և՛ անգամ լեզուն: Հետևաբար, զարմանալի չի թվում, որ անտարբեր է դառնում նաև Թեքեյանի հանդեպ: Մինչդեռ Թեքեյանը Սյուրմեյանի համար դեռ նրա՝ Ամերիկա մեկնումի առաջին ամիսներին էր բացահայտել իր համակրանքի և սիրո դրդապատճառները, թե ցանկալի է՝ «օգտակար ըլլալ քեզի, քու մանկութիւնդ պաշտպանել, քու որբութիւնդ մեղմել, քու զրկանքդ ամոքել» (էջ 83): Ընդամենը սա է եղել այն ջերմության և նվիրումի ակունքը, որով Թեքեյանը վերաբերվել է Սյուրմեյանին իր կյանքի ամբողջ ընթացքում, երբ արդեն դադարել էր նրանց միջև ամեն տեսակի շփում, անգամ նամակագրություն: Այս հարաբերություններում Թեքեյանը այնքան բուռն է եղել ու ջերմ, որ շատերը նրա և Սյուրմեյանի միջև նկատել են անգամ արտաքին նմանություններ, այնքան, որ նույնիսկ արյունակից հայր և որդի են համարել, մանավանդ որ Սյուրմեյանն իր նամակները մակագրում էր «Հորս՝ Վահան Թեքեյանին» վերտառությամբ: Թեքեյանն ինքն է խոստովանում, որ Սյուրմեյանի արտաբերած «զավակդ» բառով «կարօտով տուայտեր եւ օրօրուել եմ միշտ, գիտնալով, որ

գրկաբաց կրնդունուիս՝ այն պատճառաւ, որ **չափազանց կը նմանիս սրտով, մտքով** ու կը խորհիմ հիմա – **կերպարանքով ա՛լ անո՛ր, իմ երազիս զաւակին»** (էջ 84):

Սյուրմեյան-Թեքեյան հարաբերություններին կամ դրանց ընդհատման պատճառներին ամենայն մանրամասնությամբ և սպառիչ մեկնաբանություններով անդրադարձել է Ա. Ավագյանը: Նշեմ միայն, որ նա շեշտում է, թե չի «կամեցել հետին թվով, տարիների հեռավորությունից ստանձնել դատավորի դեր և արդարացնել կամ մեղադրել ներկայացված կողմերից որևէ մեկին» (էջ 108): Համաձայնենք՝ դատավոր լինել հարկավոր չէ, բայց մի թե ավելորդ է հասկանալ պատճառներն ու, ինչո՞ւ ոչ, նաև բաժանման առթողին:

Պատճառները փորձել է վեր հանել Ա. Ավագյանը: Դրանցից մեկը նա համարում է Սյուրմեյանի ապրած դառը կյանքը և Ամերիկայում կրած գրկանքները, դրանցից ծնված սառնությունը, որ «կարող էր մղել ոչ միայն գրականության նկատմամբ աճող անտարբերության, ... այլև առհասարակ գրելու, այդ թվում նաև նամակներ գրելու ցանկության պակասի» (էջ 92): Սյուս պատճառը նա համարում է Խորհրդային Հայաստանում «քաղաքական ու ազգային սահմանափակումների» առկայությունը և նրանց՝ Հայաստան այցելելու անհնարինությունը, մանավանդ որ «Հայաստանը չէր կարող Թեքեյանի և մանավանդ Սյուրմեյանի իղեալը լինել» (էջ 92):

Երրորդ պատճառ կարող էր լինել Սյուրմեյանի ամերիկյան դաստիարակությունը, նրա «միստր»-ացումը, կամ, ասենք, Հայ կրթական հիմնադրամի կողմից կրթաթոշակի դադարեցումը: Այս և մյուս բոլոր փաստերը կարող էին պատճառ լինել: Բայց արդյոք Թեքեյանն ավելի լավ վիճակում է եղել թե՛ հոգեբանական և թե՛ մանավանդ սոցիալական առումով, քան Սյուրմեյանը: Հաստատ՝ ո՛չ (և սա այն դեպքում, որ Թեքեյանը չի զլացել դրամական օգնություն ցուցաբերել Սյուրմեյանին): Խնդիրը զուտ մարդկային նկարագրի մեջ է: Սյուրմեյանը խոստովանել է, որ Թեքեյանին իր գրած նոր բանաստեղծություններից է ուղարկել **«պարզապես զինք հաճոյացնելու համար»** (էջ 94): Կարծում եմ՝ Սյուրմեյանը դեռ չէր ըմբռնել Թեքեյանի մեծության չափը և մարդկային նկարագրով զիջում էր նրան: Դժվար ու դառն է խոստովանելը, բայց նաև փաստենք, որ սա է բուն իրականությունը: Այս դեպքում դժվար է չհամաձայնել Ա. Ավագյանի հետ, թե՛ «Թեքեյանին մնացին նաև Սյուրմեյանի հասցրած **բաժանման ցավն ու վիրավորանքը**: Սա է բուն ճշմարտությունը: Ճշմարտություն, որը շատ տխուր է» (էջ 107):

Ա. Ավագյանը գրքի «Հատընտիր» բաժնում ընդգրկել է Թեքեյանի վաթսուներեք բանաստեղծություն՝ առաջնորդվելով 1933 թ. նրա գրական գործունեության փարիզյան հանձնախմբի որդեգրած սկզբունքով: Այն ժամանակ հանձնախումբը գրքում ընդգրկել է 33 բանաստեղծություն՝ նկատի ունենալով տպագրության տարեթիվը: Ա. Ավագյանը նույնպես պատճառաբանում է իր նախընտրած թիվը. «Առաջարկվող գրքում մենք ընթերցողին ենք ներկայացնում նախորդից կրկնակի թվով ավելի բանաստեղծություններ (որոնց

ավելացնելով ևս մեկը՝ այն հավասարեցրել ենք Թեքեյանի ապրած տարիներին՝ 67), որոնք շատ ավելի ընդգրկուն են արտահայտում բանաստեղծական այն թևածումները, որոնք բնութագրական են Թեքեյան արվեստագետին ու մարդուն» (էջ 10): Ավելացնենք՝ տպագրված բանաստեղծությունները նաև տեսանելի են դարձնում Ա. Ավագյանի հետազոտական խոսքի հիմնավորվածությունը, այն առավել տպավորիչ դարձնում: Նա միանգամայն ճիշտ է վարվել, երբ գիրքն ամբողջացրել է «Բնութագիր և գնահատանք» բաժնով: Թեքեյանի ժամանակակիցների և հետնորդների կարծիք-բնութագրերը ոչ միայն լիարժեք պատկերացում են տալիս մեր մշակույթի պատմության մեջ նրա գրական ժառանգության տեղի և դերի մասին, այլև առավել ամբողջական են դարձնում մեզ առաջարկվող գիրքը, որ, հիրավի, արժեքավոր ներդրում է թեքեյանագիտության մեջ:

Ամփոփելով՝ նշեմ, որ ինչպես ամեն գործում, որ գրված է անկեղծ, «սրտի յուրաքանչյուր նյարդով», այստեղ ևս առկա են մի քանի անհաջող ձևակերպումներ: Այսպես, ինչպես նշում է Ա. Ավագյանը՝ «Միամանթոյի, Վարուժանի, Ռ. Սևակի և արևմտահայ այլ բանաստեղծների գործերը մայր հայրենիքում իրավացիորեն տպագրվել են արևմտահայերենով, մինչդեռ Թեքեյանինը՝ հաճախ արևելահայերենով» (էջ 12): Կարծում եմ, որ այստեղ նկատի է առնվում ոչ թե լեզվաճյուղը, այլ ուղղագրությունը: Կամ՝ «գրելու համար չունենալով տարրական պայմաններ՝ ապրելու հոգսը նրան շատ հաճախ է այլ աշխատանքների տարել» (էջ 44). միտքը խճողված է, և թվում է, թե «ապրելու հոգսն» է ենթական:

Բարեբախտաբար նման ձևակերպումները չափազանց քիչ են և չեն ստվերում գիրքը, որը, հիրավի, ճանաչողական մեծ արժեք ունի՝ լույս ընծայված ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում՝ մայր հայրենիքում: Այն արժանի տուրք է Ազնվական քերթողին:

ՄԵՐԺԻԿ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ

Ներկայացվել է 06.12.2018

Ընդունվել է տպագրության 21.02.2019

Գեղամ Պետրոսյան, Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար – 1918 թ. հունիս), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 265 էջ

Առաջին համաշխարհային պատերազմի եզրափակիչ փուլում հայությունը իր մեջ ուժ գտավ կերտելու իր նորոգ պետությունը՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը, որը հետագայում հիմք դարձավ ժամանակակից հայկական պետականության ստեղծման համար: Հետևաբար, բնավ պատահական չէ, որ անցած մեկ հարյուրամյակի ընթացքում Հայաստանի առաջին Հանրապետության բազմաբովանդակ ու տարողունակ պատմությունը եղել է միմյանց հաջորդած սերունդների սևեռուն ուշադրության կենտրոնում և դեռևս կարիք ունի առանձին վիճահարույց խնդիրների ճշգրտումների և նոր մոտեցումների: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն բանով, որ տարբեր արխիվներում և պահոցներում դեռևս կան շրջանառության մեջ չընդգրկված փաստաթղթեր:

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանը հեղինակել է մի շարք ուշագրավ ու բարձրարժեք աշխատություններ՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքակա-նության և դիվանագիտության հիմնահարցերին: Այժմ նա հրատարակել է մի ուշագրավ ու արժեքավոր մենագրություն, որն ընդգրկում է պատմական այն իրադարձությունների խորը և անաչառ քննությունը, որոնք հանգեցրին Հայաստանի առաջին Հանրապետության ծնունդին:

Մենագրությունը բաղկացած է չորս ծավալուն գլուխներից: Հեղինակն օգտագործել է մեծ քանակությամբ արխիվային նորահայտ վավերագրեր և տպագիր սկզբնաղբյուրներ՝ փաստաթղթերի ժողովածուներ, ժամա-նակակիցների հուշագրություններ, մամուլի հրապարակումներ, ինչպես նաև հայերեն և օտարալեզու հարուստ գիտական գրականություն: Նա իր առջև խնդիր է դրել համապարփակ և նորովի ներկայացնել Հայաստանը ռազմական ու դիվանագիտական բանակցային գործընթացներում ներքաշելու և Հայաստանին անկախություն «շնորհելու» Օսմանյան կայսրության շարժառիթներն ու դրանցից բխող հարցերը: Կարծում ենք, որ նման մոտեցմամբ հիմնախնդրի քննարկումն ու վերհանումը ոչ միայն արդարացված են, այլև ունեն արդիական հնչեղություն:

Գ. Պետրոսյանին հաջողվել է համոզիչ փաստերով ցույց տալ, որ Ռուսաստանում 1917 թ. փետրվարյան հեղափոխության և հոկտեմբերյան բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով Կովկասը, մասնավորապես Անդրկով-

կաար, վերածվել էին ազգամիջյան հակամարտությունների խառնարանի, որտեղ հեղափոխության և համամարդկային իդեալների անվան տակ մղվում էր անզիջում ու թեժ ազգային պայքար: Ռուսաստանի կողմից լքված լինելու զգացումը միաժամանակ հարկադրում էր Անդրկովկասի ժողովուրդներին ինքնակազմակերպվել, ստեղծել սեփական պետա-կանություն երկրամասում տիրող ճգնաժամն ու քառսը հաղթահարելու համար: Հայոց ազգային ժողովը և ազգային խորհուրդը ևս կոչված էին լուծում տալու հայության առջև ծառայած բազում մարտահրավերներին:

Հանգամանորեն վերլուծելով Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական բարդ ու խճողված իրադրությունը, որը առաջ էր եկել գլխավոր-բապես ռուսաստանյան իրադարձությունների հետևանքով, հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ անդրկովկասյան երեք ժողովուրդ-ների՝ հայերի, վրացիների և ազերիների միջև, որոնց այդ ժամանակ անվա-նում էին կովկասյան թաթարներ, ծնունդ առած հակամարտությունների գլխավոր պատճառը ոչ թե ազգային, կրոնական կամ սոցիալական ներհակություններն էին, նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումները և հատկապես տարածքային խնդիրները: Նման մոտեցումը նպաստում է ճշմարտացի պատկերացում կազմելու կովկասյան իրողությունների վերա-բերյալ և ամենակարևորը խուսափել ազգայնական բնույթի խոտորումներից, որոնց հատկապես տուրք են տալիս մերօրյա ազերի ուսումնասիրողները:

Գ. Պետրոսյանը իրավամբ նշում է, որ Անդրկովկասում ստեղծված անորոշ և անկայուն իրավիճակն ավելի էր խորանում Օսմանյան կայսրու-թյան արտաքին ճնշման ու զավթողական քաղաքականության հետևանքով: Օգտվելով Արևմտյան Հայաստանից ռուսական բանակի դասալքումից և ռազմաճակատի քայքայումից՝ օսմանյան բանակը, խախտելով Էրզինջանի զինադադարը, սողոսկում էր դեպի Անդրկովկաս: Ընդ որում, նաև Վրաստանին առնչվող այդ վտանգը նրա համար մահվան ու կյանքի խնդիր չէր, քան-զի Վրաստանը, ըստ Լևոն Շանթի՝ զերծ էր մնացել երիտթուրքերի «մուլեզնոտ գազանություններից» և համատարած ոչնչացման քաղաքակա-նությունից: Իսկ ովկասյան թաթարները ոչ միայն ցանկություն չունեին կովելու օսման-ցիների դեմ, այլև անհամբեր ու անձկությամբ սպասում էին դավանակից ու ցեղակից թուրքական բանակի ժամանմանն Անդրկովկաս: Համոզիչ փաստե-րով ցույց է տրվում, որ թուրք-անդրկովկասյան պատերազ-մի հիմնական ծանրությունն ընկել էր հայկական ուժերի վրա, և ըստ էության օսմանյան կանոնավոր բանակի դեմ հայերը մնացել էին մեն-մենակ, հայրենի հողը պաշտպանելու համար ունենալով մի ընդարձակ ճակատ: Փաստորեն, թուրք-անդրկովկասյան հակամարտությունը վերած-վել էր թուրք-հայկա-կան պատերազմի:

Ճշմարտացիորեն ներկայացնելով Անդրկովկասում ծավալվող իրադար-ձությունները և դրանցում հարձակողական ռևանշիզմի ոգով առաջնորդվող օսմանցիների դերակատարությունը՝ հեղինակը կատարում է նրբին դիտար-

կում՝ նշելով, որ իրենց ռազմատենչ ու նվաճողական քաղաքականությունն իրագործելիս իթթիհատականները որդեգրել էին դիվանագիտական բանակցությունները ռազմական հաջողություններով ամրապնդելու մարտավարությունը:

Գ. Պետրոսյանը հանգամանորեն, նոր սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանում է Անդրկովկասյան սեյմի պատվիրակության բանակցությունները Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովում (1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին): Ընդ որում, նա մանրամասն քննական վերլուծության է ենթարկում խորհրդաժողովի ընթացքում առաջին անգամ թուրքական պատվիրակության առաջ քաշած «Անկախ Կովկասի» գաղափարը: Համա-կողմանիորեն բացահայտելով դրա ներքին դրդապատճառները, շարժա-ռիթմերն ու նպատակները՝ նա հանգում է այն ճշմարտացի եզրակացության, որ Թուրքիայի ակնհայտ նպատակն էր Անդրկովկասն անկախ հռչակելով այն վերջնականապես փաստացի և իրավականորեն կտրել Ռուսաստանից, զավթել այդ երկրամասը, այն ներառել իր ազդեցության ոլորտում և դրանով իսկ ապահովել թուրքական պետության անվտանգությունը Ստամբուլի կողմից «հավերժ թշնամի» հորջորջված Ռուսաստանից: Թուրքերը ձգտում էին Անդրկովկասն ընդմիջտ դուրս բերել Ռուսաստանի ազդեցության շրջանակներից, այն դարձնել բուֆեր ռուսական վտանգի դեմ, որպեսզի Թուրքիան երբեք իր հյուսիսային ախյանի հետ չունենար ընդհանուր սահման: Անկասկած, այդ մտահղացման մյուս կարևոր դրդապատճառը Հայկական հարցից մեկընդմիջտ ձերբազատվել էր, որն էնվերը բնութագրել էր որպես «Օսմանյան կայսրության գլխին կախված մղձավանջ» (էջ 223):

Ավելորդ չէ նշել, որ «Կովկասյան ընդհանուր տան» գաղափարը Անկարան վերստին առաջադրեց Խորհրդային Միության փլուզման ժամանակաշրջանում, երբ Թուրքիայի հանրապետության ղեկավարությունը մի պահ թվացել էր, թե Կովկասում ստեղծվել է մի հսկայական վակուում, որը լցնելու իրավունքը պատկանում էր Թուրքիային:

Հեղինակը լայն անդրադարձ է կատարում այն հարցին, թե ինչ ազդեցություն ունեցավ 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը Անդրկովկասի քաղաքական զարգացումների վրա: Համարելով այն աղետ հայ ժողովրդի համար՝ նա միաժամանակ նշում է, որ այն սկիզբ դարձավ Թուրքիայի՝ դեպի Արևելք ընդհանուր հարձակման համար: Այդ դաշնագրով, ինչպես նա նշում է, «Խորհրդային Ռուսաստանը, առանց Անդրկովկասի մասնակցության ու համաձայնության, Թուրքիային էր հանձնում ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, այլև Անդրկովկասի գրեթե կեսը» (էջ 112):

Գ. Պետրոսյանը ամենայն մանրամասնությամբ քննության է ենթարկում Բաթումում Թուրքիայի և անկախ Անդրկովկասյան հանրապետության, իսկ այնուհետև երեք անկախ հանրապետությունների ստեղծումից հետո նրանց ներկայացուցիչների դիվանագիտական բանակցությունները, ցույց է տալիս, որ օսմանյան պատվիրակությունը, տուրք տալով իր սանձարձակ ծավալա-

պաշտական նկրտումներին, Բաթումում ծանր պահանջներ է ներկայացրել Անդրկովկասին ընդհանրապես և Հայաստանին մասնավորապես: Ի դեպ, ընթերցողը կարող է տեղեկա-նալ Բաթումի բանակցությունների ընթացքին վերաբերվող մի շարք ուշա-գրավ ու գնահատելի նորոյթների:

Անդրադառնալով Հայաստանի անկախությունը հռչակելու խնդրին՝ Գ. Պետրոսյանը նշում է, որ այն բանից հետո, երբ, ապահովելով գերմա-նական հովանավորությունը, վրացիները հայտարարեցին իրենց անկախու-թյան մասին, իսկ կովկասյան թաթարները Թուրքիայի անվերապահ աջակ-ցու-թյամբ հռչակեցին «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետու-թյան» անկախությունը, որը հենց այդ ժամանակ թուրքերն անվանեցին «Ադրբեջան», հայ առաջնորդներին այլևս ոչինչ չէր մնում, քան դիմել միևնույն քայլին: 1918 թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարեց հայկական գավառների գերագույն և միակ իշխանու-թյուն, որով հիմք դրվեց հայոց ազգային անկախ պետականությանը:

Անկախության հռչակման կապակցությամբ հեղինակը կատարում է մի խիստ կարևոր դիտարկում, այն է՝ մինչև 1919 թ. առաջին ամիսները Երևա-նում «նպատակահարմար չգտան պաշտոնապես Հայաստանը անկախ ճա-նաչել» (էջ 196-197): Պարզաբանելով դրա դրդապատճառները՝ նա նկատում է. «Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի ձգձգումը պայմանավորված էր երկրում ստեղծված ներքին և արտաքին քաղաքական բարդ դրությամբ: Բանն այն է, որ հուսալքության ու անելանե-լիության զգացումով էր համակվել նաև հանրապետության ղեկավարու-թյունը: Դեռ որոշված չէին Հայաստանի սահմանները» (էջ 197): Նա առաջա-դրում է այն գաղափարը, որ նախ Հայաստանի Հանրապետու-թյան ճակա-տագիրը շատ հաճախ կախված է եղել արտաքին գործոններից, իսկ այնու-հետև, ինչն ամենակարևորն է, Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարա-քիլիսայի 1918 թ. մայիսյան հերոսամարտերը կարևորագույն կովան են դար-ձել թուրքերի զիջումների հարցում:

Չարկ է նշել, որ Բաթումում 1918 թ. հունիսի 4-ին կնքված հայ-թուրքա-կան պայմանագրով Թուրքիայի կողմից հայոց անկախ պետության ճանա-չումը թուրք պատմաբանները և քաղաքական գործիչները մեկնաբա-նում են որպես հայ ժողովրդի նկատմամբ թուրքական պետության բարեկա-մական վերաբերմունքի շեշտված ժեստ, թուրք-հայկական հաշտեցման ուղղու-թյամբ կարևորագույն քայլ և այլն: Ավելին, խնդիրը ներկայացվում է այնպես, որ իբր հայոց պետականությունը ստեղծել է Թուրքիան: Անդրա-դառնալով Թուրքիայի կողմից հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթներին՝ Գ. Պետրոսյանը իրավացիորեն գտնում է, որ նախ «Սար-դարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսկան ճակատամար-տերը ազդել են Բաթումի դիվանագիտական բանակցությունների ընթացքի վրա, և օսմա-նյան կառավարությունը հարկադրված էր տարածքային և սահմանային որոշ «զիջումներ» կատարել: Իսկ ամենակարևորը տվյալ պահին անկախ

հայկական պետության ստեղծումը բխում էր թուրքերի շահերից, ի վնաս հայ ժողովրդի... Հայաստանի ստեղծումով Թուրքիան ուզում էր մոռացության տալ Արևմտյան Հայաստանի խնդիրը» (էջ 222): Ջարգացնելով այս տեսակետը՝ նա գրում է, որ թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսամարտերը «պարտադրեցին Օսմանյան կայսրությանը համաձայնվել ճանաչելու հայկական պետության գոյությունը», որ «հայոց անկախ պետության ընդունումը և ճանաչումը ոչ թե Օսմանյան Թուրքիայի «գթասրտության» դրսևորումն էր հայերի նկատմամբ, այլ ընդամենը պայմանավորված էր նրա շահերից բխող բազմազան ու բազմա-բնույթ շարժառիթներով և հետահար նպատակներով» (էջ 223-225):

Գ. Պետրոսյանի մենագրությունը թե՛ գիտական և թե՛ գործնական առումներով անկասկած ունի արդիական հնչեղություն, շարադրված է գիտական և տեսական պատշաճ մակարդակով: Թեման պատմաքննական վերլուծության ենթարկելիս նա բնավ տուրք չի տալիս ազգային նեղմտության սինդրոմին, հավուր պատշաճի գնահատում է իր նախորդների կատարած աշխատանքը սույն թեմայի ուսումնաիրության ասպարեզում: Ի դեպ, անդրադառնալով Հայաստանի առաջին Հանրապետության գործիչների պետականակերտ և հայրենանվեր գործունեությանը, նա միաժամանակ չի խորշում ներկայացնել նրանց սխալներն ու վրիպումները:

Հայաստանի առաջին Հանրապետությանը վերաբերող հարցերը Գ. Պետրոսյանը քննարկում է տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների, անհաշտ և սուր հակասությունների, ռազմաքաղաքական ու տնտեսական շահերի բախման պայմանների համատեքստում, ինչպես նաև միջազգային հարաբերությունների հարթության վրա: Անկասկած, սույն մենագրությունը պատմագիտական անվիճելի նորույթ պարունակող և հարցադրումների թարմությամբ ու համոզիչ փաստարկումներով աչքի ընկնող ուսումնասիրություն է: Կարծում ենք, որ այն արձանագրում է լուրջ առաջընթաց Հայաստանի առաջին Հանրապետության բարդ ու խճողված հարցերի, բայց և հմայիչ ու հիշարժան պատմության պարզաբանման ասպարեզում: Համոզված ենք, որ հեղինակի երկար տարիների անխոնջ ու տքնաջան աշխատանքի արգասիքը հանդիսացող այս մենագրությունը իր արժանի տեղը կգրավի հայրենական պատմագիտության մեջ:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐՅԱՆ

Ներկայացվել է 26.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

Д. Е. Еремеев, История Турецкой Республики с 1918 года до наших дней, Москва, «Квадрига», 2017, 376 с.

Ճ. Ե. Երեմևն, Թուրքիայի Հանրապետության պատմությունը 1918 թ. սինչև սեր օրերը, Սուկիշ, «Շիպորիզա», 2017, 376 էջ

Последнее столетие турецкой истории – кемалистское движение, установление республиканского строя на руинах Османской империи и дальнейшее общественно-политическое развитие страны – неоднократно становилось предметом исследования советских и российских тюркологов¹. Эти книги во многом способствовали ознакомлению русскоязычного читателя с Турцией и изучению самых различных аспектов турецкой жизни. Дополнить ряд исследований об истории Турции этого периода призвана рецензируемая нами монография одного из корифеев советской и российской тюркологии Д. Е. Еремеева, которая, как и предыдущие его работы, написана в легком, научно-популярном стиле. Автор делает акцент на изложении исторических фактов, не отводя много места анализу и оценке событий. Список использованной литературы включает монографии, статьи и источники на русском и турецком языках, большинство которых опубликовано до 2000 года. Поэтому неудивительно, что современному периоду в книге отведено не так много места. И, наоборот, большая половина книги посвящена кемалистскому движению, реформам первых двух десятилетий существования республики и единоличному правлению Народно-Республиканской партии². Немаловажны и интересные факты из жизни таких государственных деятелей, как Бекир Сами Кундух (1867-1933), Рефет-паша (1877-1963), Хусейн Рауф (1881-1964) и др., которых Д. Е. Еремеев представляет на протяжении всей книги (с. 71, 90 и т. д.).

Как и следует из названия, повествование начинается с военного поражения Османской империи в Первой мировой войне. Автор также проводит краткий экскурс в положение страны в период до и во время войны, представляет основные особенности и подробности политики младотурков, без которых невозможно понять логику дальнейшего развития событий в стране.

